

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ ՎԱՐԴԳԵՍԻ

ՀՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻԳ. 00. 02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային
հարաբերություններ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
Պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Արամ Հրաչիկի Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ-2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.....	15
1.1. «Տեղեկատվական անվտանգություն» հասկացության սահմանման հիմնախնդիրները և էվոլյուցիան	15
1.2. Տեղեկատվական սպառնալիքների առաջացման առանձնահատկություններն ու դրսևորումները համաշխարհայնացման համատեքստում.....	29
1.3. Թվային դիվանագիտությունը տեղեկատվական անվտանգության քաղաքականության համատեքստում	43
ԳԼՈՒԽ 2. ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	56
2.1. Տեղեկատվական անվտանգության ապահովման ԱՄՆ փորձի, հայեցակարգային մոտեցումների և կարգավորման մեխանիզմների կիրառման նշանակությունը ՀՀ-ում.....	56
2.2. Տեղեկատվական անվտանգության ապահովման ՌԴ փորձի նշանակությունը ՀՀ-ում ..	71
2.3. Տեղեկատվական անվտանգության ապահովման մեխանիզմների ՉԺՀ փորձի կիրառական նշանակությունը ՀՀ-ում	84
ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ	98
3.1. ՀՀ տեղեկատվական անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքները.....	98
3.2. ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության հիմնական ուղղությունները և կատարելագործման հեռանկարները.....	116
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	133
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	139

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի երկրորդ կեսին տեղեկատվության ծավալն ու նշանակությունն ակնհայտորեն աճեցին: Տեղեկատվությունը սկսեց մեծ դեր խաղալ մարդկային կենսագործունեության բոլոր բնագավառներում: Այժմ արդեն պետության հզորության ավանդական ցուցիչների հետ մեկտեղ, ինչպիսիք են տարածքը, բնական ռեսուրսները, մարդկային կապիտալը, տնտեսության զարգացման մակարդակը, գիտական ներուժը, զինված ուժերի մարտունակությունը և այլն, գլոբալացումն առաջին պլան է մղում ուժի նոր գործոններ, բացառիկ դեր է հատկացվում տեղեկատվությանը, հաղորդակցությանը և տեղեկատվական տեխնոլոգիաներին: Ավելին, հասարակական կարծիքի ձևավորումն այսօր տեղի է ունենում տեղեկատվական ռեսուրսների միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են տվյալների բազա, տեղեկատվություն ու տեղեկատվական հոսքեր պարունակող ենթակառուցվածք:

Գլոբալացման արդյունքում ձևավորված համաշխարհային նոր քաղաքական համակարգի առաջնային դիրքերում ոչ թե ռազմական կամ տնտեսական ներուժ ունեցող երկրներն են, այլ նրանք, որոնք կարողանում են տնտեսական ներուժն օգտագործել սեփական ազդեցության գոտիների ընդլայնման և դրա անքակտելի բաղադրիչը հանդիսացող տեղեկատվական քաղաքականության մշակման և իրականացման գործում: Ուստի պատահական չէ նաև այսօր լայն կիրառում ստացած «ով տիրապետում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին» արտահայտությունը:

Միաժամանակ, տեղեկատվության դերի ու ծավալի աճի պայմաններում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և հասարակական գործունեության տարբեր բնագավառներում դրանց կիրառման հետևանքով փոփոխվել են նաև տեղեկատվական անվտանգության սպառնալիքները: Ավելին, միջազգային անվտանգության օրակարգ են ներթափանցել անհամաչափ սպառնալիքները և դրանց հիմնական աղբյուր հանդիսացող ահաբեկչական խմբավորումներն ու անդրազգային հանցավոր խմբերը:

Այժմ առավել հաճախ, քան երբևէ բախվում ենք այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են կիրճեռհանցագործությունները, կիրճեռհաբեկչությունը, տեղեկատվական պատերազմները: Ընդ որում, վերջիններս սպառնում են ոչ միայն համացանցից օգտվողներին, այլև հանրության բոլոր անդամներին: Տեղեկատվական սպառնալիքները կարող են հիմք հանդիսանալ այնպիսի գործողությունների համար, որոնք արտահայտվում են տեղեկատվական պատերազմների, տեղեկատվական գրոհների, տեղեկատվական շանտաժի, հակերության, տեղեկատվական-հաղորդակցային համակարգերի խափանման, լրտեսության, գաղտնի տեղեկությունների հրապարակայնացման և այլ ձևերով:

Որպես գլոբալացման անխուսափելի հետևանք՝ հաղորդակցային տեխնոլոգիաների միջոցով իրականացվող համաշխարհային հանցագործությունների վերոհիշյալ ձևերը տարածվում են բոլոր երկրների վրա, ինչի հետևանքով դրանք այժմ ունեն վերազգային բնույթ: Ուստի արդիական է դառնում ոչ միայն ազգային, այլև միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովումը: Բացի այդ, առանձին պետությունների համար գրեթե անհնարին է հաղթահարել այդ սպառնալիքները առանձին: Հետևապես խնդրի լուծման համար անհրաժեշտ է միջազգային համագործակցության ընդլայնում: Արդիական են դառնում նաև անվտանգության մեթոդաբանական և հայեցակարգային հիմքերի վերագիտակցումը, ռեսուրսների և դրա ապահովման մեխանիզմների վերազնահատումը, ազգային շահերի բացահայտումը, ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականության առաջնահերթությունների հստակ տարանջատումը:

Բացի այդ, պետությունների համար կարևոր է նաև գլոբալ սպառնալիքներին հակազդելու համար համապատասխան ռազմավարության մշակումը: Ի դեպ, մի շարք երկրներում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իրանում, Չինաստանում, Գերմանիայում արդեն գոյություն ունեն հատուկ նախարարություններ, գործակալություններ կամ կիրճեռպաշտպանության կենտրոններ, որոնց նպատակը տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված պետական ու ռազմական կառավարման ամբողջականությունն ու անխափանելիությունը ապահովելն է:

Չինացի մտածող Սուն Յզին իր հայտնի «Պատերազմի արվեստը» տրակտատում արտահայտել է չինական ռազմավարության հիմնական գաղափարը. «Կռվել առանց զենքի, հաղթել առանց մարտի»¹: Թեև բավական ժամանակ է անցել, սակայն վերոհիշյալ գաղափարը արդիական է նաև հիմա: Համաշխարհային գերտերությունները փորձում են հակառակորդի հանդեպ գերակայություն հաստատել առանց արյուն թափելու, իսկ զենքի փոխարեն օգտագործում են տեղեկատվական տեխնոլոգիաներն ու ռեսուրսները: Բացի այդ, եթե համաշխարհային քաղաքականության մեջ տեղեկատվական ռեսուրսները գերտերություններին օգնում են իրականացնելու հարձակողական գործառույթներ՝ ուղղված սեփական գործունեության համար դրական տեղեկատվական դաշտի ստեղծմանը, սահմանափակ ռեսուրսներ ունեցող փոքր պետությունների համար դրանք ավելի շատ պաշտպանական և տեղեկատվական անվտանգության սպառնալիքներին հակադարձելու նկատառումներով են կարևորվում:

Նման պայմաններում նոր քաղաքական հակամարտությունների կանխարգելման համար Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է դառնա տեղեկատվության պաշտպանությունն ու տեղեկատվական անվտանգության ապահովումը:

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է տարածաշրջանային բարդ իրադրության պայմաններում ՀՀ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների հետազոտության կարևորությամբ: Երկար տարիներ շարունակվում է տեղեկատվական հակամարտությունը հարևան Ադրբեջանի հետ: 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ Հայաստանը պարբերաբար ենթարկվում է տեղեկատվական ագրեսիայի: Ընդ որում, եթե նախկինում ադրբեջանցի հաքերները հարձակում էին գործում պետական կառույցների կայքերի վրա, ապա այսօր նրանց հետաքրքրում են նաև սոցցանցերից օգտվողների էջերը:

¹ Сунь Цзы. Искусство войны. М.: София, 2010. С. 56–58.

Բացի այդ, մեր երկիրը բավականին խոցելի է կիբեռսպառնալիքների նկատմամբ, քանի որ չունի կիբեռանվտանգության հստակորեն ձևակերպված ռազմավարություն, նման սպառնալիքներին հակազդեցության համապատասխան տեղեկատվական ենթակառուցվածք, ինչպես նաև համակարգչային պատահարներին արձագանքման թիմեր (CERT): Կիբեռանվտանգության ապահովման գործում և կիբեռանվտանգության կայացածության մակարդակով տարածաշրջանի երկրների ցանկում Հայաստանն զբաղեցնում է վերջին տեղը՝ զգալիորեն զիջելով հարևան Ադրբեջանին և Վրաստանին:

Թեմայի ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ գիտական աշխատանքներ, որոնցում լուսաբանվում են ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, փոխգործակցության զարգացման տեսական և գործնական դինամիկայի ուսումնասիրման հարցեր, սակայն դրանցում հիմնականում չկան հակազդեցության նոր մեխանիզմները 21-րդ դարի սպառնալիքների դեմ, ինչը հնարավորություն կտա հետագայում ավելի լավ պաշտպանել մեր երկրի տեղեկատվական անվտանգությունը, դիմակայել համաշխարհայնացման գործընթացներից բխող վտանգներին ու սպառնալիքներին:

Այս տեսանկյունից հարկ է հստակ տարանջատել համաշխարհայնացման պայմաններում ՀՀ տեղեկատվական անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքները, ակտիվորեն ընդլայնել ոլորտում միջազգային համագործակցությունը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ մասշտաբով:

Սույն աշխատանքն անդրադառնում է 21-րդ դարի սպառնալիքներին հակազդելու նոր մեխանիզմների մշակմանը: Ավելին, ուսումնասիրելով տեղեկատվական անվտանգության ապահովման արտասահմանյան երկրների փորձը (ԱՄՆ-ն՝ որպես տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակման առաջին երկիր, ՌԴ-ն՝ որպես հետխորհրդային երկիր, ՉԺՀ-ն՝ որպես արևելյան արժեքներ կրող ավանդական պետություն)՝ աշխատանքում վերհանվում են ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները:

Հիմնախնդրի գիտական ուսումնասիրության աստիճանը: Ատենախոսության թեմայի շրջանակում ներառվող հիմնախնդիրների ուսումնասիրությունը ոլորտի

մասնագետների ուշադրության կենտրոնում է: Հետազոտության առարկային վերաբերող տեղեկատվական անվտանգության թեմայով մի շարք հայ հեղինակներ ունեն գիտական վերլուծություններ, որոնց աշխատությունների հետ միասին ատենախոսությունում քննարկվել է նաև արտասահմանյան քաղաքագետների հեղինակած մասնագիտական գրականությունը: Ուսումնասիրվել են տեղեկատվական անվտանգության և դրա ապահովման քաղաքականության տեսական ու մեթոդաբանական հիմնահարցերին, համաշխարհայնացման պայմաններում տեղեկատվական սպառնալիքներին նվիրված մի քանի տասնյակ աշխատություններ, մենագրություններ, հայ և արտասահմանյան մասնագետների գրքեր, հոդվածներ:

Հետազոտության նորմատիվաիրավական հիմքը կազմել են ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը, ՀՀ Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը, ՀՀ օրենսդրական ակտերը արտաքին քաղաքականության, տարածաշրջանային անվտանգության ոլորտում, տեղեկատվական անվտանգության ոլորտին առնչվող իրավական փաստաթղթեր, միջազգային կոնվենցիաներ, որոնք կանոնակարգում են տեղեկատվական անվտանգության ապահովման քաղաքականությունը, միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ ՆԱՏՕ), Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ), Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ ՀԱՊԿ), Շանհայի համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ՇՀԿ) պաշտոնական փաստաթղթեր (կանոնադրություններ, աշխատանքային ու փորձագիտական խմբերի եզրակացություններ, ռազմավարություններ, հայեցակարգեր):

Օգտագործված աշխատությունների հայ հեղինակների թվում են Հ. Քոթանջյանը², Գ. Հարությունյանը³, ովքեր ուսումնասիրել են տեղեկատվական

² Քոթանջյան Հ. Ս., Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տետրեր», 2012, հմ. 4; Գագիկ Հարությունյան, Հայկ Քոթանջյան և ուրիշներ, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան 2009, էջ 22-27, Քոթանջյան Հ.Ս. Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2009; Քոթանջյան Հ.Ս., Մարտիրոսով Լ.Ա., Մարտիրոսյան Տ.Բ., Չիլինգարյան Դ.Ս., ՀՀ պաշտպանական դոկտրինի մշակման որոշ հարցեր // ՀՀ ՊՆ Դ.

անվտանգության հետ կապված խնդիրները պետական տեղեկատվական քաղաքականության մշակման և իրականացման գործում: Տեղեկատվական անվտանգության ուսումնասիրության եռամակարդակ հետաքրքիր մոտեցում է ցուցաբերել Ա. Աթանեսյանը⁴:

Կիբեռանվտանգության ոլորտում արժեքավոր հետազոտություններ է կատարել Ա. Գրիգորյանը⁵: Տեղեկատվական ապահովման խնդիրը իրական ժողովրդավարական պետություն կառուցելու գործում կարևորում է Վ. Սողոմոնյանը⁶: ՀՀ տեղեկատվական անվտանգության ներկա իրավիճակի, տեղեկատվական հիմնական սպառնալիքների հարցերին անդրադարձել է փորձագետ Ս. Մարտիրոսյանը⁷: ՀՀ ազգային շահերի ապահովման համատեքստում տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներին անդրադարձել է Ռ. Էլամիրյանը⁸:

Ատենախոսության մեջ ընդգրկված առանձին խնդիրների իրենց ատենախոսական աշխատանքներում անդրադարձել են Վ. Դիլանյանը, Է. Քալանթարյանը, Հ. Հակոբյանը. այսպես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը ՀՀ պետական կառավարման արդյունավետության

Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» (այսուհետ՝ նաև «Հայկական բանակ») ռազմագիտական հանդես, 2007, հմ. 1 (51):

³ Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության խնդիրների շուրջ (http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2276, վերջին մուտքը՝ 10.05.2017թ.):

⁴ Աթանեսյան Ա.Վ., Սպառնալիքներ ՀՀ տեղեկատվական անվտանգությանը. եռամակարդակ վերլուծություն, «21-րդ ԴԱՐ», Երևան 2010, N6, էջ 26-34; Атанесян А. В., Актуальные проблемы современных политических и конфликтных коммуникаций, Ереван, изд-во ЕГУ, 2008, - 305с.

⁵ Գրիգորյան Ա., Կիբեռանվտանգության տեղն ու դերը տեղեկատվական անվտանգության համակարգում, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2016, հմ. 1 (87), էջ 48-55:

⁶ Согомонян В. Публичность власти: Лингвистика или политология?, «21-й век», №5, 2012, с. 105-117; Согомонян В. «Проблемы информационного обеспечения властей: концепции и процессы», дисс. ... д-ра полит. наук, Ереван 2014, -225 с.

⁷ Մարտիրոսյան Ս., Համացանցը Հայաստանում. 2016 թվականի ամփոփում (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15344&sphrase_id=58069, վերջին մուտքը՝ 10.05.2017թ.), Սամվել Մարտիրոսյան, Հայաստանի հասարակությունը և կիբեռանվտանգությունը. Իրավիճակը 2016թ. (http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=15400, վերջին մուտքը՝ 13.05.2017թ.):

⁸ Эламирян Р. Проблема информационной безопасности в контексте обеспечения национальных интересов Республики Армения, автореферат дисс. на соискание уч.степени канд. полит. наук., Ереван 2013, -30с.

բարձրացման համար կարևորել է Վ. Դիլանյանը⁹, ՀՀ պետական կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման ընթացակարգի ներդրման անհրաժեշտությանն անդրադարձել է Է. Քալանթարյանը¹⁰: ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացման հարցերն ուսումնասիրել է Հ. Հակոբյանը¹¹:

Տեսական-հայեցակարգային առումով արժեքավոր են Մ.Մարգարյանի, Հ. Բայադյանի, Ս. Մովսիսյանի՝ հանրային կառավարման արդիականացման և տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորությանը վերաբերող աշխատությունները¹²:

Սակայն, համաշխարհայինացման պայմաններում ՀՀ ներքին ու արտաքին տեղեկատվական սպառնալիքների և դրանց հակազդման մեխանիզմների համալիր հետազոտություն մինչ օրս չի արվել: Սույն աշխատանքը հենց այդ խնդրին է ուղղված:

1970-ական թվականներից սկսվել է ձևավորվել տեղեկատվական հասարակության հայեցակարգը: Դ. Բելլի¹³, Մ. Կաստելսի¹⁴, Յ. Մասուդայի¹⁵ աշխատանքները հիմք են հանդիսացել տեղեկատվական հասարակության հայեցակարգի մշակման, դրա հիմնական բնութագրիչների նկարագրման համար: Դրանցում ուսումնասիրվել են նաև համաշխարհայինացման գործընթացի ձևավորման նախադրյալները:

⁹ Դիլանյան Վ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի կատարելագործումը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, քաղ.գիտ.թեկն. ...ատենախոսություն, Երևան 2012, -134 էջ:

¹⁰ Քալանթարյան Է., ՀՀ պետական տեղեկատվական կառավարումը, քաղ.գիտ.թեկն. ...ատենախոսություն, Երևան, 2014, -166 էջ:

¹¹ Հակոբյան Հ. Տեղեկատվական հասարակության կայացումը Հայաստանի Հանրապետությունում, քաղ.գիտ.թեկն. ...ատենախոսություն, Երևան 2011, -164 էջ:

¹² Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր. Երևան, «Պետական ծառայություն», 2004; Մարգարյան Մ. Կառավարման համակարգը Հայաստանում. Ինստիտուցիոնալ կարգը և հիմնախնդիրները, ՌԱՀՀԿ, Եր. 2001; Բայադյան Հ. Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Եր. 2009; Մովսիսյան Ս. ՀՀ տեղեկատվական հակազդեցության հիմնական ուղղությունները, «Գլոբուս. Տեղեկատվական անվտանգություն», №4, հոկտեմբեր, 2008:

¹³ Bell D. The Social Framework of the Information Society / Eds. Michael L. Dertouzos, J. Moses (eds) // The Computer Age: A 20 Year View, Cambridge, MA: MIT Press, 1980. – P. 163-212; Bell D. The Third Technological Revolution and Its Possible Socioeconomic Consequences / Daniel Bell // Dissent, – 1989. – 6 (2). – P. 164-176; Bell D. The Coming of Post-Industrial Society: A Venture in Social Forecasting. / Daniel Bell. – New York: Basic Books, 1999. – 616 p.

¹⁴ Castells M. The rise of the network society / Manuel Castells. – Malden, Mass.: Blackwell Publishers, 1996, P. 556.

¹⁵ Masuda Y. The information Society as Post-Industrial Society / Yoneji Masuda. – Washington, 1981, P. 179.

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ազդեցությամբ հասարակության ու պետության կերպափոխումներին, ինչպես նաև ազգային ու միջազգային մակարդակում ընթացող քաղաքական գործընթացների վրա դրանց ազդեցությանը անդրադարձել են Զ. Նայր¹⁶, Ա. Թոֆլեր¹⁷, Ֆ. Ֆուկույաման¹⁸, Մ. Լեբեդևան¹⁹ և ուրիշներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման և տեղեկատվական տարածության համաշխարհայնացման պայմաններում տեղեկատվական ոլորտի համար նոր սպառնալիքներ ի հայտ եկան, որոնց ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունեն Ե. Կասպերսկին²⁰, Վ. Լոպատին²¹, Ա. Ստրելցով²², Կ. Ուիլսոն²³:

ԱՄՆ-ի տեղեկատվական անվտանգության հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են այնպիսի հայտնի ամերիկացի փորձագետներ, ինչպիսիք են Զ. Բժեզինսկին²⁴, Հ. Քիսինջեր²⁵, Զ. Նայր²⁶, Ֆ. Ֆուկույաման²⁷, Ս. Հանթինգտոն²⁸:

¹⁶ Nye J. Power in the Global Information Age: From Realism to Globalization / Joseph S. Nye Jr. – Routledge, 2004. – 240 p.; Nye J. The Future of Power / Joseph S. Nye Jr. – New York: Public Affairs, 2011., P. 298.

¹⁷ Тоффлер Э. Третья волна / Э. Тоффлер. – М.: АСТ, 2010, с. 784.

¹⁸ Fukuyama, Francis. The Promise and Challenge of emerging technologies [Электронный ресурс] / Information and Biological Revolutions: Global Governance Challenge // Science and Technology Policy Institute. Chapter 2. – URL: http://www.rand.org/content/dam/rand/pubs/monograph_reports/2007/MR1139.pdf (վերջին մուտքը՝ 05.04.2014թ.).

¹⁹ Лебедева М.М. Современные технологии и политическое развитие мира / М.М. Лебедева // Международная жизнь. – 2001. – № 2. – с. 45-53; Лебедева М.М. Мировая политика / М.М. Лебедева. – М.: Аспект Пресс, 2003, С. 351.

²⁰ Касперский Е. Компьютерное зловердство / Е. Касперский. – СПб: Питер, 2008, с. 208.

²¹ Лопатин В.Н. Информационная безопасность России: Человек, общество, государство / В.Н. Лопатин. – М.: 2000, с. 428.

²² Стрельцов А.А. Обеспечение информационной безопасности России / А.А. Стрельцов. – М.:МЦНМО, 2002, с. 296.

²³ Wilson, Clay. Computer Attack and Cyber Terrorism: Vulnerabilities and Policy Issues for Congress / Congress Research Center Report. October 17, 2003. (<http://fpc.state.gov/documents/organization/26009.pdf>); Wilson, Clay. Botnets, Cybercrime, and Cyberterrorism: Vulnerabilities and Policy Issues for Congress / Congress Research Service Report. January 28, 2008. – URL: <http://fpc.state.gov/documents/organization/102643.pdf> (վերջին մուտքը՝ 05.04.14թ.).

²⁴ Бжезинский З. Великая шахматная доска / Зб. Бжезинский, пер. О.Ю. Уральской. – М.: Международные отношения, 1998. – 256 с.; Бжезинский Зб. Выбор. Мировое господство или глобальное лидерство / Зб. Бжезинский. – М.: Международные отношения, 2004. – 287 с.; Бжезинский Зб. Ещё один шанс. Три президента и кризис американской сверхдержавы / Зб. Бжезинский. – М: Международные отношения, 2010.– 190 с.

²⁵ Киссинджер Г. Дипломатия. / пер. с англ. В.В. Львова. – М.: Ладомир, 1997. – 848 с.; Kissinger H. Does America Need a Foreign Policy?: Toward a Diplomacy for the 21st Century / Henry A. Kissinger. – New York: Simon & Schuster, 2001. – 238 p.

²⁶ Nye J. The Future of American Power: Dominance and Decline in Perspective / Joseph S. Nye, Jr. // Foreign Affairs. Nov. / Dec. 2010. V. 89. #6. – P. 2-12.

²⁷ Fukuyama Fr. America at the Crossroads: Democracy, Power, and the Neoconservative Legacy / Francis

Հարկ է նշել, որ հիմնախնդրի ուսումնասիրությանը վերաբերող աշխատությունների մեծ մասում տեղեկատվական անվտանգությանը նեղ մոտեցում է ցուցաբերվում, մենք ընդունելի ենք համարում այն մոտեցումը, որն ընդգծում է անհատի, հասարակության, պետության եռամիասնական մոտեցումը:

Հետազոտության աղբյուրները հետևյալն են.

- Առաջին խումբ աղբյուրները ՀՀ-ի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի պետական պաշտոնական փաստաթղթերն են, մասնավորապես՝ հայեցակարգերը, օրենսդրական ակտերը,
- Երկրորդը հայ և արտասահմանյան գիտական գրականությունն է,
- Երրորդը հայ և արտասահմանյան մամուլի հրապարակումներն են,
- Չորրորդը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի, ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ի, ՇՀԿ-ի պաշտոնական փաստաթղթերն են,
- Հինգերորդը պետական ու ոչ պետական մի շարք կազմակերպությունների պաշտոնական կայքերը:

Հետազոտության օբյեկտն է Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության համակարգը:

Հետազոտության առարկան համաշխարհայնացման գործընթացներից բխող ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների և դրանց հակազդման մեխանիզմների, տեղեկատվական անվտանգության ապահովման կառուցակարգերի և դրանց կատարելագործման հեռանկարների փոխկապված հիմնախնդիրների ամբողջությունն է:

Հետազոտության նպատակն է համապարփակ և հետևողական վերլուծության ենթարկել Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության համակարգը, մատնանշել համաշխարհայնացման պայմաններում ՀՀ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները: Սա կանխորոշում է գիտականորեն հիմնավորված համակարգի մշակման անհրաժեշտությունը, համաշխարհայնացման պայմաններում տեղեկատվական սպառնալիքների համատեքստում տեղեկատվական անվտանգության վիճակի և հեռանկարների

Fukuyama. – Yale University Press, 2006. – 226 p.

²⁸ Huntington S. The Lonely Superpower / Foreign Affairs. – March/April 1999. – Vol.78. № 2. – pp. 35-49.

գնահատումը, համապատասխան միջոցառումների մշակումը՝ ազգային արժեքներին, շահերին, նպատակներին սպառնացող իրական և հնարավոր վտանգներին հակազդելու համար:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար հետազոտության ընթացքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- Ընդհանրացնել քաղաքագիտական գրականության մեջ, ինչպես նաև տարբեր երկրների՝ ոլորտին առնչվող հայեցակարգային փաստաթղթերում տեղեկատվական անվտանգության սահմանման տարբեր տեսակետները և մոտեցումները,
- Վերլուծել տեղեկատվական անվտանգության տեսական հիմքերն ու ապահովման առաձնահատկությունները համաշխարհայնացման պայմաններում,
- Բացահայտել թվային դիվանագիտության ծրագրերի դերը տեղեկատվական անվտանգության քաղաքականության իրականացման ժամանակ,
- Վերլուծել տեղեկատվական անվտանգության ապահովման արտասահմանյան փորձը՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ՉԺՀ-ի օրինակով, բացահայտել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
- Բացահայտել համաշխարհայնացման պայմաններում ՀՀ տեղեկատվական անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքները, սահմանել դրանց հակազդման հիմնական ուղղությունները, մեթոդները և տալ գործնական խորհուրդներ,
- Տեղեկատվական անվտանգության իրավական հիմքերի բացահայտման նպատակով համակարգորեն վերլուծել ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգն ու արժևորել փոփոխությունների անհրաժեշտությունը,
- Հետազոտել ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման տեսանկյունից միջազգային համագործակցության ընդլայնման հեռանկարները,
- Վերլուծել և գնահատել ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության հիմնական ուղղություններն ու զարգացման հեռանկարները:

Հետազոտության շրջանը ընդգրկում է Հայաստանի երրորդ Հանրապետության ժամանակաշրջանը (1990-ական թվականների սկզբներից մինչև մեր օրերը):

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և եղանակները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են բովանդակային և դիսկուրս վերլուծության, գործընթացային հետազոտության մեթոդները, համակարգակառուցվածքային մոտեցումը: Համագիտական մեթոդներից՝ դիալեկտիկական, համակարգային, նկարագրական, համեմատական մեթոդները, ինչպես նաև ընդհանուր գիտական մեթոդներ՝ անալիզ, սինթեզ, դեդուկցիա: Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև քննարկվող ոլորտի վերաբերյալ քաղաքագիտության հայտնի մասնագետների բազմաթիվ աշխատություններ, շատ դեպքերում համադրվել են մասնագիտական գրականության մեջ առկա դիրքորոշումները, որոնց հիման վրա էլ արվել են սեփական եզրահանգումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը համաշխարհայնացման պայմաններում հիմնախնդրի լուծման տեսական և մեթոդաբանական հիմքերի մշակումն է՝ հաշվի առնելով ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքները:

Ատենախոսական աշխատանքում ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները՝

1. Մշակվել են համաշխարհայնացման պայմաններում տեղեկատվական անվտանգության ապահովման, սպառնալիքների հակազդման մեխանիզմների տեսական հայեցակարգային հիմքերը՝ հաշվի առնելով ՀՀ տեղեկատվական անվտանգության համակարգի առանձնահատկությունները:
2. Տեղեկատվական անվտանգության ապահովման պաշտպանողական և հարձակողական չափումների համադրմամբ մշակվել են տեղեկատվական օպերացիաների իրականացման մի շարք եղանակներ:
3. Հետազոտության արդյունքների հիման վրա հիմնավորվել է Հայաստանի տեղեկատվական անվտանգությունը Արցախի տեղեկատվական անվտանգության հետ միասնության մեջ դիտարկելը: Ընդգծվել է Արցախի տեղեկատվական անվտանգության հայեցակարգի մշակման

անհրաժեշտությունը, որը համահունչ կլինի ՀՀ համապատասխան հայեցակարգին:

4. Միջազգային առաջատար փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկվել է տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում տեղեկատվական վտանգներին և համակարգչային պատահարներին արագ արձագանքման խմբերի ստեղծման գերատեսչական մոդել:
5. Բացահայտվել են համաշխարհայնացման պայմաններում ՀՀ տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների աճը պայմանավորող ներքին և արտաքին հիմնական գործոնները, առաջարկվել են դրանց կանխարգելման միջոցներն ու եղանակները: Այս համատեքստում ընդգծվել են թվային դիվանագիտության ընձեռած հնարավորությունները, արժևորվել է դրա գործիքարանի արդյունավետ կիրառումը:

Հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է նաև նրանով, որ ատենախոսության շրջանակում տեղեկատվական անվտանգության հարցերը վերլուծվում են որպես ՀՀ հանրային անվտանգության մաս՝ անհատ-հասարակություն-պետություն եռամիասնության մեջ:

Հետազոտության **տեսական և գործնական նշանակությունը** կայանում է նրանում, որ աշխատանքի հիմնական դրույթները կարող են կիրառվել ԲՈՒՀ-երի գիտակրթական գործունեությունում, ինչպես նաև պետական և գիտահետազոտական հաստատությունների հետազոտական աշխատանքներում: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգային հետագա մշակումների համար: Բացի այդ, ստացված արդյունքները թույլ են տալիս ավելի լավ ընկալել միջազգային հարաբերություններում ՀՀ հիմնական խնդիրները՝ կապված տեղեկատվական անվտանգության ապահովման հետ, ինչը թույլ կտա ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը վերանայելիս հաշվի առնել դրական և բացասական միտումները:

ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1.1. «Տեղեկատվական անվտանգություն» հասկացության սահմանման հիմնախնդիրները և էվոլյուցիան

Մարդկության պատմության ողջ ընթացքում տեղեկատվությունը կարևոր դեր է խաղացել քաղաքակրթության զարգացման համար: Այն ոչ միայն տեղեկություն հավաքելու գործընթաց է, այլև դա ընկալելու, պահպանելու ու փոխանցելու մեթոդների ամբողջություն: Ընդ որում, կախված դրա կիրառման նպատակներից ու մեթոդներից, այն ունի և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն պետության ու հասարակության վրա:

20-րդ դարի երկրորդ կեսին տեղեկատվության ծավալն ու նշանակությունն ակնհայտորեն աճեցին: Տեղեկատվությունը սկսեց մեծ դեր խաղալ մարդկային կենսագործունեության բոլոր բնագավառներում: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ հաճախ զանգվածային լրատվամիջոցներն անվանվում են չորրորդ իշխանություն՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կողքին: Պատահական չէ նաև այսօր լայն կիրառում ստացած «ով տիրապետում է տեղեկատվությանը, նա տիրում է աշխարհին» արտահայտությունը: Ավելին՝ 1994 թվականից սկսած՝ Տեղեկատվության միջազգային ակադեմիայի նախաձեռնությամբ նոյեմբերի 26-ը աշխարհի շատ երկրներում նշվում է որպես տեղեկատվության համաշխարհային օր:

Տեղեկատվության դերի ու ծավալի աճի պայմաններում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ բարդացան նաև տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, ուստի տեղեկատվության պաշտպանությունը դարձավ շատ պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության առաջատար ուղղություններից մեկը:

Նախքան տեղեկատվական անվտանգություն հասկացությանն անդրադառնալը նախ անդրադառնանք դրա առանձին բաղկացուցիչներին՝ «տեղեկատվություն» և «անվտանգություն» հասկացություններին:

Այսպես, գիտության զարգացման ժամանակակից փուլում տեղեկատվություն հասկացության միասնական սահմանում չկա: Առօրյայում տեղեկատվություն հասկացության տակ ենթադրվում են գրավոր կամ բանավոր փոխանցվող տվյալները, ինչպես նաև այդ տվյալների ստացման ու փոխանցման բուն գործընթացը:

Տեղեկատվության սահմանումը տվել են այնպիսի հայտնի գիտնականներ, ինչպիսիք են Ն. Վիները, Բ.Շեննոնը, Փ. Հարթնին, Ն. Ռաշևսկին և ուրիշներ: Ըստ ժամանակակից անգլերենի Օքսֆորդի բառարանի՝ տեղեկատվությունը կապված է երկու՝ գիտելիք և հաղորդակցություն հասկացությունների հետ և մեկնաբանվում է որպես 1. որոշակի փաստերի վերաբերյալ գիտելիք 2. երևույթ կամ իրադարձություն, որի մասին ինչ-որ մեկը տեղեկացվում է, 3. տեղեկություն, լուր:

Ս.Ի. Օժեգովի «Ռուսաց լեզվի բառարանում» տեղեկատվությունը շրջակա միջավայրի ու դրանում տեղի ունեցող գործընթացների մասին մարդու կողմից կամ հատուկ սարքերի միջոցով ընկալվող տեղեկությունն է:

Տեղեկատվության դերը նախևառաջ կապված է կենդանի օրգանիզմների համար արտաքին աշխարհի փոփոխությունների վերաբերյալ տվյալներ ստանալու անհրաժեշտության հետ: Դեռևս Ն. Վիներն է կապ տեսել տեղեկատվության ու հարմարվողականության միջև և համարել, որ տեղեկատվությունը արտաքին աշխարհից ստացված ազդակներին մեր ու մեր զգացմունքների հարմարվողականության գործընթացի բավանդակությունն է²⁹: Հենց Վիներն է սահմանել տեղեկատվություն տերմինը դրա նեղ իմաստով՝ որպես տեղեկատվության քանակ:

Հեղինակների մի մասը տեղեկատվությունը սահմանում է որպես մարդկանց, առարկաների, փաստերի, իրադարձությունների, իրավիճակների ու գործընթացների մասին տվյալներ՝ անկախ դրանց ներկայացման ձևից:

Ս.Ա. Յանկովսկին տեղեկատվությունը սահմանում է տեղեկատվական փոխազդեցության հայեցակարգի միջոցով և գրում. «Օբյեկտների միջև ցանկացած փոխազդեցություն, որի արդյունքում մեկը ստանում է որոշակի սուբստանցիա, իսկ մյուսն այն չի կորցնում, կոչվում է տեղեկատվական փոխազդեցություն. ընդ որում,

²⁹ Տե'ս, Винер Норбет. Кибернетика или управление и связь в животном и машине. – М.: Сов. радио, 1958, էջ 35:

փոխանցող սուբստանցիան կոչվում է տեղեկատվություն: Տեղեկատվությունն առաջանում է փոխազդեցության ժամանակ և չի կորչում դրա հետ»³⁰:

Այսպիսով, հարկ է նկատել, որ գիտության զարգացման ժամանակակից փուլում հնարավոր չէ տալ տեղեկատվության հասկացության միասնական սահմանում, որը կմիավորի դրա կենսաբանական, սոցիալական ու տեխնիկական իմաստները: Այն կենդանի օրգանիզմների հարմարվողականության ու զարգացման կարևոր գործիք է: Այն միաժամանակ և՛ պահանջում է, և՛ գործիք, և՛ կենդանի մատերիայի գոյության արդյունք: Ներկայումս տեղեկատվությունը քաղաքական արդյունավետ կառավարման գործիք է, ընդ որում՝ կարևոր է հնարավորինս ամբողջական տեղեկատվությունը, հակառակ դեպքում ռացիոնալությունը շատ սահմանափակումներ կունենա:

Ինչ վերաբերում է անվտանգություն հասկացությանը, ապա հին հույն փիլիսոփա Էպիկուրը դեռևս մ.թ.ա. 4-րդ դարում անվտանգությունը տեսնում էր մարդու ու բնության ներդաշնակության մեջ³¹: Թ. Հոբսը անվտանգությունը հասկանում էր երկու առաքինություններում՝ հավատում ու օրենքներում³²:

Ինքնին անվտանգություն եզրույթը սկսվել է օգտագործվել դեռևս 12-րդ դարի սկզբից և հասկացվել է որպես մարդու հանգստի հոգեվիճակ՝ պաշտպանված ցանկացած վտանգից: Այս ընկալմամբ հասկացությունը թեև հազվադեպ, բայց օգտագործվել է մինչև 17-րդ դար:

17-18-րդ դարերում գրեթե բոլոր երկրներում հաստատվում էր հետևյալ տեսակետը՝ պետության գլխավոր նպատակը հասարակության բարեկեցությունն ու անվտանգությունը ապահովելն է: Ուստի անվտանգություն հասկացությունը սկսվում է այլ կերպ շրջանառվել և ընկալվել որպես հանգստի իրավիճակ, որն ի հայտ է գալիս իրական վտանգի (ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյական) բացակայության պայմաններում, ինչպես նաև նման իրավիճակին նպաստող նյութական, քաղաքական, տնտեսական պայմաններ, համապատասխան մարմիններ ու կազմակերպություններ: Այս համատեքստում տեղին է նկատում Գ.Ա. Ատամանովը, որ անվտանգությունը

³⁰ Տե՛ս և Янковский С.Я. Концепция общей теории информации. – М.: Бета-Издат, 2000, էջ 6:

³¹ Տե՛ս և Мыслители Греции. От мифа к логике. – Москва: Эксмо-пресс, Харьков: Фолио, 1998, էջ 774:

³² Տե՛ս և Гоббс Т., Левиафан. – Москва: Мысль, 2001, էջ 396:

իմաստ ունի միայն որոշակի վտանգի առկայության դեպքում³³: Հեղինակը նշում է , որ «վտանգը» բնութագրում է օբյեկտի վիճակը, որի ժամանակ ներքին կամ արտաքին ազդեցությունների առկայությունը խաթարում է համակարգի կենսագործունեության մեխանիզմները, ինչի արդյունքում դրա նորմալ գործարկման համար սպառնալիք է առաջանում: Ընդ որում, ըստ հեղինակի, ոչ բոլոր սպառնալիքներն են վտանգ, այլ միայն նրանք, որոնք սպառնում են համակարգի ֆունկցիոնալ ամբողջությանը. անվտանգությունը առաջանում է որպես վտանգի հաղթահարում:

Կարելի է նաև համաձայնել Օ.Ա. Բելկովի սահմանման հետ, ըստ որի վտանգը սոցիումի վրա բացասական ազդեցության օբյեկտիվ գոյություն ունեցող հնարավորությունն է, որի արդյունքում նրան կարող է վնաս հասցվել:

Այսպիսով, անվտանգությունը կարելի է սահմանել որպես համակարգի կարողություն՝ հակազդելու վտանգներին:

20-րդ դարի կեսերին համաշխարհայնացման նոր պայմաններում անվտանգության հետ կապված հարցերն էլ ավելի ակտուալ են դառնում, ի հայտ են գալիս անհամաչափ սպառնալիքներ, որոնք տեղեկատվական անվտանգության համար նոր մարտահրավերներ են ստեղծում: Նման սպառնալիքների դեմ պայքարում տեղեկատվական անվտանգությունն առաջնային է դառնում, և, պատահական չէ, որ այն սկսում է դիտվել որպես հանրային անվտանգության կարևոր մաս, օգնում է պայքարել հոգեորսության (աղանդների տարածում), այլընտրանքային ցածր մշակույթների տարածման դեմ:

Եթե նախկինում գիտության ու քաղաքականության մեջ անվտանգությունը միայն ռազմական առումով էր ընկալվում, իսկ անվտանգության քաղաքականությունը դիտվում էր որպես «հոմանիշ» ռազմական միջոցառումներին, ապա այդուհետ ավելի հաճախ ուշադրություն է դարձվում հենց անվտանգության ոչ ռազմական ասպեկտին: Նման պայմաններում, պետությունների ու միջազգային կազմակերպությունների համար հրամայական է դառնում կոլեկտիվ անվտանգության ապահովումը՝ միաժամանակ քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, ռազմական ուղղություններում: Ընդ որում, երկրներն ըստ իրենց ռեժիմի բնույթի տարբեր կերպ են

³³ Ст'и Атаманов Г. А., Информационная безопасность: сущность и содержание // Бизнес и безопасность в России. – 2007. – № 47, էջ 106:

խնդիրը լուծում. մի մասը տեղեկատվական դաշտը փակում է՝ արգելելով նույնիսկ սոցիալական ցանցերի օգտագործումը, մյուսներն ավելի լիբերալ մեթոդներ են փնտրում:

«Տեղեկատվություն» և «անվտանգություն» հասկացությունների սահմանումներից հետո այժմ անդրադառնանք «տեղեկատվական անվտանգություն» հասկացության էությանը:

Հարկ է նկատել, որ «տեղեկատվական անվտանգություն» հասկացության հստակ սահմանում մինչ օրս չկա, ավելին՝ եղածներն այնքան տարբեր են, որ երբեմն նույնիսկ հակասում են միմյանց: Հասկացության սահմանման բարդությունը առաջին հերթին հետևանքն է այն բանի, որ այն շրջանառվում է տեղեկատվական հասարակության համատեքստում, որը դեռևս գտնվում է ձևավորման փուլում և կարիք ունի մանրամասն ուսումնասիրությունների: Նշենք, որ տեղեկատվական հասարակության ձևավորումը հնարավոր է դարձել քսաներորդ դարի երկրորդ կեսին՝ տեղեկատվական հեղափոխության շնորհիվ: Դա բացատրվում է որակապես նոր տեխնոլոգիաների առաջացմամբ ու արագընթաց զարգացմամբ, ինչը մարդկությանը թույլ է տալիս ստեղծել, պահել, մշակել ու փոխանցել գրեթե ցանկացած ծավալի տեղեկատվություն իրական ժամանակում:

Տեղեկատվական հասարակությունը սահմանվում է որպես հասարակական և արտադրական հարաբերությունների զարգացման վիճակ, որտեղ արտադրանքի հիմնական մասը ոչ թե արդյունք է նյութական արտադրության, այլ բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվական արտադրանք ստեղծելու և վաճառելու միջոցով, այսինքն՝ խոսքը քաղաքացիների մտավոր աշխատանքով ստեղծված արդյունքի մասին է³⁴:

«Տեղեկատվական անվտանգություն» հասկացության սահմանման մյուս բարդությունը կապված է տեղեկատվական անվտանգություն երկույթի տարբեր հայեցակետերի՝ տեխնիկական, սոցիալական, հոգեբանական, քաղաքական և այլն

³⁴ Емельянов Г.В., Стрельцов А.А. Проблемы обеспечения безопасности информационного общества //Распределенная конференция "Технологии информационного общества 98 – Россия". (<http://www.iis.ru/events/19981130/streltsov.ru.html>, վերջին մուտքը՝ 11.04.2017թ.):

ուսումնասիրության հետ, ուստի տարբեր է հասկացության ընկալումը սոցիոլոգների, փիլիսոփաների, հոգեբանների, քաղաքագետների մոտ: Նշենք դրանցից մի քանիսը.

Այսպես, սոցիոլոգները «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը դիտարկում են սոցիոլոգիայի ուղղություններից մեկի՝ տեղեկատվության սոցիոլոգիայի շրջանակում՝ դրանով իսկ փոխկապակցելով հասկացության սահմանման սոցիոլոգիական ու տեղեկատվական մոտեցումները: Ըստ սոցիոլոգիական մոտեցման, տեղեկատվական անվտանգությունը կարող է իրականացվել բացառապես հասարակական հարաբերությունների համատեքստում և ինչպես ցանկացած հասարակական երևույթ, ենթարկվում է սոցիոլոգիական հետազոտության՝ նպատակ ունենալով տվյալներ հավաքել սոցիալական համակարգի վերաբերյալ:

Հոգեբանական մոտեցումը շեշտը դնում է տեղեկատվական անվտանգության հոգեբանական բաղկացուցի վրա և որպես տեղեկատվական փոխազդեցության հիմնական սուբյեկտ դիտարկում է անհատին, մարդուն՝ նպատակ ունենալով տեղեկատվական ազդեցությունից մարդու հոգեբանական վիճակի պաշտպանությունը:

Փիլիսոփաները հիմնվում են տեղեկատվական անվտանգության երեք բաղկացուցիչների վրա՝

- սուբյեկտների տեղեկատվական պահանջների բավարարում,
- տեղեկատվության անվտանգության ապահովում,
- սուբյեկտների պաշտպանության ապահովում³⁵:

Ըստ իրավաբանների, տեղեկատվական անվտանգությունը ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչն է: Տեղեկատվական իրավունքի կառուցվածքում տեղեկատվական անվտանգության ապահովումը դրա ինստիտուտներից մեկն է, որի էությունը իրավական, կազմակերպչական, տեխնիկական միջոցառումների իրականացումն է՝ ապահովելու պետության, առաձին կազմակերպությունների ու յուրաքանչյուր անհատի տեղեկատվական-հաղորդակցային համակարգի բոլոր բաղկացուցիչների անվտանգությունը³⁶:

³⁵ Տե՛ս Атаманов Г.А. Информационная безопасность: сущность и содержание//Бизнес и безопасность в России. 2007. N47, էջ 108:

³⁶ Տե՛ս Бачило И.Л. Информационное право: учебник для вузов. М.: Высшее образование; Юрайт-Издат, 2009, էջ 398:

Տեղեկատվական անվտանգության խնդրի մեկնաբանման քաղաքագիտական մոտեցման շրջանակում առաջին հերթին կարևորվում է տվյալ ոլորտում տարատեսակ սպառնալիքների հակազդելու համար մասնավոր սեկտորի և պետական ինստիտուտների ջանքերի համախմբումը:

Տեղեկատվական անվտանգության ապահովման տեխնիկական մոտեցումը ենթադրում է առաջին հերթին մշակել կայքերի անվտանգության պահանջները, ինչպիսիք են՝ սերվերների պաշտպանություն, լիցենզավորում և այլն:

Մեր կարծիքով, տեղեկատվական անվտանգության վերոհիշյալ սահմանումներն ուղղված են երևույթի միայն առանձին բաղկացուցիչի ուսումնասիրությանը, հստակ ձևակերպված չեն և չեն արտահայտում հասկացության իրական բովանդակությունը:

Տեղեկատվական անվտանգության հարցերով զբաղվող արտասահմանյան գործակալություններում «տեղեկատվական անվտանգությունը» դիտվում է որպես ընդհանուր անվտանգության առանձին բաժին այնպիսի հասկացությունների կողքին, ինչպիսիք են «համակարգչային անվտանգությունը», «ցանցի անվտանգությունը», «հեռահաղորդակցության անվտանգությունը», «տվյալների անվտանգությունը» և այլն:

Վերոհիշյալի հիման վրա, կարելի է նշել, որ տեղեկատվական անվտանգությունը հասարակության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածությունն է և ավելի լայն հասկացություն է, քան միայն ցանցի կամ համակարգչի անվտանգությունը:

Տարբեր է հասկացության բովանդակությունը նաև անգլալեզու, ռուսերեն ու հայերեն գրականության մեջ, ինչպես նաև հայեցակարգային փաստաթղթերում:

Այսպես, անգլալեզու գրականության մեջ «տեղեկատվական անվտանգություն» (information security) հասկացությունը սահմանվում է որպես տեղեկատվության և աջակցող ենթակառուցվածքների պաշտպանվածություն բնական կամ արհեստական բնույթի պատահական կամ կանխամտածված ազդեցություններից, որոնք տեղեկատվական հարաբերությունների սուբյեկտներին, այդ թվում՝ տեղեկատվությունը տիրապետողին ու օգտագործողին, ինչպես նաև աջակցող ենթակառուցվածքին կարող են անդառնալի վնաս հասցնել: Հասկացության մեկ այլ սահմանմամբ՝ «Տեղեկատվական անվտանգությունը տեղեկույթի և տեղեկատվական համակարգերի՝

չարտոնված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, փոփոխումից կամ ոչնչացումից պաշտպանությունն է, որպեսզի ապահովված լինեն գաղտնիությունը, ամբողջականությունը և մատչելիությունը»³⁷: Այս իմաստով տեղեկատվական անվտանգության հոմանիշներն են «կիբեռանվտանգությունը» (Cybersecurity) և «համակարգչային անվտանգությունը» (Computer security):

Ռուսալեզու գրականության մեջ տեղեկատվական անվտանգության ժամանակակից խնդիրների սահմանման համար հիմք են հանդիսացել Ի. Ա. Լազարևի, Վ. Ն. Լոպատինի, Յու. Ս. Ուֆիմցևի, Ե. Ա. Երոֆեևի համակարգային հետազոտությունները:

Այսպես, Վ. Ն. Լոպատինը առանձնացնում է տեղեկատվական – հոգեբանական անվտանգությունը և այն սահմանում որպես վնասակար տեղեկատվության ազդեցությունից անհատի, հասարակության ու պետության կենսական կարևոր շահերի պաշտպանության իրավիճակ³⁸:

Տ. Ա. Պոլյակովան տեղեկատվական անվտանգությունը դիտարկում է որպես Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի պաշտպանության վիճակ և դա համարում անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջություն³⁹, ինչը համապատասխանում է պետության տեղեկատվական անվտանգության ռազմավարական հայեցակարգում ամրագրված՝ տեղեկատվության բնագավառում անվտանգության ապահովման սկզբունքին:

Ա.Դ. Ուրսուլը տեղեկատվական անվտանգությունը սահմանում է որպես տեղեկատվական վտանգավոր ազդեցություններից կենսագործունեության հիմնական բնագավառների պաշտպանության վիճակ⁴⁰:

Ինչ վերաբերում է հայալեզու գրականությանը, ապա նշենք, որ ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի՝ արևմտյան ու ռուսաստանյան պաշտպանական-անվտանգային տերմինաբանական-հասկացության համակարգերի համադրմամբ կազմված եռալեզու բացատրական բառարանում տեղեկատվական անվտանգությունը բացատրվում է որպես «սուբյեկտի

³⁷ Տե՛ս, «Glossary of Key Information Security Terms». Ed. by Richard Kissel. National Institute of Standards and Technology, May 2013, էջ 94:

³⁸ Տե՛ս, Лопатин В.Н. Информационное право: Учебник. СПб., 2005, էջ 474:

³⁹ Տե՛ս նույն տեղը:

⁴⁰ Урсул А.Д. Информатизация общества и безопасность развития цивилизации //Социально-политические науки. 1990. № 10:

(անհատի, հասարակության) այն վիճակը, որի դեպքում տեղեկույթի և սուբյեկտի փոխազդեցության հետևանքով սուբյեկտի մեջ առաջացած փոփոխությունը սպառնալիք չի հարուցում նրա ֆիզիկական ու հոգեկան առողջության, ինչպես նաև հասարակության ու պետության համար»⁴¹:

Տեղեկատվական անվտանգության հիմնահարցի ուսումնասիրության երկու հիմնական ուղղություն կարելի է առանձնացնել. Առաջինի համաձայն՝ հասկացությունը կարելի է սահմանել որպես հենց տեղեկատվական ռեսուրսների՝ տեղեկատվության ու տեխնոլոգիաների անվտանգություն: Այս դեպքում տեղեկատվական անվտանգության ապահովման համար կարևոր են տեղեկատվական ենթակառուցվածքի անխափան գործունեության ապահովումը, այն կանխամտածված կամ պատահական ազդեցությունից պաշտպանելը: Այլ կերպ ասած՝ այս ուղղությունը հիմնականում շոշափում է տեղեկատվական անվտանգության տեխնիկական խնդիրները և ընդունված է անվանել կիբեռանվտանգություն: Ա. Հ. Գրիգորյանը կիբեռանվտանգությունը սահմանում է որպես վիճակ, որի դեպքում կիբեռտարածությունը և դրանում եղած տեղեկույթը, տեղեկատվական համակարգերը և ենթակառուցվածքները, կատարվող տեղեկատվությունը, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներն ու դրանք օգտագործող սուբյեկտները, այլ տեղեկութահենք ու ոչ տեղեկութահենք ակտիվները պաշտպանված են կիբեռհարձակումներից⁴²:

Երկրորդ ուղղությունն ավելի լայն է և ընդգրկում է ընդհանուր անվտանգության ապահովման համար տեղեկատվական ռեսուրսների դերը, դրանց կիրառման արդյունավետությունը: Փաստորեն, այս ուղղության շրջանակում ուշադրություն են դարձվում ազգային անվտանգության ապահովման ժամանակ տեղեկատվական ռեսուրսների դերին ու նշանակությանը:

Այսպիսով, տեղեկատվական անվտանգությունը ուսումնասիրվում է նեղ և լայն առումներով: Առաջինի դեպքում շեշտը դրվում է դրա տեխնիկական բաղադրիչի վրա,

⁴¹ Տե՛ս Զիլինգարյան Դ. Ս., Երզնկյան Ե. Լ., Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Երևան 2015, էջ 76:

⁴² Գրիգորյան Ա., Կիբեռանվտանգության տեղն ու դերը տեղեկատվական անվտանգության համակարգում, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2016, հմ. 1 (87), էջ 48-55:

իսկ մյուս պարագայում ընդգրկվում են տեղեկատվական անվտանգության բոլոր սուբյեկտները, այդ թվում՝ տեղեկատվություն փոխանցողը, ստացողը, առկա ենթակառուցվածքները: Մեր կարծիքով, տեղեկատվական անվտանգության հետ կապված հարցերի ուսումնասիրության ժամանակ հարկ է կիրառել թե՛ մեկ և թե՛ մյուս մոտեցումները:

Այժմ անդրադառնանք հասկացության բովանդակությանը հայեցակարգային փաստաթղթերի շրջանակում:

Այսպես, Ռուսաստանի Դաշնության՝ 2000թ-ին ընդունված տեղեկատվական անվտանգության հայեցակարգում հասկացությունն օգտագործվում է լայն իմաստով և սահմանվում որպես տեղեկատվության բնագավառում ազգային շահերի ապահովության վիճակ, այսինքն՝ անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջություն⁴³, որտեղ անհատի շահերը տեղեկատվական ոլորտում մարդու և քաղաքացու՝ օրենքով չարգելված գործունեության իրականացման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման համար օգտագործվող տեղեկատվության հասանելիության սահմանադրական իրավունքի իրագործումն են, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և անձնական անվտանգությունն ապահովող տեղեկատվության պաշտպանությունը:

Հասարակության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են անձի շահերի ապահովումը, ժողովրդավարության ամրապնդումը, իրավական-սոցիալական պետության կառուցումը, Ռուսաստանի հոգևոր վերարտադրությունը:

Իսկ պետության շահերը ընդգրկում են Ռուսաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անխախտելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով անձի և քաղաքացու տեղեկատվություն ստանալու և օգտագործման բնագավառում նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների

⁴³ Доктрина информационной безопасности Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В. Путиным 9 сентября 2000 г., № Пр-1895, <http://www.scrf.gov.ru/documents/5.html> (վերջին մուտքը՝ 15.10.2017)):

իրականացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը⁴⁴:

Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 2009թ. հաստատած տեղեկատվական անվտանգության հայեցակարգում հանդիպում ենք համարյա նույն սահմանմանը, ինչ ՌԴ՝ 2000թ-ին ընդունված տեղեկատվական անվտանգության հայեցակարգում: Միայն հասարակության շահերը թվելիս գումարվում են հայ ինքնության հիմնասյուների՝ բարոյահոգեբանական կերտվածքի, հայոց լեզվի և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերի ամրապնդումը, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության տեղեկատվական կապի ապահովումը⁴⁵:

ԱՄՆ նորմատիվային փաստաթղթերում մինչև 2001 թվականը «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը շատ քիչ էր օգտագործվում: Կարևորվում է «Համակարգչային անվտանգության վերաբերյալ»⁴⁶ օրենքի դերը, որի նպատակն է նվազագույն գործողություններով ապահովել երկրի համակարգչային ցանցերում տեղեկատվության անվտանգությունը:

Արդեն 2002 թվականին ԱՄՆ-ում ընդունվեց օրենք «Տեղեկատվական անվտանգության կառավարման վերաբերյալ», որտեղ տեղեկատվական անվտանգությունը սահմանվում էր որպես⁴⁷.

- Անթույլատրելի մուտքից, օգտագործումից, բացահայտումից, տարածումից, ձևափոխումից կամ ոչնչացումից տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի պաշտպանություն,
- ոչ իրավական փոփոխությունից կամ ոչնչացումից տեղեկատվության ամբողջականության ապահովում,
- գաղտնիության ապահովում, որը նշանակում է տեղեկատվության հասանելիության ու տարածման հաստատված սահմանափակումների աջակցություն, այդ թվում՝ անձնական կյանքի և սեփականության տվյալների գաղտնիություն,

⁴⁴ Տե՛ս նույն տեղը:

⁴⁵ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559>, վերջին մուտքը՝ 20.02.2017թ.)

⁴⁶ «Computer Security Act of 1987», Public Law 100-235 (H.R. 145), January 8, 1988

⁴⁷ «The Federal Information Security Management Act of 2002»

- հասանելիություն, որը նշանակում է արագ և հուսալի մուտք դեպի տեղեկատվություն:

ԱՄՆ 2015թ. «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ տեղեկատվական անվտանգության հիշատակումը համապատասխանում է նրա նեղ իմաստին, այն է՝ կիրեռանվտանգությանը, որի առանձին բաժնում մասնավորապես նշվում է. «Որպես համացանցի ծննդավայր՝ Միացյալ Նահանգներն ունի ցանցային աշխարհին առաջնորդելու հատուկ պատասխանատվություն: Ավելի ու ավելի է աճում բարեկեցության ու անվտանգության կախումը բաց, համագործակցելի, պաշտպանված և հուսալի համացանցից: Մեր տնտեսությունը, ապահովությունը և առողջությունը փոխկապված են ցանցային ենթակառուցվածքով, որը դարձել է պատասխանատվությունից խուսափելու ձգտող թշնամական պետական, քրեական և անհատ ղեկավարների թիրախ: Հենվելով կիրեռանվտանգության կամավոր հայեցակարգի վրա՝ մենք պաշտպանում ենք Դաշնության ցանցերն ու մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ աշխատում ամրապնդել ԱՄՆ համար կենսականորեն կարևոր ենթակառուցվածքի անվտանգությունն ու կայունությունը»⁴⁸: Նույն փաստաթղթի «Արժեքներ» բաժինը նվիրված է ներքին և արտաքին տեղեկատվաքարոզչական աշխատանքին, համընդհանուր տեղեկատվական դաշտում ամերիկյան տեղեկատվական միջոցների հաստատութենական ներկայացվածությանը, «փափուկ ուժի» մշտական գործարկմանը: Այստեղ արդեն տեղեկատվական անվտանգության խնդիրները քննարկվում են լայն իմաստով:

Փաստորեն, ԱՄՆ հիմնական նորմատիվային փաստաթղթերում տեղեկատվական անվտանգությունը ցանցի կամ համակարգի կարողությունն է՝ հակազդելու այն չարամիտ գործողություններին, որոնք կարող են խախտել տեղեկատվության հասանելիությունը, ամբողջականությունն ու գաղտնիությունը: Իսկ անվտանգության ապահովումը սահմանվում է որպես տեղեկատվության հասանելիություն, ամբողջականություն, գաղտնիություն:

⁴⁸ Տե՛ս «National Security Strategy». The White House, February 2015, էջ 12–13 (https://www.whitehouse.gov/sites/default/files/docs/2015_national_security_strategy.pdf, վերջին մուտքը՝ 14.05.2017թ.):

Այսպիսով, եթե Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում հստակ նշվում է, որ այն տեղեկատվության բնագավառում պետության ազգային շահերի պաշտպանության վիճակն է, որը բնութագրվում է անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջությամբ, ապա ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգությունը ցանցի կամ համակարգի կարողությունն է՝ հակազդելու այն չարամիտ գործողություններին, որոնք կարող են խախտել տեղեկատվության հասանելիությունը, ամբողջականությունն ու գաղտնիությունը:

Ընդհանուր առմամբ, տեղեկատվական հասարակության համար տեղեկատվական անվտանգությունը կառավարման ուսումնասիրվող համակարգի վիճակն է, որի ժամանակ դրա տեղեկատվական ենթակառուցվածքը չի խախտվում ներքին ու արտաքին սպառնալիքների ազդեցությունից:

Այսպիսով, ի սկզբանե «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը օգտագործվում էր տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման համատեքստում՝ համակարգչային ցանցերի միջոցով ծագած խնդիրների վերհանման նպատակով, իսկ հետագայում արդեն ավելի ընդգրկուն դարձավ՝ դուրս գալով բացառապես տեխնոլոգիական բնագավառին առնչվող շրջանակներից:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է տալ «տեղեկատվական անվտանգության» այնպիսի սահմանում, որը կընդգրկի հասկացության սահմանման և՛ լայն, և նե՛ղ մոտեցումները: Ուստի այդ տեսակետից ավելի ընդունելի ենք համարում հասկացության սահմանման Ե. Ա. Ռոգովսկու հետևյալ սահմանումը. ««Տեղեկատվական անվտանգությունը» տեղեկատվական տարածքում անհատի, հասարակության ու պետության շահերի պաշտպանության վիճակն է կանխամտածված կամ պատահական ազդեցություններից, որոնք խախտում են տեղեկատվության կամ տեղեկատվական-հաղորդակցային ենթակառուցվածքի ամբողջականությունը, օբյեկտիվությունը, հասանելիությունը, գաղտնիությունը⁴⁹»:

Սահմանումն ընդգրկում է տեղեկատվական անվտանգության ապահովման ինչպես տեխնիկական (տեղեկատվական համակարգերի, սարքավորումների և

⁴⁹ Տե՛ս, Роговский Е. А. США: информационное общество.- М.: Международные отношения, 2008, էջ 396:

տեխնոլոգիաների անվտանգությունը), այնպես էլ բարոյահոգեբանական (տեղեկատվական տարածքում անհատի, հասարակության ու պետության շահերի պաշտպանությունը) գործոնները:

Այսպիսով, ամփոփելով վերը ասվածը, կարող ենք եզրակացնել, որ «տեղեկատվական անվտանգության» հիմնական էությունը տեղեկատվության անվտանգության ապահովումն է՝ տեղեկատվական փոխազդեցության սուբյեկտների պաշտպանվածությունը բացասական ազդեցությունից, սոցիալական սուբյեկտների տեղեկատվական պահանջմունքների բավարարումը: Այդ ամենին կարելի է հասնել նախևառաջ հասարակության ու դրա սուբյեկտների համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում բացասական ազդեցության ուսումնասիրմամբ, որը կնպաստի դրանց վնասակար ազդեցության հաղթահարմանը և ապահով տեղեկատվական միջավայրի ձևավորմանը:

Ավելին, անհրաժեշտ է հատուկ կարևորել տեղեկատվական անվտանգությունը հանրային անվտանգության ապահովման համատեքստում: Հանս Մորգենթաուն հասարակության բարոյահոգեբանական վիճակը համարում էր պետական հզորության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Ուստի այս շրջանակում կարևոր է հանրության բարոյահոգեբանական անվտանգության ապահովումը տեղեկատվական ներքին և արտաքին սպառնալիքներից:

1.2. Տեղեկատվական սպառնալիքների առաջացման առանձնահատկություններն ու դրսևորումները համաշխարհայնացման համատեքստում

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում մարդկությանը ծանոթ է եղել միասնական կենտրոնից համաշխարհային կարգուկանոնի հաստատման և մարդկային կենսագործունեության կառավարման գաղափարը:

Ավելին, Առաջին համաշխարհային պատերազմից հետո մի շարք մտածողների կողմից սկսեց լայնորեն ուսումնասիրվել միասնական համամարդկային «ապագայի ազգի» ստեղծման գաղափարը: Այսպես, 1914թ. անգլիացի գրող, հրապարակախոս Հերբերտ Ուելսը պատերազմի նման աղետներից, միլիոնավոր մարդկային զոհերից խուսափելու համար կոչ է արել բոլոր ազգերին հրաժարվել անկախությունից և իշխանությունը փոխանցել Համաշխարհային կառավարությանը:

21-րդ դարում միջպետական ու ոչ պետական դերակատարների մուտքը միջազգային քաղաքական դաշտ պետությունների համար նոր մարտահրավերներ ստեղծեցին, ի հայտ եկան անվտանգության նոր սպառնալիքներ: Վերոհիշյալին գումարվեց նաև 21-րդ դարասկզբին խորը ֆինանսական–տնտեսական ճգնաժամը: Նման պայմաններում, գլոբալացման գործընթացները, որոնք պետությունների մեծամասնության համար ընկալվում են որպես ընդհանուր փոփոխություններ սոցիալական, քաղաքական, տնտեսական ու մշակութային բնագավառներում, ընդհանուր առմամբ ընկալվեցին որպես մարդկության զարգացման որոշակի ուղի:

«Համաշխարհայնացում» («գլոբալացում») հասկացությունը (անգլ. Global-համընդհանուր, որը երկրագունդն ընդգրկող) հասարակական գիտակցության մեջ լայնորեն ներմուծվել է 20-րդ դարի 70-ական թվականներին: Գլոբալացումը լայնորեն կիրառվող եզրույթ է և կարելի է սահմանել որպես միասնական աշխարհը կազմող գործընթացների ամբողջություն, որի արդյունքում հասարակությունը փոխկապակցվում է տարբեր բնագավառներում՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն⁵⁰:

⁵⁰ Merriam, S.B., Caffarella, R.S., & Baumgartner, L.M. Learning in adulthood: A comprehensive guide (3rd ed.). San Francisco, CA: Jossey-Bass, 2007.

Գլոբալացումը բնական պատմական գործընթաց է: Այն դիտարկվում է որպես էվոլյուցիայի արդյունք, որը շարունակվելու է զարգանալ: Որոշ հեղինակներ աշխարհը համարում են «համաշխարհային գյուղ», որը ձգտում է ապագայի տիեզերական համաշխարհային հասարակության ձևավորմանը⁵¹: Այլ հեղինակներ գլոբալացումը ներկայացնում են որպես նոր՝ տնտեսական, ռասսայական, էկոլոգիական և այլ խտրականության ու էքսպլուատացիայի արդյունք: Այս տեսանկյունից գլոբալացումը ներկայացվում է որպես «համաշխարհային ապարտեիդի» դարաշրջան⁵²:

Գլոբալացում հասկացության միասնական սահմանում չկա, քանզի կան եզրույթի ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումների հակասություններ:

Առանձնացվում են գլոբալացման հետևյալ հիմնական տեսակները՝

- Գլոբալացում տնտեսական հարաբերությունների ոլորտում,
- Գլոբալացում քաղաքական հարաբերությունների ոլորտում,
- Տեղեկատվական գլոբալացում,
- Մշակութային-գաղափարական գլոբալացում:

Գլոբալացման արդյունքում ձևավորվում է այնպիսի համաշխարհային քաղաքական համակարգ, որտեղ առաջնային դիրքերում ոչ թե ռազմական կամ տնտեսական ներուժ ունեցող երկրներն են, այլ նրանք, որոնք կարողանում են տնտեսական ներուժն օգտագործել սեփական ազդեցության գոտիների ընդլայնման և արդյունավետ տեղեկատվական քաղաքականության մշակման և իրականացման գործում: Այս ամենը անհնար է առանց տեղեկատվական գերիշխանության կամ տեղեկատվական օպերացիաների իրականացման:

Այսպիսով, գլոբալացումը բնական գործընթաց է, որը շոշափում է մարդկային կենսագործունեության բոլոր բնագավառները: Որպես դրա հետևանք, աշխարհը դառնում է ավելի միասնական հասարակություն: Գլոբալացումը բարդ գործընթաց է և որպես ցանկացած բարդ գործընթաց՝ ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր:

Նախ անդրադառնանք երևույթի դրական կողմերին. այսպես, համաշխարհային տնտեսության ինտեգրումը նպաստում է արտադրության աճին, զարգացող երկրների տնտեսական պայմանների բարելավմանը: Քաղաքական ինտեգրումը թույլ է տալիս

⁵¹ Beck U., *Cosmopolitan Vision*. Cambridge: Polity Press. 2006, p.16.

⁵² Alexander T. *Unravelling Global Apartheid: An Overview of World Politics*. Cambridge: Polity Press. 1996:

կանխարգելել ռազմական հակամարտությունները, հարաբերական կայունություն ապահովել, սոցիալական բնագավառում օգնում է ժողովրդավարական սկզբունքներ տարածել⁵³: Որպես գլոբալացման բացասական հետևանք՝ տեղեկատվական անվտանգության խնդիրներն են:

Տեղեկատվական գլոբալացումը ինտեգրացվող գործընթացների ամենաակնառու ցուցանիշներից է, որն իրականացվում է գլոբալիզացիայի շրջանակներում ու դրա ազդեցությամբ:

Բանն այն է, որ գլոբալացման ժամանակ տեղեկատվական ու հեռահաղորդակցային բնագավառում տեղի ունեցած գիտատեխնիկական հեղափոխության արդյունքում միասնական համաշխարհային տեղեկատվական համակարգի ստեղծումն անխուսափելի է: Արդյունքում տեղի է ունենում ինդուստրիալ հասարակությունից դեպի տեղեկատվական հասարակություն անցում: Ժամանակակից տեխնոլոգիաները փոխել են ժամանակի ու տարածության մասին պատկերացումները: Ներկայումս մարդկանց համար հնարավորություն է ստեղծվել անընդհատ կապ հաստատել մի մայրցամաքից մյուսը, ցանկացած տարածության վրա զրուցակցի հետ խոսել «դեմ առ դեմ», ակնթարթորեն փնտրել ու ստանալ կամայական տեղեկատվություն: Ավելին, հասարակական կարծիքի ձևավորումն այսօր տեղի է ունենում տեղեկատվական ռեսուրսների միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են տվյալների բազա, տեղեկատվություն ու տեղեկատվական հոսքեր պարունակող ենթակառուցվածք:

Հայտնի է, որ պետության հզորության ավանդական ցուցիչների հետ մեկտեղ, ինչպիսիք են տարածքը, բնական ռեսուրսները, մարդկային կապիտալը, տնտեսության զարգացման մակարդակը, գիտական ներուժը, զինված ուժերի մարտունակությունն և այլն, գլոբալացումն առաջին պլան է մղում ուժի նոր գործոններ: Մասնավորապես, այսօր բացառիկ դեր է հատկացվում տեղեկատվությանը, հաղորդակցությանը և տեղեկատվական տեխնոլոգիաներին, իսկ տեղեկատվական քաղաքականությունը

⁵³ Տե՛ս, Холина О.И., Понарина Н.Н. Глобализация человеческого общества: от изоляции к глобализации // В сборнике: Новые парадигмы общественного развития: экономические, социальные, философские, политические, правовые, общенаучные тенденции и закономерности Материалы международной научно-практической конференции в 4 частях. Ответственные редакторы: Н.Н. Понарина, С.С. Чернов. 2016, էջ 108-110:

սկսել է դիտվել որպես պետական քաղաքականության կարևոր բաղադրիչ: Մի շարք երկրներում՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իրանում, Չինաստանում, Գերմանիայում արդեն գոյություն ունեն հատուկ նախարարություններ, գործակալություններ կամ կիբեռպաշտպանության կենտրոններ, որոնց նպատակը տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված պետական ու ռազմական կառավարման ամբողջականությունն ու անխափանելիությունը ապահովելն է:

Միաժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և հասարակական գործունեության տարբեր բնագավառներում դրանց կիրառման հետևանքով փոփոխվել են նաև տեղեկատվական անվտանգության սպառնալիքները:

Տեղեկատվական սպառնալիքները կարող են հիմք հանդիսանալ այնպիսի գործողությունների համար, որոնք արտահայտվում են տեղեկատվական պատերազմների, տեղեկատվական գրոհների, տեղեկատվական շանտաժի, հակերության, տեղեկատվական-հաղորդակցային համակարգերի խափանման, լրտեսության, գաղտնի տեղեկությունների հրապարակայնացման և այլ ձևերով:

Այժմ առավել հաճախ քան երբևէ բախվում ենք այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են կիբեռհանցագործությունները, կիբեռահաբեկչությունը, տեղեկատվական պատերազմները: Հարկ է նկատել, որ շատ երկրներում զգալիորեն աճել է համակարգչային տվյալների կիրառմամբ իրականացվող հանցագործությունների թիվը: Համաձայն «Կասպերսկի լաբորատորիայի» տվյալների, ամեն տարի մինչև յոթանասուն հազար վնասակար ծրագիր է ի հայտ գալիս: Զգալիորեն ընդլայնվել է այն հանցագործությունների ցանկը, որոնք քաղաքացիների, կազմակերպությունների, պետությունների համար սպառնալիք են հանդիսանում: Դրանք են՝ բանկային հաշիվներից դրամական միջոցների շորթումը, պետական ու կոմերցիոն գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն անօրինական մուտքը և այլն: Կիբեռհանցագործությունը «վիրտուալ տարածքում» իրականացվող հանցագործությունն է⁵⁴: Ընդ որում, այն սպառնում է ոչ միայն համացանցից օգտվողներին, այլև հանրության բոլոր անդամներին: Կիբեռհանցագործները հնարավորություն ունեն գործել առանց տարածական սահմանների

⁵⁴ Տե՛ս, Голубев В. «Кибертерроризм» — миф или реальность?» (<http://www.crime-research.org>, վերջին մուտքը՝ 10.03.2017թ.):

սահմանափակության: Դա վկայում է այն մասին, որ անդրազգային հանցագործությունները գործունեության նոր բնագավառներ են ընդգրկում, այդ թվում՝ տեղեկատվական:

Բացի այդ, համացանցային պայքարն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք առավել դյուրին կիրառելի են դարձնում այն. նախ՝ ցանցային պայքարի համար պետք չեն մեծ նյութական միջոցներ և անձնակազմ: Երբեմն կարելի է արդյունավետ գործել միայն մեկ մասնագետի, համակարգչի և հեռախոսակապի միջոցով:

Երկրորդ առավելությունը ազդեցության աղբյուրի գաղտնիությունն է: Համացանցում գործողություններ (այդ թվում՝ ագրեսիա) կարող են իրականացնել տարբեր մարդիկ, կազմակերպություններ, հետախուզական ծառայություններ, ինչպես նաև խուլիգանական խմբեր, և այլն: Այդ պատճառով, գործողության աղբյուրը ստույգ որոշելը բավականին դժվար է:

Երրորդը վերաբերում է համացանցային պայքարի հոգեբանական ազդեցության հնարավորություններին. համացանցային պայքարը միաժամանակ տեքստային, ատլիոն և վիզուալ ազդեցության հնարավորություն է ընձեռում, ինչը հնարավոր չէ մի շարք ՁԼՄ-ների պարագայում:

Չորրորդ առավելությունը լայն զանգվածների ընդգրկվածությունն է. համացանցում տեղադրված նյութը կարող են դիտել կամ կարդալ միլիոնավոր մարդիկ աշխարհի տարբեր ծայրերից:

Դժվար է պատկերացնել այն վնասը, որը կարող է հասցվել երկրում պահվող համակարգչային տեղեկատվությանը: Հակերների կողմից այդ տեղեկատվությանը տիրապետելը և երրորդ անձնաց տրամադրելը հիմք են հանդիսանում համակարգչային ահաբեկչության համար: Կիբեռաահաբեկչությունը կարելի է սահմանել որպես տեղեկատվական համակարգի վրա գրոհ: Ընդ որում, հակերների գործունեությունը տեղեկատվական տարածության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ կերպ. ակտիվություն, հակերություն և կիբեռաահաբեկչություն: Ակտիվիզմը կիբեռտարածության «լեգիտիմ» օգտագործումն է՝ սեփական գաղափարների պրոպագանդայի, փող աշխատելու համար: Հակերության տակ հասկանում ենք

հակերային գրոհները, որոնք իրականացվում են առանձին համակարգչային ցանցերը կամ ինտերնետ կայքերը խափանելու համար, իսկ կիբեռհակաբեկչությունը ծրագրավորված համակարգչային գրոհն է, որը նպատակ ունի մաքսիմալ վնաս հասցնել տեղեկատվական ենթակառուցվածքի կենսական կարևոր օբյեկտներին⁵⁵: Այստեղ հարկ է առանձնացնել նաև «տեղեկատվական ահաբեկչություն» հասկացությունը, որը հոգեբանական վտանգավոր գործողություն է, որի նպատակը ոչ ճշմարիտ տեղեկատվության միջոցով մարդկանց մոտ սխալ պատկերացում ստեղծելն է⁵⁶:

Քսանմեկերորդ դարաշրջանում աշխարհը վերածվում է այնպիսի տարածության, որտեղ իրականացվում են տեղեկատվական պատերազմներ: ԱՄՆ պաշտպանության նախարարության գաղտնի փաստաթղթերում դեռևս ԽՍՀՄ-ԱՄՆ «սառը պատերազմի» տարիներին օգտագործվել է «տեղեկատվական պատերազմ» ձևակերպումը, որտեղ տեղեկատվական պատերազմների տակ հասկացվում են այնպիսի գործողություններ, որոնք ձեռնարկվում են ազգային ռազմական ռազմավարությանն օժանդակելու նպատակով՝ հակառակորդի տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի վրա ներազդման միջոցով տեղեկատվական գերիշխանության հասնելու համար՝ սեփական տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի անվտանգության և պաշտպանության համաժամանակյա ապահովմամբ⁵⁷:

Կարելի է եզրակացնել, որ տեղեկատվական պատերազմները ներառում են ոչ միայն տեղեկատվական հարձակումներ, այլև տեղեկատվական պաշտպանություն և անվտանգություն:

«Տեղեկատվական պատերազմների» ռուս հայտնի մասնագետ Ի. Պանարինը գրում է, որ «Տեղեկատվական հակամարտությունը կողմերի միջև պայքարի ձև է, որն իրենից ներկայացնում է հատուկ ազդեցության միջոցների (քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական և այլն) և մեթոդների կիրառում

⁵⁵ Mozolin, O. V. (2008). Publicly-legal aspects of international regulation in the Internet. [Thesis of scientific research]. Moscow (<http://lawlibrary.ru/article2077537.html>, վերջին մուտքը՝ 06.07.2017թ.):

⁵⁶ Антюхов В.И., Жуков Ю.И., Кадулин В.Е., Примакин А.И. Информационный терроризм: прошлое, настоящее и будущее. — СПб.: МВД России, 2000.

⁵⁷ Основы национальной безопасности: учеб. пособие для студ.высш. проф. учеб. заведений / [Л.А. Михайлов]-М.: Издательство центр «Академия», 2008. С. 92.

հակառակորդի տեղեկատվական դաշտի վրա սեփական նպատակներին հասնելու համար»⁵⁸:

Տեղեկատվական պատերազմների իրականացման հիմնական հարթակ են հանդիսանում զանգվածային լրատվամիջոցները, քանզի զանգվածների գիտակցության վրա գաղտնի ազդեցություն գործելով կարող են լսարանի վարքը վերահսկել, զրկել նրան ընտրության հնարավորությունից և այլն: Հենց զանգվածների գիտակցության մանիպուլյացիան է հոգեբանական ու տեղեկատվական պատերազմների հիմնական բաղադրիչը:

Այսպիսով, ժամանակակից հասարակությունը կարիք ունի ոչ միայն տեղեկատվություն ստանալու, այլև բացասական տեղեկատվությունից պաշտպանվելու: Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող հանցագործությունները նոր մարտահրավերներ նետեցին ժամանակակից պետություններին, ուստի տեղեկատվական անվտանգության ապահովումը դարձավ առաջնայնություն: Նման պայմաններում ժամանակակից ցանկացած պետություն կարիք ունի տեղեկատվական-հոգեբանական պատերազմների հակազդեցության արդյունավետ մեխանիզմների:

Տեղեկատվական անվտանգության ապահովման ժամանակ կարևորը սպառնալիքների բացահայտումն է: Սակայն մինչ սպառնալիքներին անդրադառնալը, նախ տարբերենք «սպառնալիք», «ռիսկ» և «վտանգ» հասկացությունները:

Վտանգի սահմանման տարբեր մոտեցումներ կան: Մեզ համար կիրառելի է Օ.Ա. Բելկովի սահմանումը, ըստ որի վտանգը սոցիումի վրա բացասական ազդեցություն գործելու օբյեկտիվորեն գոյություն ունեցող հնարավորությունն է, որի արդյունքում նրան կարող է վնաս հասցվել, որը կարող է կամ վատացնել նրա վիճակը, կամ էլ նրա զարգացմանն անցանկալի աճ հաղորդել⁵⁹: Ընդ որում, վտանգը հստակ գիտակցվում է, բայց դրա իրականացումը կամ վնաս հասցնելը պարտադիր չէ: Այն սահմանվում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների առկայությամբ, որոնք հնարավորություն ունեն վնաս հասցնելու: Քանի որ վտանգը հնարավոր է կանխատեսել, ուստի կարելի է

⁵⁸ Панарин И.Н., СМИ, пропаганда и информационные войны, (<http://lib.rus.ec/b/358612/read#t32>, վերջին մուտքը՝ 05.05.2017թ.):

⁵⁹ Ст'ю, Бельков О.А. Понятийно категориальный аппарат концепции национальной безопасности // Безопасность, №3, 1994, էջ 91:

ժամանակին կանխել կամ նվազագույնի հասցնել դրա բացասական հետևանքը՝ դրանով հանդերձ պաշտպանելու տեղեկատվության բնագավառում սուբյեկտի շահերը:

Տարբեր հեղինակների վտանգների դասակարգման տարբեր չափանիշներ են կիրառում: Ըստ վտանգի հասցրած բացասական հետևանքների մասշտաբների՝ առաձնացվում են միջազգային, ազգային, տեղական ու մասնավոր վտանգներ, ըստ վտանգի իրականացման հավանականության աստիճանի՝ ռեալ ու հնարավոր և այլն:

Ինչ վերաբերում է «ռիսկ» հասկացությանը, ապա այն հենց սուբյեկտի գործունեության անցանկալի հետևանքների առաջացման հնարավորությունն է: Եթե վտանգը ցույց է տալիս վնասի հասցման հնարավորությունը, ապա ռիսկը հստակեցնում է վնասի բովանդակությունը, հավանականությունը, ծանրությունը: Այսինքն ռիսկը չափելի է: «Սպառնալիքը» վտանգի ավելի հստակ ձև է կամ պայմանների ու գործոնների ամբողջություն, որոնք վտանգ են ստեղծում քաղաքացու, հասարակության ու պետության համար, ինչպես նաև ազգային արժեքներին ու ազգային կենսակերպին:

Սպառնալիք ու վտանգ հասկացությունները թեև փոխկապակցված են իրար հետ, բայց նույն կատեգորիաները չեն:

Ըստ Մ.Ֆ. Գացկոյի, սպառնալիքը վտանգից տարբերվում է վնաս հասցնելու պատրաստ լինելու աստիճանով: Եթե վտանգի ժամանակ սուբյեկտների միջև առաջացած հակասությունների դեպքում նրանցից մեկը կարող է, բայց դեռ պատրաստ չէ ուժ կիրառել, ապա սպառնալիքը դիտվում է որպես հակասությունների ծայրահեղ սրման փուլ, երբ հակամարտող կողմերից մեկը իր շահերին հասնելու համար ուժ է կիրառում: Բացի այդ, սպառնալիքը հստակ անձնավորված բնույթ ունի, մինչդեռ վտանգի օբյեկտն ու սուբյեկտը հաճախ արտահայտված չեն: Եթե վտանգը իր մեջ ներառում է այս կամ այն սուբյեկտի շահերին վնաս հասցնելու պոտենցիալ սպառնալիք, ապա սպառնալիքը հենց վնաս հասցնելն է, իսկ դրա իրականացման ժամկետները կախված են միայն այդ սպառնալիքն իրականացնելու համար անհրաժեշտ որոշում կայացնելու գործընթացից⁶⁰: Ըստ որոշ հեղինակների, սպառնալիքը գործոնների ու պայմանների ամբողջություն է, որոնք վտանգ են

⁶⁰ Տե՛ս, Гацко М. Ф. Угрозы интересам национальной безопасности России и проблема их предотвращения: Автореферат кандидатской диссертации доктора философских наук. М., 1996, էջ 9-10:

ներկայացնում անհատի, հասարակության ու պետության կենսական կարևոր շահերին⁶¹:

Սպառնալիքը, ըստ իր աղբյուրի, կարող է լինել արտաքին և ներքին, ըստ ներազդման ոլորտի՝ համաչափ և անհամաչափ: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի 2009թ. հրատարակած Անվտանգային-պաշտպանական բառարանում արտաքին անհամաչափ սպառնալիքը սահմանվում է որպես սպառնալիք, որի աղբյուրներն են տվյալ պետության սահմաններից դուրս գտնվող ոչ պետական կառույցները՝ ներառյալ հասարակական, կրոնական, ահաբեկչական կազմակերպությունները, ինչպես նաև այլ պետությունների տարածքում տեղի ունեցող կործանարար բնական ու տեխնածին աղետները և տարածված համաճարակները: Արտաքին համաչափ սպառնալիքը բնութագրվում է որպես սպառնալիք, որի աղբյուրն է մեկ այլ պետություն (պետությունների դաշինք) կամ նրա որևէ կառույց: Ներքին անհամաչափ սպառնալիքը, նույն բառարանի համաձայն, այն սպառնալիքն է, որի աղբյուրներն են տվյալ պետության տարածքում գործող ոչ պետական կառույցները, ինչպես նաև պետության կողմից անվերահսկելի երևույթներն ու գործընթացները: Եվ վերջապես ներքին համաչափ սպառնալիքը սահմանվում է որպես սպառնալիք, որի աղբյուրը պետությունն ինքն է՝ իր ոչ բավարար զարգացածության պատճառով⁶²:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տեղեկատվական ռիսկերը և մասամբ տեղեկատվական վտանգները, իրենցից ներկայացնում են հավանական վտանգավոր մտադրություններ ու գործունեություն, որոնք կարող են որոշակի վնաս հասցնել տեղեկատվական միջավայրի սուբյեկտներին: Իսկ տեղեկատվական սպառնալիքները հանդիսանում են տեղեկատվական սուբյեկտների և անհատի, հասարակության ու պետության կենսագործունեության այլ բնագավառների համար վնաս հասցնելու իրական պատրաստակամություն:

⁶¹ Տե՛ս, Вашекин, Н. П. Безопасность и устойчивое развитие России / Н. П. Вашекин, М. И. Дәлиев, А. Д. Урсул. – М. : ИНФРА-М, 1998, էջ 45:

⁶² ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2009թ. «Աշխատանքային տետրեր» հավելվածի հատուկ թողարկում, էջ 102-103:

Ակնհայտ է, որ սուբյեկտի տեղեկատվական անվտանգության ապահովման համար հենց տեղեկատվական սպառնալիքներն են հիմնական խնդիր հանդիսանում:

Այժմ անդրանառնանք գլոբալացման ժամանակ հիմնական սպառնալիքներին: Վերջիններիս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ուղղված չեն համաշխարհային տեղեկատվական տարածության հստակ սուբյեկտի վրա: Այլ կերպ ասած, համաշխարհային տեղեկատվական սպառնալիքներն անհատականացված չեն և բոլորին են վերաբերում: Օրինակ, տեղեկատվական անվտանգության համար որպես նման սպառնալիք կարող է դառնալ որևէ համաշխարհային համակարգչային վիրուս:

Մեր կարծիքով, կարելի է առանձնացնել տեղեկատվական հասարակության անվտանգության սպառնալիքների մի քանի հիմնական աղբյուրներ, որոնք շոշափում են ինչպես առանձին անհատի, այնպես էլ հասարակության ու պետության շահերը:

Ըստ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակազմի, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ⁶³: Անհատի շահերը տեղեկատվական ոլորտում մարդու և քաղաքացու՝ օրենքով չարգելված գործունեության իրականացման, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման համար օգտագործվող տեղեկատվության հասանելիության սահմանադրական իրավունքի իրագործումն է, ինչպես նաև շրջակա միջավայրի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և անձնական անվտանգությունն ապահովող տեղեկատվության պաշտպանությունը:

Հետևապես, անհատի վերոհիշյալ շահերին որպես վտանգավոր սպառնալիք կարելի է առանձնացնել մարդու գիտակցության մանիպուլյացիան՝ նրա շուրջը «վիրտուալ տեղեկատվական տարածություն» ստեղծելով: Անհատի տեղեկատվական անվտանգության սպառնալիքը արտաքին գործոն է, որը մարդու հոգեկանի վրա բացասական տեղեկատվական-հոգեբանական ազդեցություն ունի, ինչի արդյունքում մարդն ամբողջովին կամ մասնակի կորցնում է կարողությունը՝

- Լիարժեք զարգանալու,

⁶³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559> (վերջին մուտքը՝ 20.02.2017թ.):

- Սահմանադրությամբ երաշխավորված իրեն վերապահված քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները ամբողջ ծավալով իրականացնելու,
- Ժամանակին հարմարվելու փոփոխվող սոցիալական պայմաններին,
- Սոցիալական միջավայրում իր վարքը կազմակերպելու,
- Հասարակության մեջ բավարարելու իր հիմնական պահանջմունքները՝ այլ մարդկանց ու սոցիալական ինստիտուտների շահերը հաշվի առնելով:

Անհատի շահերին մյուս կարևոր սպառնալիքը նրա անձնական տվյալների օգտագործումն է, անհատական ու ընտանեկան գաղտնիքի, մասնավոր կյանքի մասին տեղեկությունների հրապարակայնացումը՝ ի վնաս նրա շահերի: Ընդ որում, նման տեղեկատվությունը կարող է հավաքագրվել նաև պետական իշխանության մարմինների կողմից: Նման սպառնալիքների հակազդելու համար անհրաժեշտ է մշակել ու իրականացնել նման տվյալների պաշտպանության գործող իրավական մեխանիզմներ:

Հասարակության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են անձի շահերի ապահովումն այդ ոլորտում, ժողովրդավարության ամրապնդումը, իրավական-սոցիալական պետության կառուցումը, հասարակական համաձայնության և հանդուրժողականության հաստատումը:

Տեղեկատվության բնագավառում հասարակության շահերը կայանում են անհատի կենսական կարևոր շահերի պաշտպանության, սոցիալական կայունության և տնտեսական զարգացման մեջ: Հետևապես, տեղեկատվության բնագառավում հասարակության շահերի սպառնալիքներից կարող է հանդիսանալ տեղեկատվական ու հաղորդակցային համակարգերի, կապի միջոցների, հասարակական կյանքի կենսական կարևոր նշանակություն ունեցող օբյեկտների տեղեկատվական բաղկացուցիչների բարդացումը: Այստեղ վտանգավոր է նաև զանգվածային լրատվամիջոցների հնարավոր կենտրոնացումը մարդկանց մի խմբի ձեռքում, որի արդյունքում տեղեկատվական սպառնալիքները կարող են ի հայտ գալ հասարակական կարծիքի մանիպուլյացիայի տեսքով, ինչպես նաև հասարակության հոգևոր արժեքների ոչնչացմամբ՝ նրան օտար արժեքներ մատուցելով:

Պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են միասնական տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառման և զարգացման, սահմանադրական կարգի, պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անխախտելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով անձի և քաղաքացու տեղեկատվության ստացման և օգտագործման բնագավառում նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Տեղեկատվության բնագավառում պետության շահերին առավել վտանգավոր սպառնալիքը «տեղեկատվական զենքի» անվերահսկելի տարածումն է, «տեղեկատվական պատերազմների» իրականացումը:

«Տեղեկատվական զենքն» իրենից ներկայացնում է մեթոդների, միջոցների ու տեխնոլոգիաների ամբողջություն, որը որոշակի քաղաքական նպատակների հասնելու համար հակառակորդ կողմի տեղեկատվական միջավայրի վրա ուժային ազդեցության հնարավորություն ունի: Նման սպառնալիքները կարող են ի հայտ գալ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության հակաօրինական ստացման կամ այլ գաղտնի տեղեկատվության տեսքով, որի բացահայտումը կարող է վնաս հասցնել պետության շահերին:

Այսպիսով, քսանմեկերորդ դարաշրջանի աշխարհաքաղաքական նոր իրադարձությունների պայմաններում փոփոխվել են նախկին վտանգների ու սպառնալիքների մասշտաբները, բնույթը: Տեղեկատվության բնագավառում անհատի, հասարակության ու պետության կենսական կարևոր շահերի համար իրական վտանգ են պարունակում տեղեկատվական սպառնալիքները, ուստի պետությունների համար բավականին բարդացել է տեղեկատվական անվտանգության ապահովումը:

Նոր քաղաքական հակամարտությունների կանխարգելման համար յուրաքանչյուր պետության գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է դառնա տեղեկատվական անվտանգության ապահովումը և պատահական չէ, որ այժմ պետությունները համապատասխան քաղաքականություն են մշակում տեղեկատվական

անվտանգության ապահովման ուղղությամբ: Ուստի արդիական է դառնում ոչ միայն ազգային, այլև միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովումը: Բացի այդ, պետությունների համար կարևոր է նաև գլոբալ սպառնալիքներին հակազդելու համար համապատասխան ռազմավարության մշակումը: Այս շրջանակում որոշ պետություններ ավելի լիբերալ մեթոդներ են որդեգրում, մյուսները՝ հակառակը՝ հնարավորինս ուժեղ վերահսկում են տեղեկատվական տարածությունը:

Որպես գլոբալացման անխուսափելի հետևանք՝ համաշխարհային հանցագործությունների ժամանակակից ձևերը, որոնք իրականացվում են հաղորդակցային տեխնոլոգիաների միջոցով, տարածվում են բոլոր երկրների վրա, ինչի հետևանքով, հանցագործություններն այժմ ունեն անդրազգային բնույթ, իսկ առանձին պետությունների համար գրեթե անհնարին է հաղթահարել այդ սպառնալիքները առանձին: Ուստի խնդրի լուծման համար անհրաժեշտ է միջազգային համագործակցության ընդլայնում:

Այդ ուղղությամբ արդեն ընդունվել են մի շարք նորմատիվային փաստաթղթեր, որոնք կարգավորում են միջազգային համագործակցությունը: Նման փաստաթղթերից է «Կիբեռհանցագործությունների մասին եվրոպական կոնվենցիան»⁶⁴, որը ուժի մեջ է մտնել 2004թ. հուլիսի մեկից և հանդիսանում է այդ բնագավառում պարտադիր ուժ ունեցող միակ միջազգային գործիքը:

ՀԱՊԿ-ի անդամ հետխորհրդային տարածքի երկրների համար հատկապես կարևորվում է համագործակցությունը հենց այդ կազմակերպության շրջանակում, որի գործունեության մեջ վերջին տարիներին հատուկ արդիականություն են ձեռք բերել միջազգային համագործակցության զարգացման խնդիրները տեղեկատվական անվտանգության ապահովման, տեղեկատվական սպառնալիքներին հավաքական ուժերով հակազդելու բնագավառներում:

Սակայն արդյունավետ միջազգային համագործակցության համար անհրաժեշտ է նաև, որպեսզի առանձին պետությունների՝ խնդրահարույց հարցին վերաբերող իրավական նորմերը համապատասխանեն միմյանց կամ գոնե հնարավորություն տան այդ բնագավառում միջազգային համագործակցության:

⁶⁴ Տե՛ս, «Convention on Cybercrime». Budapest, 23.11.2001 (<http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/185>, վերջին մուտքը՝ 14.06.2017թ.):

Բացի այդ, համաշխարհային տեղեկատվական ու հաղորդակցային համակարգերի անվտանգության ամրապնդման համար անհրաժեշտ է մշակել այնպիսի սկզբունքներ, որոնք կօգնեն պայքարել ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով իրականացվող հանցագործությունների դեմ: Անհրաժեշտ է համախմբել տեղեկատվական անվտանգության հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող միջազգային գիտական պոտենցիալը:

Կարծում ենք, որ տեղեկատվական սպառնալիքներին հակազդելու համար պետությունների համար առաջնային է նաև սպառնալիք, վտանգ, ռիսկ հասկացությունների հստակ տարանջատումը: Ի տարբերություն առաջինների, վերջինն առավել կառավարելի է, հետևաբար պետք է ներդնել տեղեկատվական ռիսկերի գնահատման և կառավարման մեխանիզմ:

1.3. Թվային դիվանագիտությունը տեղեկատվական անվտանգության քաղաքականության համատեքստում

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և դրանից բխող ժամանակակից համաշխարհային տեղեկատվական հասարակության ձևավորումն անխուսափելիորեն իրենց ազդեցությունն են թողել հասարակության ու պետության բոլոր ոլորտների, այդ թվում՝ արտաքին քաղաքականության վրա: Որպես վերոհիշյալի անխուսափելի հետևանք՝ էական փոփոխություններ է կրել նաև միջազգային անվտանգության միջավայրը՝ պարբերաբար ենթարկվելով կիբեռահանցագործությունների և կիբեռահաբեկչության:

Որակապես և քանակապես փոփոխվել է նաև միջազգային անվտանգության համակարգն իր կառուցվածքային և գործառության թաղադրիչներով, ի հայտ են եկել անվտանգության նոր սպառնալիքներ: Ներկայումս միջազգային անվտանգության օրակարգ են ներթափանցել անհավասարաչափ սպառնալիքներն ու դրանց հիմնական աղբյուր հանդիսացող ահաբեկչական խմբավորումներն ու անդրազգային հանցավոր խմբերը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում բարդացան նաև տեղեկատվական անվտանգության սպառնալիքները: Արդեն 1990-ական թվականի կեսերից տեղեկատվական անվտանգության հետ կապված հարցերը սկսեցին դիտվել որպես միջազգային անվտանգության կարևոր բնագավառ: Շատ պետություններ ներքին ու արտաքին քաղաքականությունը մշակելիս հատուկ ուշադրություն դարձրին տեղեկատվական անվտանգության ապահովմանը:

1990-ականների վերջին միջազգային հարաբերություններում սկսվում է օգտագործվել «միջազգային տեղեկատվական անվտանգություն» տերմինը, որը սահմանվում է որպես միջազգային հարաբերությունների իրավիճակ, որը ենթադրում է տեղեկատվական սպառնալիքներին հակազդելու գործող մեխանիզմների առկայություն և կոչված է համաշխարհային տեղեկատվական տարածության մեջ

նպաստելու իրավահավասար ռազմավարական գործընկերությանը⁶⁵: Այն դիտարկվում է որպես միջազգային, քանի որ ընդհանրական է երկրների մեծ համախմբի համար, դուրս է գալիս յուրաքանչյուր առանձին պետության ազգային անվտանգության շրջանակից ու մտնում միջազգային քաղաքականության օրակարգ:

Ներկայումս շատ պետություններ արտաքին քաղաքականության բնագավառում լայնորեն կիրառում են թվային դիվանագիտության ծրագրեր, որոնք նախևառաջ պետք է դիտարկել միջազգային անվտանգության համատեքստում:

Թվային դիվանագիտությունը պետական մարմինների կողմից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների՝ սոցիալական ցանցերի, բլոգների և նմանատիպ այլ մեդիա հարթակների կիրառումն է դիվանագիտական և արտաքին քաղաքական խնդիրների իրականացման համար⁶⁶: Հաճախ որպես հոմանիշներ կիրառվում են նաև «ինտերնետ-դիվանագիտություն», «սոցիալական ցանցերի դիվանագիտություն» և «վեբ 2.0. դիվանագիտություն» տերմինները:

Թվային դիվանագիտության հանդեպ ուշադրությունը հատկապես աճեց Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում զանգվածային բողոքի ակիբներից հետո, որոնք լրատվամիջոցներում ստացան «թվիթթեր-հեղափոխություն» անվանումը:

2011թ. գարնանը Թունիսում և Եգիպտոսում համացանցի ու շարժական միջոցների օգնությամբ երիտասարդական խմբերը զանգվածային բողոքներ ձեռնարկեցին: Ընդդիմությունը սոցցաներն օգտագործեց համախոհներ համախմբելու համար, թեև հայտնի է, որ թվիթթերի հաղորդագրությունների 70 %-ը տեղադրվել էին IP հասցեներից, որոնք ստեղծվել էին արտասահմանյան սերվերների վրա: Սա վկայում է «արաբական գարնան» ժամանակ արտաքին տեղեկատվական միջամտության մասին, որի տեխնիկական հնարավորությունն ուներ միայն ԱՄՆ-ը:

Վերոհիշյալ իրադարձություններից հետո հրապարակվեցին գիտական բազմաթիվ հոդվածներ, որտեղ քննարկվեց սոցիալական ցանցերի ու նոր մեդիայի ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա: ԱՄՆ պետքարտուղարի՝

⁶⁵ Տե՛ս Информационные вызовы национальной и международной безопасности. Под общей ред. А.В. Федорова и В.Н. Цыгичко.-М.: Библиотека ПИР-Центра, 2001, էջ 304:

⁶⁶ Տե՛ս Цветкова Н., Программы Web 2.0 в публичной дипломатии США // США и Канада: Экономика, политика, культура, 2011, №3, էջ 109-122:

նորարարության հարցերով ավագ խորհրդական Ալեքս Ռոսսը Մերձավոր Արևելքի հեղափոխական իրադարձություններում սոցիալական ցանցերի դերը կարևոր, բայց ոչ առաջնային է համարում: Վերոհիշյալ իրադարձությունների խորքային պատճառները, ըստ նրա, պայմանավորված էին այդ երկրներում սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կրոնական որոշակի իրավիճակներով, իսկ սոցցանցերը ընդամենը զանգվածային բողոքների կատալիզատորներ էին⁶⁷:

Մեր կարծիքով, Մերձավոր Արևելքի երկրներում սոցիալական ցանցերը առանձնահատուկ դեր ունեին, քանի որ դրանց միջոցով համակարգվում էին զանգվածային շարժումները:

Թվային դիվանագիտության տեսական հիմքերը շարադրված են Ան-Մերի Սլոթերի աշխատանքներում, ով 2009-2011 թթ. զբաղեցրել է ԱՄՆ Պետդեպարտամենտի քաղաքական պլանավորման տնօրենի պաշտոնը: Ըստ նրա՝ այն պետությունները, որոնք տիրապետում են տեղեկատվական ու հաղորդակցային զանազան միջոցների, հնարավորություն ունեն թելադրելու համաշխարհային քաղաքական օրակարգը⁶⁸ :

Մանուել Կաստելի կարծիքով՝ թվային դիվանագիտությունը պետք է դիտարկել որպես նոր հնարավորությունների աղբյուր ժամանակակից գլոբալ խնդիրների լուծման համար, որոնց ծավալն անհամեմատելի է առանձին վերցրած պետության հնարավորությունների ու ռեսուրսների հետ⁶⁹: Հեղինակի կարծիքով, հենց տեղեկատվական ցանցերն ու սոցիալական լրատվամիջոցներն են համաշխարհային քաղաքացիական հասարակության ձևավորման և գլոբալ քննարկումների հնարավորություն ընձեռում: Այս համատեքստում թվային դիվանագիտության ծրագրերը, նպաստելով համաշխարհային միասնական տեղեկատվական

⁶⁷ Տե՛ս, Ռոսս Ա., Տոտտ Բ. Социальные СМИ: причина, следствие и реагирование. Вестник НАТО. (http://www.nato.int/docu/review/2011/Social_Medias/21st-century-statecraft/RU/index.htm, վերջին մուտքը՝ 11.11.2016թ.):

⁶⁸Տե՛ս, Slaughter A.-M., America's Edge. Power in the Networked Century // <https://www.foreignaffairs.com/articles/united-states/2009-01-01/americas-edge> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

⁶⁹Տե՛ս Castells M., The New Public Sphere: Global Civil Society, Communication Networks, and Global Governance // The Annals of American Academy of Political and Social science, 2008, N 616, էջ 78-93 (http://prtheories.pbworks.com/w/file/fetch/45138545/Castells_2008_The_New_Public_Sphere.pdf) (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

տարածաշրջանի ձևավորմանը, նպաստում են նաև աշխարհի բոլոր երկրներին հատուկ խնդիրների ու ճգնաժամերի լուծմանը:

Փափուկ ուժի հայեցակարգի հեղինակ Ջոզեֆ Նայը գտնում է, որ տեղեկատվական համաշխարհայնացման դարաշրջանում միջազգային քաղաքականության մեջ փոխակերպվում է հենց իշխանության բովանդակությունը, որն արդեն հիմնվում է ոչ թե ռազմական, այլ տեղեկատվական ռեսուրսների վրա: Ըստ այդմ, տեղեկատվական դարաշրջանում կհաղթի նա, ով ի վիճակի կլինի իրեն դրականորեն ներկայացնել⁷⁰: Այսօր հենց դրան են ուղղված Միացյալ Նահանգների թվային դիվանագիտության ծրագրերը:

Առաջին անգամ թվային դիվանագիտությունը կիրառվել է ԱՄՆ-ում՝ ի թիվս հրապարակային դիվանագիտության այլ ձևերի, ինչպիսիք են տեղեկատվական ծրագրերը, կրթական փոխանակումները, մշակութային ու սպորտային նախագծերը:

Մինչ այդ ԱՄՆ-ի հրապարակային դիվանագիտությունը իրականացվել է «փափուկ» և «խելացի» ուժերի հայեցակարգերի հիման վրա, որոնց հիմքում եղել է ԱՄՆ կառավարության ձգտումը՝ ընդլայնել արտասահմանում ամերիկյան արժեքներ կրող քաղաքացիների թիվը և նրանց ներգրավել Վաշինգտոնի կողմից առաջարկված համաշխարհային հասարակական ու քաղաքական գործընթացներում: Ավելի ուշ անհրաժեշտություն առաջացավ որոշակի թիրախային խմբերի հասցնել ԱՄՆ միջազգային դիրքորոշումը, ինչին օգնության եկան թվային դիվանագիտության ծրագրերը:

ԱՄՆ կառավարությունը «թվային դիվանագիտություն» հասկացությունը սահմանում է որպես ԱՄՆ կառավարության դիվանագիտական պրակտիկայում արտասահմանյան օգտատերերի հետ համացանցի միջոցով ամերիկյան դիվանագետների փոխգործունեությունն ապահովելու միջոց⁷¹: ԱՄՆ-ում այն ոչ թե արտասահմանյան քաղաքական ու դիվանագիտական էլիտայի հետ փոխգործունեության համար է նախատեսված, այլ բնակչության մեծ հատվածներին դիվանագիտական պրակտիկա ընդգրկելու:

⁷⁰Տե՛ս Nye, J. S., *The Future of Power*. NY, 2011, էջ 3-24:

⁷¹Տե՛ս U.S. State Department 2016. “21st Century Statecraft” // <http://www.state.gov/statecraft> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.), U.S. State Department 2016. “IT Strategic Plan: Fiscal Years 2011-2013: Digital Diplomacy” // <http://www.state.gov/m/irm/rls/148572.htm> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

Թվային դիվանագիտության ծրագրերը ԱՄՆ-ում զարգացման են հասել 2002-2003 թթ., երբ Ջորջ Բուշ Կրտսերի վարչակարգը միջազգային հեռարձակման ռադիո-հեռուստատեսային ավադական մեթոդներից անցում կատարեց համացանց:

2010 թ. Հիլարի Քլինտոնը հանդես եկավ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության բնագավառում ծրագրային նոր՝ «Քսանմեկերորդ դարում պետական կառավարում» նախաձեռնությամբ, որի կարևոր ուղղություններից է թվային դիվանագիտությունը: Ծրագրի համաձայն՝ զարգացող երկրներում տեխնոլոգիաների որակական բարելավումը և ինտերնետի օգտատերերի զգալի աճը ԱՄՆ-ից պահանջում են արտաքին քաղաքականության մեթոդների փոփոխություն և դրա ուղղորդում ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների հնարավորություններ: Ընդհանուր առմամբ, ըստ նախագծի, թվային դիվանագիտությունը պետք է լուծի երկու կարևոր խնդիր՝ նպաստի Պետդեպարտամենտի աշխատանքների կատարելագործմանը և այլ երկրների սոցիալ-քաղաքական գործընթացների վրա ամերիկյան ազդեցության ուժեղացմանը՝ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ողջ հնարավորությունների օգտագործմամբ⁷² :

2010-2011 թթ. Սպիտակ տունը հրապարակեց պաշտոնական մի քանի փաստաթղթեր, որոնք սահմանում էին թվային դիվանագիտության ուղղությունները: Դրանց թվում հատկանշական է «Հրապարակային դիվանագիտություն. աշխարհի հետ ԱՄՆ-ի փոխգործունեության ամրապնդում» փաստաթուղթը⁷³, որտեղ ներկայացվել են ԱՄՆ թվային դիվանագիտության խնդիրները, որոնցից են՝

- ԱՄՆ-ի գաղափարական հակառակորդների վարկաբեկում,
- համացանցում Չինաստանի տեղեկատվական գործունեությանը հակազդում,
- նախկին ԽՍՀՄ տարածքում Ռուսաստանի մեդիա ներկայության սահմանափակում,
- Սոցցաների միջոցով Իրանի արտաքին մշակութային քաղաքականությանը հակազդեցություն:

⁷²Տե՛ս նույն տեղը:

⁷³Տե՛ս նույն տեղը:

Թվային դիվանագիտությանը վերաբերող այլ փաստաթղթեր մշակվել են 2010 թ. սեպտեմբերին Հիլարի Քլինթոնի՝ նորարարության հարցերով ավագ խորհրդական Ալեքս Ռոսսի կողմից. օրինակ՝ «2011-2013 թթ. տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարական պլան. թվային դիվանագիտություն»⁷⁴, որտեղ հստակեցվում էին թվային դիվանագիտության ուղղությունները Վաշինգտոնի արտաքին քաղաքական առաջնայնությունների համատեքստում: Այստեղ որպես գերակայություններ էին նշվում միջազգային անվտանգության ապահովումը և արտասահմանում ԱՄՆ-ի դրական կերպարի ձևավորումը: Մյուս ծրագիրը՝ «Քսանմեկերորդ դարում պետության կառավարման արվեստ»⁷⁵ վերնագրով, թվային դիվանագիտությունը դիտարկվում է որպես քաղաքացիական ակտիվիստներ ներգրավելու և նրանց վրա ազդելու միջոց:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում թվային դիվանագիտության ծրագրերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կոչված են ապահովելու համաշխարհային տեղեկատվական տարածաշրջանում ԱՄՆ-ի առաջնայնությունը: Ենթադրվում է, որ այդ ծրագրերով Վաշինգտոնը պետք է գրանցի հետևյալ թիրախային նպատակները՝

- Բարձրացնի Պետդեպարտամենտի աշխատանքի արդյունավետությունը,
- բարձրացնի պետական քարոզչության արդյունավետությունը. ուղիղ մուտք ունենա փակ պետությունների լսարան, նվազագույնի հասցնի ծախսերը, ընդգրկի երիտասարդությանը և հասարակության ավելի զգայուն շերտերին,
- ընդլայնի արտասահմանյան երկրների ներքին գործերին միջամտելու հնարավորությունները,
- ստեղծի արտասահմանյան երկրների տնտեսական ու պետական կառավարման մասին լայնածավալ տեղեկատվություն ստանալու պայմաններ:

Կարևորելով թվային դիվանագիտության դերն ու ազդեցությունը համաշխարհային քաղաքականության վրա՝ այսօր շատ պետություններ ևս լայնորեն օգտագործում են դրա հնարավորությունները: Օրինակ, Բրիտանիայի արտաքին գործերի և համագործակցության նախարարությունում ստեղծվել է թվային

⁷⁴Տե՛ս նույն տեղը:

⁷⁵Տե՛ս նույն տեղը:

դիվանագիտության գրասենյակ⁷⁶, որն ակտիվորեն մասնակցում է արտաքին քաղաքական օրակարգի մշակմանը: Այստեղ նաև մեծ ուշադրություն է դարձվում ներկայացվող տեղեկատվության լեզուների քանակին, որի նպատակն է կապ հաստատել Բրիտանիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և աշխարհի տարբեր երկրներում գտնող նույն լեզվով խոսող երիտասարդության խմբերի միջև:

Ասիական շատ երկրներ ևս դիվանագիտության ավանդական ձևերին զուգորդում են թվային դիվանագիտությունը: Այստեղ հատկանշական է Չինաստանի օրինակը, որտեղ 300 000 հոգանոց «բանակը» չնչին գումարի դիմաց զբաղված է ֆորումներում, բլոգներում առցանց զրույցներ վարելով՝ նպատակ ունենալով երկրի ներսում կառավարական քաղաքականությանն աջակցելու, հասարակական կարծիք ստեղծելու, իսկ երկրից դուրս հակազդելու Չինաստանի վերաբերյալ բացասական տեղեկատվությանը⁷⁷:

Հնդկաստանում շատ գերատեսչություններ ևս ունեն պաշտոնական կայքեր, սակայն դրանք հիմնականում տրամադրում են տեղեկատվություն հնդկական մշակույթի, արվեստի, խոհանոցի վերաբերյալ և կողմնորոշված են դեպի Հնդկաստանի մասին տեղեկատվություն տրամադրելուն⁷⁸:

Հարավային Կորեայի կառավարությունը նպաստում է թվային դիվանագիտության բնագավառում հմուտ կադրերի պատրաստմանը: Դա է վկայում 2012թ-ին կորեական կազմակերպությունների հետ կառավարության ստորագրած համաձայնագիրը՝ 500 ուսանողի կիրեո դիվանագիտության հիմնադրույթների ուսուցման վերաբերյալ:

Ճապոնիայում ևս կարևորվում են թվային դիվանագիտության ծրագրերը: Facebook-ում, Twitter-ում բացված ճապոնական էջերը հազարավոր համախոհներ ունեն, իսկ Youtube-ում տեղադրված հոլովակները բազմաթիվ դիտումներ են ապահովում⁷⁹:

⁷⁶St' u Foreign & Commonwealth Office 2016. "Digital Diplomacy. The FCO's digital work" // <http://blogs.fco.gov.uk/digitaldiplomacy> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

⁷⁷St' u Скрипкарь М.В. «Китайская мечта» как национальная особенность в процессе бренд-билдинга приграничных территорий Северо-Востока КНР//Молодой ученый. 2013. № 7. էջ 362-365:

⁷⁸ St' u Алексеевна М.Э. Цифровая дипломатия в странах Азии (<http://politika.snauka.ru/2015/01/2289>, վերջին մուտքը՝ 10.11.2016թ) :

⁷⁹ St' u նույն տեղը:

Հետխորհրդային տարածաշրջանի երկրներից թվային դիվանագիտության ծրագրերում առաջատարը Ռուսաստանն է: 2012 թ. հունիսին դիվանագետների հետ հանդիպման ժամանակ ՌԴ նախագահը կոչ է արել դիվանագետներին ՌԴ դիրքորոշումն արտահայտելու ժամանակ ավելի հաճախակի օգտվել տարբեր հարթակների նորագույն տեխնոլոգիաներից, այդ թվում՝ սոցիալական ցանցերից⁸⁰: Այսօր արդեն ՌԴ արտաքին գործերի նախարարությունը բոլոր ցանկացողներին հնարավորություն է ընձեռում սոցցանցերում հետևելու արտաքին քաղաքականության իրադարձություններին՝ մասնավորապես օգտագործելով Ֆեյսբուքի և Թվիթթերի հարթակները: Ավելին, ըստ թվային դիվանագիտության 2016 թվականի դասակարգման (Digital Diplomacy-2016)⁸¹ Ռուսաստանը զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից ու Ֆրանսիայից հետո⁸¹ :

Ռուսաստանյան թվային դիվանագիտության ավելի հեռանկարային ուղղություններից է հայրենական տեխնոլոգիական բիզնեսի ընդգրկումը հրապարակային դիվանագիտության ոլորտի նախագծերում: Այս ուղղությամբ առաջին քայլերն արդեն արվել են. ստեղծվել է «Яндекс» ռուսալեզու որոնողական կայքը, «Вконтакте» սոցիալական կայքը, որը հայտնի է ոչ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանյան շատ երկրներում, ներառյալ՝ ԱՊՀ երկրներ, Իսրայել, Գերմանիա, ԱՄՆ: Ռուսաստանում ստեղծվել են նաև պետական պաշտոնյաների ու դիվանագետների ռուսալեզու և անգլալեզու բլոգներ, պետական մարմինների պորտալներում պարբերաբար հրապարակվում է նրանց գործունեությունը լուսաբանող տեղեկատվություն:

Կարևորելով թվային դիվանագիտության ընձեռած հնարավորությունները և միջազգային քաղաքականության մեջ դրա դերը՝ 2015 թ. մայիսի 11-ին Երևանում անց է կացվել ԱԳՆ դիվանագիտական դպրոցի կազմակերպած «Թվային դիվանագիտություն. հեռանկարներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովը, որի ժամանակ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը մասնավորապես նշել է. «Թվային դիվանագիտությունը, օգտվելով տեխնոլոգիական նվաճումներից և

⁸⁰Տե՛ս Пермякова Л., Цифровая дипломатия: направления работы, риски и инструменты (27.09.2012) // http://russiancouncil.ru/inner/?id_4=862#top-content (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

⁸¹Տե՛ս РосКомСвобода 2016. “Россия вошла в ТОП международного рейтинга Digital Diplomacy 2016” // <https://rublacklist.net/17137> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

ստեղծված հնարավորություններից, լրացուցիչ հարթակ է ստեղծում դիվանագետների համար՝ իրենց գործառույթները իրականացնելու նպատակով, ինչպես նաև՝ հասարակությունների առջև հաշվետու լինելու գործում: Հրատապ զարգացումներին արագ արձագանքելը և քաղաքացիների՝ գնալով աճող հարցումներին անմիջապես պատասխանելը ներկայումս դառնում են դիվանագիտական ծառայության առաջնային պարտականություններից»⁸²: Ըստ նախարարի՝ դիվանագիտական ծառայության մարմինները կարող են ավելի հաջողակ լինել իրենց երկրների ազգային շահերին ծառայելու հարցում՝ տեխնոլոգիական առաջընթացից լավագույնս օգտվելու դեպքում: Այս համատեքստում արտաքին ծառայության կադրերի պատրաստման հաստատությունների կարևոր առաքելությունն է թվային դիվանագիտության իրագործման նպատակով կրթել և վերապատրաստել գործող դիվանագետներին:

Ըստ թվային դիվանագիտության 2016 թվականի դասակարգման (Digital Diplomacy-2016)՝ նախկին ԽՍՀՄ տարածաշրջանի երկրներում (չհաշված մերձբալթյան երկրները) Հայաստանը զբաղեցնում է երրորդ հորիզոնականը՝ Ռուսաստանից և Ուկրաինայից հետո⁸³: Համաշխարհային մասշտաբով Հայաստանը զբաղեցնում է 52-րդ հորիզոնականը⁸⁴: Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը պետական գերատեսչություններից առաջինն է, որ Youtube-ում բացել է իր պաշտոնական ալիքը և իր պաշտոնական էջերը Facebook-ում և Twitter-ում: Ի դեպ, չպետք է նույնացնել «թվային դիվանագիտություն» և «թվի դիվանագիտություն» (Twiplomacy) հասկացությունները, քանզի վերջինս թվային դիվանագիտության միայն մի բաղկացուցիչն է: Հենց Թվիթթերն է այն կարևոր գործիքներից մեկը, որով պետությունը կարող է համացանցում մեծացնել իր ներկայությունն ու ազդեցությունը, ճշմարիտ տեղեկատվություն տրամադրել արտասահմանյան լսարանին:

2016թ. ապրիլի 2-ից 5-ը հայ-ադրբեջանական քառօրյա պատերազմն ապացուցեց, որ ներկայիս տեղեկատվական դարաշրջանում իսկապես կարևոր են

⁸²Տե՛ս «Երևանում մեկնարկեց «Թվային դիվանագիտություն. հեռանկարներ և մարտահրավերներ» միջազգային համաժողովը» (11.05.2015) // http://www.mfa.am/hy/press-releases/item/2015/05/11/min_edip_arm (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

⁸³Տե՛ս РокКомСвобода 2016. “Россия вошла в ТОП международного рейтинга Digital Diplomacy 2016” // <https://rublacklist.net/17137> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

⁸⁴Տե՛ս նույն տեղը:

տեղեկատվական տեխնոլոգիաները: Պատերազմի առաջին օրերին հակառակորդ Ադրբեջանի բացաժ սոցիալական ցանցերի բազմաթիվ կեղծ հաշիվները միտված էին հայերից տեղեկատվություն ստանալուն և ապատեղեկատվություն տրամադրելուն: Հենց այդ օրերին ավելի ակնառու դարձավ տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանցով ճիշտ աշխատելու անհրաժեշտությունը:

Ճիշտ է, վերջին շրջանում հանրապետությունում իրականացվել են մի շարք միջոցառումներ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական քաղաքականության և տեղեկատվական անվտանգության ապահովման բարելավման ուղղությամբ, սկսվել է տեղեկատվական անվտանգության իրավական նորմատիվային դաշտի ձևավորումը, 2009թ. ընդունվել է ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը⁸⁵, որը տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է և հիմք է ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակման և իրագործման համար, բխում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունից⁸⁶, սակայն ՀՀ տեղեկատվական անվտանգության իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա մակարդակը դեռևս չի համապատասխանում հասարակության և պետության ներկայիս պահանջներին:

Նոր մարտահրավերների պայմաններում Հայաստանի արդյունավետ զարգացման համար անհրաժեշտ են թվային բնագավառում նոր արտաքին քաղաքական նախագծեր՝ ուղղված փափուկ ուժի ամրապնդմանը և գիտության, տեխնոլոգիաների ու կրթության զարգացմանը: Նման պայմաններում թվային դիվանագիտությունը կարող է դառնալ համաշխարհային թատերաբեմում ազգային շահերի առաջաշման միջոց, եթե մտավոր, տեխնոլոգիական ու կազմակերպչական բավարար ռեսուրսներ ներդրվեն: Այդ իսկ պատճառով պետական մարմինների ջանքերի ակտիվացումն այդ բնագավառում պետք է ամենամոտ ապագայում դիտվի

⁸⁵ Տե՛ս ՀՀ նախագահի կարգադրությունը «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» // <http://www.arlis.am/documentview.aspx?docID=52559> (վերջին մուտքը՝ 10.06.2016թ.):

⁸⁶Տե՛ս նույն տեղը:

առաջնային: Բացի այդ, թվային դիվանագիտությունը երկկողմանի փոխանակում է ենթադրում, ուստի դրա արդյունավետությունը ակնհայտ կլինի միայն այն ժամանակ, երբ ոչ միայն տեղեկատվություն տրամադրվի, այլև լսարանի հետ համապատասխան փոխգործունեություն ծավալվի:

Թվային դիվանագիտության ոլորտում արտասահմանյան երկրների հաջող փորձը կարելի է կիրառել նաև Հայաստանում: Այդ նպատակով, մեր կարծիքով անհրաժեշտ է՝

- ամուր կապ հաստատել պետության և ՀՀ-ում գործող տեղեկատվական գործակալությունների հետ,
- ֆինանսական օժանդակություն տրամադրել և արտասահմանում վերապատրաստել տեղեկատվական ոլորտի մասնագետների,
- ակտիվացնել պետական գերատեսչությունների՝ հատկապես Արտաքին գործերի նախարարության գործունեությունը վիրտուալ դաշտում,
- դիվանագետներին խրախուսել ավելի ինտենսիվ օգտագործել նոր տեխնոլոգիաները՝ Հայաստանի պետական դիրքորոշման մեկնաբանման ժամանակ,
- մեծացնել օտար լեզվով գործող բլոգների, կայքերի թիվը,
- սերտորեն համագործակցել սփյուռքում գտնող հայրենակիցների հետ,
- թվային դիվանագիտության սեփական համակարգ մշակել:

Այսպիսով, ի տարբերություն ավանդական դիվանագիտության, որի հիմքում բանակցություններն էին, ստորագրված պայմանագրերը, թվային դիվանագիտության հիմքում ոչ պաշտոնական գործողություններն են, որոնք նպատակ ունեն ավելի սերտ կապ հաստատել երկրի կառավարության ու բնակչության միջև:

Թվային դիվանագիտության շնորհիվ է, որ հնարավորություն է ընձեռվում ուղիղ կապ հաստատել և հատուկ հաղորդակցություններ ուղարկել անմիջապես թիրախային լսարանին, ինչպես նաև համագործակցել կարծիք ձևավորողների հետ, ինչը ժամանակակից դիվանագիտությունը ավելի հրապարակային է դարձնում: Բացի այդ, թվային դիվանագիտությունը հատկապես արդյունավետ է արտասահմանյան լսարանի հետ աշխատելու ժամանակ, երբ անհրաժեշտություն կա պետության իմիջի

ծնավորման կամ պաշտոնական դիրքորոշման փոխանցման: Թվային դիվանագիտությունը կոչված է արագորեն տրամադրելու համապատասխան տեղեկատվություն, հերքել կեղծ տեղեկությունները, հաստատել պաշտոնական աղբյուրների տեղեկատվությունը: Ընդ որում, թվային դիվանագիտությունը՝ որպես համացանցով այլ պետությունների բնակչության վրա ազդեցության միջոց, հիմնականում ուղղված է երկու թիրախային խմբերի՝ ակտիվ երիտասարդությանը և հասարակության ընդդիմադիր խավին՝ լրագրողներ, իրավապաշտպաններ և այլն:

Ներկայումս թվային դիվանագիտությունը զարգանում է հետևյալ ուղղություններով՝

- Ավելի շատ համախոհների որոնում,
- Իսլամական ահաբեկչությանը հակազդեցություն,
- Փոխգործունեություն ոչ միայն էլիտայի, այլև ողջ հասարակության մասշտաբով,
- Նոր տեղեկատվական հնարավորությունների օգտագործում,
- Սոցիալական մեդիայում ներկայություն:

Չնայած թվային դիվանագիտության ընձեռած օբյեկտիվ հնարավորություններին՝ գործնականում դրա զարգացման հարցերը հաճախ դիտարկվում են ռիսկերի ու սպառնալիքների համատեքստում: Սա պայմանավորված է նրանով, որ ինտերնետը բավականին էժան ու հեշտ հասանելի ռեսուրս է՝ ազդելու համաշխարհային հասարակական կարծիքի վրա: Բացի այդ, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման արդյունքում ի հայտ են գալիս նոր, ոչ ռազմական սպառնալիքներ, ինչպիսիք են կիբեռհանցագործությունները և կիբեռաահաբեկչությունները, որոնց պետք է ուշադրություն դարձնել ընդհանուր տեղեկատվական անվտանգության համատեքստում:

Համացանցը հաճախ դիտվում է որպես ուրիշի գաղափարախոսության և արտաքին քաղաքականության գովազդ, որպես տեղեկատվական պատերազմների իրականացման միջոց: Բացի այդ, հակերությունը ևս այն սպառնալիքներից է, որը ի հայտ է եկել համացանցի հետ միաժամանակ: Ուստի ժամանակակից պետությունների համար տեղեկատվական անվտանգության ապահովումը դառնում է ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչ:

Բացի այդ, անհրաժեշտ է տարանջատել թվային դիվանագիտությունը գերտերությունների և փոքր պետությունների համար: Առաջին դեպքում այն ունի հարձակվողական գործառույթներ, ընդհանուր արտաքին քաղաքականության գործիքարանի տեղեկատվական բաղադրիչն է՝ ուղղված սեփական գործունեության համար դրական տեղեկատվական դաշտի ստեղծմանը: Այնինչ սահմանափակ ռեսուրսներ ունեցող փոքր պետությունների համար այն ավելի շատ պաշտպանական և տեղեկատվական ավտանգության սպառնալիքներին հակադարձելու նկատառումներով է կարևորվում, քանզի թվային ազդեցիկ և թիրախավորված դիվանագիտության մշակումն ու իրականացումը խիստ ռեսուրսատար է:

**ԳԼՈՒԽ 2. ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1. Տեղեկատվական անվտանգության ապահովման ԱՄՆ փորձի,
հայեցակարգային մոտեցումների և կարգավորման մեխանիզմների կիրառման
նշանակությունը ՀՀ-ում**

Ուշագրավ է տեղեկատվական անվտանգության ապահովման քաղաքականության էվոյուցիայի ու օրինաչափությունների ԱՄՆ փորձը՝ որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների ամենահզոր քաղաքական, տնտեսական ու ռազմական դերակատարներից մեկի: Իրավամբ, ԱՄՆ-ը համարվում է նաև տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակման առաջին երկրներից: Հարկ է նկատել, որ տեղեկատվական անվտանգության պետական համակարգը ԱՄՆ-ում ներդրվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Այդ ժամանակ էլ սկսվել է ոլորտը կարգավորող իրավական բազայի մշակումը: Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունն ապահովող քառասուն օրենքներ են մշակվել: Ավելին, կյանքի բոլոր բնագավառներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդնումը թույլ է տալիս ասել, որ ԱՄՆ-ը այդ ոլորտում թելադրող դեր ունի:

Տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրը հատկապես կարևոր է հենց ԱՄՆ-ի համար, որտեղ առաջին անգամ զգացվել է տեղեկատվական հեղաշրջման ազդեցությունը: Այստեղ են ի հայտ եկել առաջին համակարգիչները: ԱՄՆ-ում է, որ տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները դիտվել են որպես ռազմավարական ռեսուրս: Դրանք բավականին զարգացել ու ներդրվել են հասարակության ու պետության կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում:

Տեղեկատվական ոլորտում ԱՄՆ հաջողությունը կապված է նաև տեխնոլոգիաների զարգացման մեջ պետության դերով:

1992թ-ի ԱՄՆ նախագահական ընտրությունների ժամանակ դեմոկրատական կուսակցությունը պնդում էր, որ տեխնոլոգիաների զարգացման մեջ արված

ներդրումները ապագայում ամերիկյան պետության տնտեսական առաջընթացի նախապայմանն են դառնալու⁸⁷: Նախագահ Քլինտոնի ղեկավարման ժամանակ ԱՄՆ քաղաքականությունն ուղղված էր տեխնոլոգիաների առավելագույն օգտագործմանը՝ ԱՄՆ սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու և համաշխարհային տեղեկատվական առաջնորդություն ապահովելու նպատակով: Հենց Քլինտոնի կառավարման օրոք է կարծիք ձևավորվել, որ տեղեկատվական անվտանգության հետ կապված հարցերը ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչն են:

Արդյունքում, պետական կառավարման մարմինները, ռազմական ու տնտեսական կառույցները մեծապես կախվածություն են ձեռք բերել տեղեկատվական տեխնոլոգիաներից: Իսկ որքան մեծ է այդ կախվածությունը վերոհիշյալից, այնքան ավելի բարդ ու բազմազան են տեղեկատվական տարածությունից եկող սպառնալիքները:

Համակարգչային անվտանգության չափանիշները ԱՄՆ-ում առաջին անգամ մշակվել են 1983թ.-ին երկրի պաշտպանության նախարարության Համակարգչային անվտանգության կենտրոնի կողմից՝ «Նարնջագույն գիրք» փաստաթղթում, որում տրվել է համակարգչային անվտանգության սահմանումը: Այն սահմանվել է որպես համակարգ, որը միայն երաշխավորված օգատատերերը կարող են կարդալ, ստեղծել, փոփոխել կամ ջնջել դրանում եղած տեղեկատվությունը: Սակայն փաստաթուղթը լայն կիրառում չգտավ, քանզի հիմնականում հաշվարկված էր ռազմական նշանակության համակարգչային համակարգերի համար, ինչը հետագայում ստիպեց մշակել նոր փաստաթուղթ՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության դաշնային չափանիշները (Federal Criteria for Information Technology Security): Սույն փաստաթղթի մշակման նպատակներից էր ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության համար հիմնական համընդհանուր չափանիշների մշակումը կամ լրացումը, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության հիմնական սկզբունքների ամրագրումը նորմատիվային տեսքով:

Արդեն 1990-ական թվականների կեսերին ամերիկյան կառավարությունը սկսեց ուշադրություն դարձնել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող

⁸⁷ A New Covenant with the American People. Democratic Party Platform of 1992 July 13, 1992. (<http://www.presidency.ucsb.edu/ws/?pid=29610>, վերջին մուտքը՝ 06.06.2017թ.):

հանցագործություններին: Ամերիկյան փորձագետները նշում էին, որ կիբեռահաբեկչությունն ու կիբեռհանցագործությունները բավականին լուրջ մարտահրավերներ են երկրի համար: Նրանց կարծիքով, հանցագործները կարող են օգտագործել համացանցը՝

- Տեղեկատվության, ապատեղեկատվության տարածման համար,
- Ուրիշի տեղեկատվության խափանման համար,
- Գրոհների իրականացման համար,
- Համացանցի վրա հարձակումների իրականացման համար:

Այդ ժամանակ երկրի ղեկավարությունը սկսեց մշակել տեղեկատվական սպառնալիքների հակազդման մեթոդներ: Ընդունվեցին օրենքներ, որոնք պատիժ էին նախատեսում տեղեկատվական տեխնոլոգիաները հանցավոր նպատակներով օգտագործելու համար:

Բ. Քլինտոնն ԱՄՆ առաջին նախագահն էր, ով համակարգչային ցանցերը և տեղեկատվական համակարգերը դասեց երկրի կրիտիկական ենթակառուցվածքների շարքին: Նրա՝ 1998թ.-ի PDD-63 «Կրիտիկական ենթակառուցվածքի պաշտպանություն»⁸⁸ կարգադրությունը դարձավ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում երկարաժամկետ հայեցակարգի մշակման սկիզբ: Կարգադրության համաձայն, կրիտիկական ենթակառուցվածքների շարքին (տրանսպորտային, նավթագազային, ջրային, արտակարգ իրավիճակների ծառայության, իշխանության մարմինների, բանկային ու ֆինանսական, էլեկտրաէներգետիկայի ենթակառուցվածքներ) դասվեց տեղեկատվական ենթակառուցվածքը: Ընդ որում, նշվում էր, որ յուրաքանչյուր ենթակառուցվածքի անվտանգության կարևոր գործոնը դրա տեղեկատվական բաղկացուցիչի անվտանգությունն է:

Ստեղծվեց Ազգային ենթակառուցվածքի պաշտպանության կենտրոնը, որի պարտականությունների մեջ էր մտնում տեղեկատվական տարածությունում ի հայտ եկած սպառնալիքների ուսումնասիրումն ու դրանց մասին նախազգուշացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ հանցագործությունների

⁸⁸ Տե՛ս, Critical Infrastructure Protection: Presidential Decision Directive / NSC-63. Washington D.C.: The White House. May 22, 1998 (<http://www.fas.org/irp/offdocs/pdd/pdd-63.htm>, վերջին մուտքը՝ 10.02.2017թ.):

հետաքննությունը, այդ ենթակառուցվածքի անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմինների գործողությունների մշակումը:

Քլինտոնի ղեկավարման ժամանակ յուրաքանչյուր պետական հաստատությունում բացվեց տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով տնօրենի հաստիք, ով պատասխանատու էր իր հաստատության տեղեկատվական անվտանգության համար:

Ընդհանուր առմամբ, Քլինտոնի կառավարության կողմից շեշտադրվեցին այն առաջնային միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին կրիտիկական ենթակառուցվածքի անվտանգության բարելավման համար՝

- Պետական մարմինների կառուցվածքի ձևավորում,
- Տեղեկատվության հավաքագրման համակարգի զարգացում և շահագրգիռ կողմերին տեղեկացում,
- Պետական մարմինների ու մասնավոր սեկտորի փոխգործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում,
- Կիբեռանվտանգության հետ կապված հարցերի մասին տեղեկացվածության բարձրացում,
- Պետական կառույցի ու մասնավոր սեկտորի համար որակյալ կադրերի պատրաստում:

Այդուհանդերձ, չնայած ձեռնարկված միջոցառումներին, Քլինտոնի կառավարման ավարտին տեղեկատվական անվտանգության ապահովման հետ կապված խնդիրները լուրջ սպառնալիք էին դարձել ԱՄՆ-ի Ազգային անվտանգության համար: Աճել էր տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող հանցագործությունների թիվը, պարբերաբար ի հայտ էին գալիս տեղեկատվական ենթակառուցվածքը խափանող վնասակար ծրագրեր, հաճախ հանցագործները հնարավորություն էին ունենում մուտք գործել պետական գաղտնիք պարունակող տեղեկատվական ցանցեր:

Ինչպես Քլինտոնի, այնպես էլ նրան հաջորդած նախագահ Զ. Բուշ Կրտսերի օրոք մշակված կազմակերպչական, օրենսդրական ու տեխնիկական միջոցառումները,

որոնք ուղղված էին տեղեկատվական անվտանգության ապահովմանը, լիարժեք արդյունավետ չէին տեղեկատվական սպառնալիքներին դիմակայելու համար:

ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգության խնդիրներին սկսեցին մեծապես ուշադրություն դարձնել 2001թ-ի սեպտեմբերի 11-ի՝ ավելի քան երեք հազար մարդու կյանք խլած ահաբեկչական գործողություններից հետո: Ջորջ Բուշի կառավարությունը ազգային անվտանգության ապահովման համակարգում լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացրեց: Հատուկ կարևորվեց կառավարության գործունեության, ռազմական ու հետախուզական գործողությունների իրականացման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը:

2002թ-ին ընդունված «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարությունը» պահանջում էր ստեղծել այնպիսի համակարգ, որը զինված ուժերի համար հստակ, ընդգրկուն տեղեկատվություն կտրամադրեր ոչ միայն իրական, այլև ԱՄՆ ազգային անվտանգությանը սպառնացող ցանկացած հնարավոր սպառնալիքների մասին:

Կիբեռանվտանգության հիմնահարցը և կրիտիկական կարևոր ենթակառուցվածքի պաշտպանությունը իրենց զարգացումը գտան 2003թ-ին Կիբեռտարածության անվտանգության ապահովման ազգային ռազմավարության շրջանակում⁸⁹:

Ավելին, միջազգային ահաբեկչության դեմ պայքարի լոզունգի ներքո Բուշի կառավարությունը սկսեց ռազմական-ուժային կոշտ գործիքների միջոցով միջազգային ասպարեզում ԱՄՆ-ի շահերի ապահովման քաղաքականություն վարել: Բնականաբար, մեծացավ նաև պետության կողմից տեղեկատվական ռեսուրսների կիրառման պահանջարկը: Քանի որ տեղեկատվական անվտանգությունը դիտվում էր ազգային անվտանգության անբաժանելի մաս, ուստի ԱՄՆ-ի քաղաքականությունը հաճախ ուղղված էր հենց տեղեկատվական գերիշխանության հաստատմանը:

Ավելին, ԱՄՆ Կոնգրեսը, նախագահի նախաձեռնությամբ, ընդունեց «Ահաբեկչության դեմ պայքարի մասին»⁹⁰ օրենքը, որով ամերիկյան պետությունը գրեթե անսահմանափակ հնարավորություն ուներ տեղեկություն ստանալու ցանկացած

⁸⁹ The National Strategy to Secure Cyberspace [published 02.2003] // US Department of Homeland Security, (http://www.dhs.gov/xlibrary/assets/National_Cyberspace_Strategy.pdf (վերջին մուտքը՝ 15.10.2011թ.)):

⁹⁰ The Basics: The USA PATRIOT ACT. A Century Foundation Guide to the Issues the Century Foundation Press.- New York City, 2004.-P.15.

քաղաքացու մասին, եթե այդ տեղեկությունը հանդիսանում է միջազգային ահաբեկչության սպառնալիքից ԱՄՆ-ի պաշպանության համար թույլատրելի հետազոտության էլեմենտ:

Փաստաթղթում սահմանվում էին կիրեռանվտանգության ապահովման հիմնական սկզբունքներն ու խնդիրները՝ կիրեռագրոհների կանխում, գրոհի դեպքում վերականգման աշխատանքների համար նվազագույն ժամանակի ու վնասի ապահովում և այլն: Ավելին, նշվում էր, որ եթե ԱՄՆ-ը գրոհի ենթարկվի կիրեռտարածությունից, որպես պատասխան՝ կարող է կիրառվել ուժ՝ այդ թվում կիրեռզենք:

Իսկ արդեն 2008թ-ին մշակվեց Կիրեռանվտանգության ազգային համալիր նախաձեռնությունը⁹¹, որը կիրեռանվտանգության հարցերի հետ կապված մի շարք խնդիրներ էր լուծում.

- «Պաշտպանական գծի» ստեղծում՝ ամերիկյան տվյալների բազայի վրա հնարավոր հակառակորդների կողմից գրոհներից պաշտպանելու համար, ինչպես նաև դաշնային կառավարության մասնագետների համար պայմաններ ստեղծել ազգային համակարգչային ցանցերի կախվածության մասին տեղեկացվածության ապահովման համար,
- ԱՄՆ հակահետախուզական մարմինների տեխնիկական ու օպերատիվ հնարավորությունների ընդլայնման հաշվին տեղեկատվության պաշտպանության ապահովում հնարավոր սպառնալիքների բոլոր ոլորտերում,
- Տեղեկատվական անվտանգության ոլորտում մասնագետների պատրաստման համար համալիր միջոցառումների իրականացում, ոլորտում հետազոտությունների իրականացում ու մշակում, ինչպես նաև ռազմավարական մոտեցումների մշակում՝ ԱՄՆ կիրեռտարածության մեջ իրականացվող չարամիտ գործողություններին արդյունավետ հակազդելու համար:

Ի դեպ, Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնը նշում է ոլորտում «ճիշտ» մարդիկ ունենալու անհրաժեշտությունը՝ կիրեռանվտանգության

⁹¹ The Comprehensive National Cybersecurity Initiative//The White House. (<http://www.whitehouse.gov/cybersecurity/comprehensive-national-cybersecurity-initiative> (վերջին մուտքը՝ 15.10.2015թ.)).

հուսալի ու պատշաճ ռազմավարություն ունենալու համար: Դրա համար, ըստ Էվանսի և Ռիդերի, անհրաժեշտ են հետևյալ չորս տարրերը՝

- Խթանել և ֆինանսավորել դպրոցներում ավելի ճշգրիտ ուսումնական ծրագրերի մշակումը,
- Աջակցել մասնագետների այնպիսի տեխնիկապես խստապահանջ հավաստագրման մշակմանը և ընդունմանը, որը ներառի հաստատուն կրթական և վերահսկելի գործնական բաղադրատարրեր,
- Պետական համակարգեր կառուցող, գործարկող և պաշտպանող մարդկանց տեխնիկական պատրաստականության մակարդակը բարձրացնելու համար կիրառել աշխատանքի ընդունման գործընթացի, գիտելիքների ձեռքբերման պրոցեսի և ուսումնավարժեցման ռեսուրսների համակցությունը,
- Բարձր մակարդակի տեխնիկական հմտություններ ունեցողներին խրախուսելու և պահելու նպատակով երաշխավորել նրանց պաշտոնական առաջխաղացումը, ինչպես այլ բնագավառներում է, օրինակ՝ քաղաքացիական շինարարության կամ բժշկության ոլորտներում⁹²:

1998թ-ի նախագահի PDD-63 «Կրիտիկական ենթակառուցվածքի պաշտպանություն» կարգադրության, 2003թ-ի կիրեռտարածության անվտանգության ապահովման ազգային ռազմավարության, 2008թ-ի Կիրեռանվտանգության ազգային համալիր նախաձեռնության վերլուծությունը ցույց է տալիս, որ 1990-ական թվականներից մինչև 2008թ-ը ԱՄՆ-ում կիրեռանվտանգության խնդիրների հետ կապված մոտեցումները զգալի փոփոխություններ են կրել: Նախ, այդ ժամանակահատվածում վերհանվեցին որոշակի խնդիրներ, մասնավորապես, մեծապես տեղեկատվական համակարգերի գործառնությունից պետության ու հասարակության կենսական կարևոր ոլորտների կախվածությունը, կիրեռանվտանգության ապահովման բնագավառում որակյալ մասնագետների պակասը: Իսկ անվտանգության ապահովման հիմնական մոտեցումը, այն է՝ տեղեկատվական ենթակառուցվածքի և տեղեկատվության պաշտպանությունը, մնաց նույնը՝ առանց հաշվի առնելու դրա

⁹² Evans K., Reeder F.. A Human Capital Crisis in Cybersecurity: Technical Proficiency Matters. Washington: CSIS, 2010, P.14.

բովանդակությունը և անհատի, հասարակության ու պետության վրա հնարավոր ազդեցությունը:

Այդուհանդերձ, վերոհիշյալ փաստաթղթերը մի շարք թերություններ ունեն՝ կապված գաղտնի տեղեկատվության փոխանակման դժվարությունների, սպառնալիքների հակազդման մեթոդների հետ և այլն:

Բարաք Օբամայի իշխանության գալուց հետո կիրառարածության անվտանգության ապահովման հետ կապված խնդիրները չկորցրեցին իրենց հրատապությունը: Օբամայի կառավարությունը խնդիր ուներ ընդլայնել միջազգային երկխոսությունը կիրառանվտանգության հետ կապված խնդիրների շուրջ և ապահովել ԱՄՆ առաջատար դիրքը այդ հարցում: Ընդ որում, հատուկ ուշադրություն պետք է դարձվեր Ռուսաստանի ու Չինաստանի հետ համագործակցությանը⁹³:

2009թ.-ի մայիսին պատրաստվեց «Կիրառարածությունում քաղաքականության ակնարկ»⁹⁴ փաստաթուղթը, որում առաջարկվում էին կիրառանվտանգության ապահովման համակարգի հետագա քայլերը: Ընդհանուր առմամբ, վերջինս 2008թ.-ի Կիրառանվտանգության ազգային համալիր նախաձեռնության լրացումն էր: Հիմնական բնութագրական հանգամանքն այն էր, որ ԱՄՆ-ը, մեծապես կախված լինելով ցանցերից, միայնակ չի կարող ապահովել կիրառանվտանգությունը: Անհրաժեշտ է համագործակցել հատկապես այն երկրների հետ, որոնք խնդրի լուծման ժամանակ նմանատիպ մոտեցումներ ունեն, կիսում են ԱՄՆ-ը մոտեցումը կիրառարածության անվտանգության ապահովման ժամանակ տեխնիկական չափորոշիչների, ազգային օրենսդրության հարցերը շոշափող ընդունելի իրավական նորմերի, ինչպես նաև կիրառահանցագործությունների և կիրառարածակումներին ի պատասխան գործողությունների կազմակերպման ժամանակ օրենսդրական բազայի մշակման հարցերում:

Բացի այդ, ռազմավարական ու միջազգային հետազոտությունների կողմից խորհուրդ էր տրվում հատուկ ուշադրություն դարձնել Ռուսաստանի ու Չինաստանի

⁹³ Securing Cyberspace for the 44th Presidency. A Report of the CSIS Commission on Cybersecurity for the 44th Presidency. – P. 23.

⁹⁴ Cyberspace Policy Review: Assuring a Trusted and Resilient Information and Communications Infrastructure (issued on 29.05.2009) // The White House. URL: http://www.whitehouse.gov/assets/documents/Cyberspace_Policy_Review_final.pdf (վերջին մուտքը՝ 15.10.2011թ):

հետ հարաբերություններին, որոնք ոլորտում ԱՄՆ-ի պոտենցիալ հակառակորդներն էին⁹⁵: Մյուս ողղությունները զարգացնում էին այն ռազմավարական կողմնորոշումները, որոնք կիրեռանվտանգության ապահովման ժամանակ մշակվել էին դեռևս Քլինտոնի և Բուշի կառավարությունների կողմից:

Ավելին, կիրեռտարածությունում անվտանգության ապահովման հարցերի հետ կապված համագործակցությունը օտարերկրյա գործընկերներ հետ աշխուժանցելու նպատակով 2011թ.-ի մայիսին ԱՄՆ-ում մշակվեց և հրապարակվեց «Կիրեռտարածության միջազգային ռազմավարությունը», որտեղ ձևակերպված էին գլոբալ մակարդակում ԱՄՆ կիրեռանվտանգության ապահովման հիմնական մոտեցումները, որի համար կարող էին կիրառվել ազդեցության բոլոր հնարավոր միջոցները՝ դիվանագիտական, ռազմական, տնտեսական⁹⁶:

Ռազմավարության համաձայն, ԱՄՆ հիմնական խնդիրը բաց, փոխգործակցող, անվտանգ ու հուսալի տեղեկատվական ու հաղորդակցային ենթակառուցվածքի ստեղծումն է, որի նպատակն անհրաժեշտ է տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների համար բազմակողմ փոխհամաձայնեցված միջազգային չափորոշիչների մշակում ու ընդունում⁹⁷:

Կիրեռտարածության միջազգային ռազմավարությունը որակապես նոր ծրագրային փաստաթուղթ է և տարբերվում է այդ բնագավառում գոյություն ունեցած բոլոր նախորդ փաստաթղթերից: Մասնավորապես, եթե նախորդ փաստաթղթերում առաջնային էր դիտվում կրիտիկական կարևոր ենթակառուցվածքի պաշտպանությունը, ապա վերջինում հստակ նշվում էր, որ գոյություն ունի վնասակար տեղեկատվություն, որի ազդեցությունը պետության, հասարակության ու անհատի վրա կարող է ունենալ ամենաբացասական ազդեցությունը:

Փաստաթղթում նշվում է, որ ԱՄՆ հիմնական նպատակը առաջնորդության ապահովումն է խաղաղ ու կայուն կիրեռտարածության ստեղծման բազմակողմ գործընթացում: ԱՄՆ նպատակ ունի զարգացնել համագործակցությունը երկու

⁹⁵ Securing Cyberspace for the 44th Presidency. A Report of the CSIS Commission on Cybersecurity for the 44th Presidency. – P. 23.

⁹⁶ International Strategy for Cyberspace // White House.

(http://www.whitehouse.gov/sites/default/files/rss_viewer/international_strategy_for_cyberspace.pdf

(վերջին

մուտքը՝ 15.10.2015թ.):

⁹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 5:

ուղղություններով՝ միջպետական (երկկողմ ու բազմակողմ հիմքերով) և պետական-մասնավոր (ինտերնետ ծառայություն տրամադրողներ, ծրագրային ապահովումը մշակողներ, համակարգչային տեխնիկա արտադրողներ):

Ինչպես նշեցինք, երկկողմ համագործակցության համար ԱՄՆ-ը ուշադրություն էր դարձնում Ռուսաստանի ու Չինաստանի հետ համագործակցության ընդլայնմանը, որտեղից գալիս էին տեղեկատվական հիմնական սպառնալիքները:

Ռուս-ամերիկյան համագործակցության առաջին փուլը սկսվել է Օբամայի կառավարման ժամանակ, երբ 2009թ-ի նոյեմբերին Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղարի՝ Վաշինգտոն կատարած այցի ժամանակ ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչները քննարկեցին ռուս-ամերիկյան հնարավոր պայմանագրի ստորագրումը՝ համացանցի զինաթափման վերաբերյալ: Երկու երկրների միջև համագործակցության իրական պայմանավորվածություն ձեռք է բերվել 2013թ-ի հունիսի 17-ին «Մեծ ութնյակի» գագաթնաժողովի շրջանակում կայացած հանդիպումների արդյունքում, որտեղ երկու երկրների նախագահները հանդես են եկել համագործակցության նոր ոլորտում վստահության ամրապնդման հայտարարությամբ: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ռուս-ամերիկյան նախագահական հանձնաժողովի շրջանակում երկկողմ աշխատանքային խումբ ստեղծել, որը կզբաղվի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև միջազգային անվտանգության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաներից բխող սպառնալիքների հարցերով⁹⁸:

Չինաստանի հետ համագործակցության հաստատման առաջին քայլերը դարձյալ կատարվել են 2013թ-ին, երբ երկու երկրների աշխատանքային խմբերը պայմանավորվել են կիրառարարությունում անվտանգության խնդիրների ապահովման, կիրառարարությունում և ինտելեկտուալ սեփականության հետ կապված հարցերի շուրջ⁹⁹: Չնայած, հարկ է նշել, որ ներկայումս տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերում Չինաստանի մոտեցումը էականորեն

⁹⁸ О новой области сотрудничества в укреплении доверия. Совместное заявление президентов Российской Федерации и Соединенных Штатов Америки. 17 июня 2013 г. (http://news.kremlin.ru/ref_notes/1479 (վերջին մուտքը՝ 20.05.16թ.)).

⁹⁹ Farnsworth T. U.S., China Meet on Cybersecurity. (http://www.armscontrol.org/act/2013_09/US-China-Meet-on-Cybersecurity (վերջին մուտքը՝ 20.05.17թ.)).

հակասում է համացանցում թափանցիկության ամերիկյան ընկալմանը¹⁰⁰: Չինաստանում համացանցի վերահսկողության նպատակը անցանկալի տեղեկատվության ներթափանցման կանխումն է երկիր, ինչպես նաև տեղեկատվության արտահոսքի կանխումը երկրի սահմաններից դուրս:

Բացի Ռուսաստանի ու Չինաստանի հետ համագործակցելուց և ոլորտում երկկողմ համագործակցությունն ընդլայնելուց, ԱՄՆ-ը փորձում է ընդլայնել նաև բազմակողմ համագործակցությունը, որը հիմնականում կատարում է ՆԱՏՕ-ի, ԵԱՀԿ-ի և ԵՄ-ի շրջանակում:

ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ն դիտարկում է որպես տեղեկատվական օպերացիաների ու կիրառապատերազմների իրականացման բնագավառում ամերիկյան ձեռքբերումների առաջխաղացման հարթակ: ՆԱՏՕ-ի նման ռազմական միավորումները և դրանց շրջանակում պետությունների միջև համագործակցությունը թույլ են տալիս ուժեղացնել համատեղ պոտենցիալը և կբարելավեն ԱՄՆ-ի հնարավորությունը՝ հակազդելու պետական ու ոչ պետական կառույցների գործողություններին:

Կիրառապաշտպանության ապահովմանն ուղղված խնդիրներին ՆԱՏՕ-ի շրջանակում հատուկ ուշադրություն է դարձվել 2014թ-ին Ուելսի գագաթնաժողովի ժամանակ, որի ընթացքում ընդունվել է ՆԱՏՕ-ի նոր կիրառապաշտպանությունը: Գագաթնաժողովի հայտարարության մեջ նշվում էր, որ Կիրառապաշտպանությունը ՆԱՏՕ-ի առանցքային խնդիրներից է¹⁰¹:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ՆԱՏՕ-ն բավականին առաջ է անցել կիրառանվտանգության հետ կապված հարցերում: Ընդ որում, հարկ է նշել, որ ԱՄՆ-ը միության կիրառապաշտպանության մշակման ու կիրառման մեջ առաջատար դերակատարներից է:

Խնդրո առարկայի հետ կապված՝ ԱՄՆ-ը ակտիվորեն շարունակում է համագործակցությունը նաև «Մեծ ութնյակի» հետ, որի շրջանակում հատկանշական էր 2011թ-ի մայիսին ընդունված «Նորացված ընտրություն հանուն ազատության ու

¹⁰⁰ Старкин С.В. Влияние геополитической среды на трансформацию контрразведывательной парадигмы спецслужб США // Вестник Брянского государственного университета. 2011. № 2. С. 130–134.

¹⁰¹ Section 72. Wales Summit Declaration. Issued by the Heads of State and Government participating in the meeting of the North Atlantic Council in Wales. September 5, 2014.

(http://www.nato.int/cps/en/natohq/official_texts_112964.htm (վերջին մուտքը՝ 11.09.16թ)):

ժողովրդավարության»¹⁰² փաստաթուղթը: Փաստաթղթում նշվում էր միջազգային համագործակցության անհրաժեշտությունը՝ կրիտիկական ռեսուրսների, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների, տեղեկատվական ենթակառուցվածքի պաշտպանությունն ապահովելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ահաբեկչական ու հանցավոր գործողություններին հակազդելու համար:

Կիբեռանվտանգության հարցերի հետ կապված՝ ԱՄՆ-ը ակտիվորեն համագործակցում է նաև Եվրամիության, ԵԱՀԿ-ի հետ:

Այսպիսով, ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրներին սկսեցին ուշադրություն դարձնել 1990-ական թվականների սկզբից: Բանն այն է, որ նախագահ Քլինտոնն իրականացնում էր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման քաղաքականություն, իսկ վերջիններիս սրընթաց զարգացման հետևանքով դրանց ներթափանցումը երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր կարևոր բնագավառներ կախվածություն առաջացրեց տեղեկատվական ենթակառուցվածքից, ի հայտ եկան որակապես նոր սպառնալիքներ: Հենց այդ ժամանակ համակարգչային ցանցերը և տեղեկատվական համակարգերը դասվեցին երկրի կրիտիկական ենթակառուցվածքների շարքին, տեղեկատվական անվտանգությունը դարձավ ԱՄՆ-ի ազգային անվտանգության անբաժանելի բաղկացուցիչ:

Ոլորտի համար շրջադարձային եղան 2001թ-ի ահաբեկչական գործողությունները, որոնցից հետո լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացվեցին տեղեկատվական անվտանգության ապահովման համար, հատուկ կարևորվեց տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կառավարության գործունեության, ռազմական ու հետախուզական գործողությունների իրականացման ժամանակ:

2008թ-ի Օբամայի իշխանության գալուց հետո, ԱՄՆ-ը, ընդունելով, որ միայնակ չի կարող դիմակայել տեղեկատվական տարածությունից եկող սպառնալիքներին, որդեգրեց միջազգային համագործակցության քաղաքականության երկկողմ ու բազմակողմ քաղաքական կուրս: Ընդ որում, երկկողմ համագործակցության հետ

¹⁰² Deauville G8 Declaration. Renewed Commitment for Freedom and Democracy. Section II. – P.6

կապված, ԱՄՆ-ի համար կարևորվում է համագործակցությունը Ռուսաստանի և Չինաստանի հետ, որոնք երկրի համար կիբեռնապառնալիքների հիմնական աղբյուրներն են և ոլորտում հիմնական մրցակիցները, իսկ բազմակողմ մասշտաբով համագործակցությունը երկիրն իրականացնում է միջազգային կազմակերպությունների՝ հատկապես ՆԱՏՕ-ի շրջանակում, որտեղ ինքը թելադրող դիրք ունի:

Ինչ վերաբերում է ոլորտը կարգավորող իրավական նորմերին, ապա այսօր ԱՄՆ-ում գործող՝ կիբեռանվտանգության ոլորտի օրենսդրական փաթեթը («Կիբեռօրենսգիրքը») կարգավորում է տվյալների գաղտնիության, ամբողջականության և հասանելիության ապահովումը, սահմանում մարդու իրավունքների և անձնական տվյալների պաշտպանության իրավական շրջանակները, կարգավորում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների անվտանգ կիրառումը, համակարգչային ցանցերի պաշտպանությունը, կիբեռհանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող օրենսդրությունը և, ըստ այդմ, նշված ոլորտներում պետական գերատեսչությունների և մասնավոր ընկերությունների գործառույթները:

ԱՄՆ-ի 2015թ.-ի «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ տեղեկատվական անվտանգության ուղղակի հիշատակումը համապատասխանում է նրա նեղ իմաստին, այն է՝ կիբեռանվտանգությանը, որի առանձին բաժնում մասնավորապես նշվում է. «Որպես Համացանցի ծննդավայր՝Միացյալ Նահանգներն ունի ցանցային աշխարհն առաջնորդելու համար հատուկ պատասխանատվություն: Ավելի ու ավելի է աճում բարեկեցության ու անվտանգության կախումը բաց, համագործակցելի, պաշտպանված և հուսալի համացանցից...Հենվելով Կիբեռանվտանգության կամավոր հայեցակարգի վրա՝ մենք պաշտպանում ենք Դաշնային ցանցերն ու մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ աշխատում ամրապնդելու ԱՄՆ համար կենսականորեն կարևոր ենթակառուցվածքի անվտանգությունն ու կայունությունը¹⁰³:

¹⁰³ «National Security Strategy». The White House, February 2015, PP. 12–13 (https://www.whitehouse.gov/sites/default/files/docs/2015_national_security_strategy.pdf, վերջին մուտքը՝ 13.07.2017թ.):

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության ապահովման ամերիկյան փորձը ցույց է տալիս, որ ԱՄՆ տեղեկատվական անվտանգության և քաղաքականության էվոլյուցիան համաշխարհային զարգացումների պրոյեկցիան էր, այդտեղ տեղեկատվական անվտանգության խնդիրները ի սկզբանե տեխնիկական՝ համակարգչային տվյալների պաշտպանությունից, սկսեցին դիտվել որպես կրիտիկական, իսկ տեղեկատվական քաղաքականությունը դարձավ արտաքին և անվտանգության քաղաքականության անքակտելի բաղադրիչ: Որպես տեղեկատվական անվտանգության ապահովման կարևոր միջոցառումներ, հարկ է առանձնացել՝

- Պետական մարմինների ու մասնավոր սեկտորի փոխգործունեության ընդլայնումը,
- Կիբեռանվտանգության հետ կապված հարցերի մասին տեղեկացվածության բարձրացումը,
- Ոլորտում որակյալ կադրերի պատրաստումը,
- Միջազգային համագործակցության ընդլայնումը:

ԱՄՆ օրինակը խոսում է և ՀՀ համար կարող է ուսուցողական լինել տեղեկատվական անվտանգության կառուցակարգերի մշակման և անհրաժեշտ գործիքարանի հստակեցման հարցում: Մասնավորապես, անհրաժեշտ է լրամշակել ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը՝ այն համապատասխանեցնելով ժամանակի արդի պահանջներին, որում տեղեկատվական անվտանգությունը կդիտվի երկրի կրիտիկական ենթակառուցվածքների շարքին, առանձին բաժին կհատկացվի կիբեռանվտանգությանը: ԱՄՆ օրինակը ուսուցողական կարող է լինել նաև ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման տեսանկյունից, որը կարող է իրականացվել թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ մասշտաբներով: Բացի այդ, անհրաժեշտ է բարձրացնել տեղեկատվական սպառնալիքների մասին հանրային իրազեկման մակարդակը, ինչը թույլ կտա խուսափել կամ ըստ արժանվույն արձագանքել տեղեկատվական տարածությունից բխող սպառնալիքներին: Հարկ է նաև կրթել հանրությանը, ինչի արդյունքում մեր երկիրը ոլորտում որակյալ

մասնագետներ կունենա, ովքեր կարող են ոչ միայն պաշտպանողական, այլև անհրաժեշտության դեպքում հարձակողական միջոցառումներ իրականացնել:

2.2. Տեղեկատվական անվտանգության ապահովման ՌԴ փորձի նշանակությունը ՀՀ-ում

Հետխորհրդային տարածությունում տեղեկատվական անվտանգության ընդհանուր սպառնալիքների և քաղաքականության մարտահրավերների էության պարզաբանման առումով ուշագրավ է Ռուսաստանի օրինակը, որտեղ ևս 21-րդ դարում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագընթաց զարգացման հետևանքով տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրները արդիական են դարձել: Համաձայն InfoWatch վերլուծական կենտրոնի տվյալների, պարբերաբար երկրից գաղտնի տեղեկատվության արտահոսք է նկատվում: Միայն 2016թ-ի առաջին կիսամյակում նման արտահոսքի 840 դեպք է գրանցվել, ինչը նախորդ տարվա հետ համեմատ՝ 16 տոկոսով ավելին է¹⁰⁴:

Նշենք, որ Ռուսաստանում տեղեկատվական անվտանգության խնդիրների ուսումնասիրության ժամանակ ելնում են հիմնահարցի ուսումնասիրության լայն մոտեցումից: Այսպես, ռուս գիտնական Ե. Ռոգովսկին տեղեկատվական անվտանգությունը սահմանում է. «Տեղեկատվական տարածությունում անհատի, հասարակության ու պետության շահերի պաշտպանության վիճակ կանխամտածված կամ պատահական ազդեցությունից, որոնք խախտում են տեղեկատվության կամ տեղեկատվական հաղորդակցային ենթակառուցվածքի ամբողջականությունը, օբյեկտիվությունը, հասանելիությունը, գաղտնիությունը»¹⁰⁵:

Տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրներին Ռուսաստանում սկսել են լրջորեն ուշադրություն դարձնել ԽՍՀՄ-ի և երկբևեռ համակարգի փլուզումից հետո՝ 20-րդ դարի 90-ական թվականներից: Բանն այն է, որ հրաժարվելով տեղեկատվության վրա խիստ վերահսկողություն սահմանած նախկին համակարգից՝ սկսեցին առաջին պլան մղվել պետական վերահսկողությունից ՋԼՄ-ների անկախության, խոսքի ազատության գաղափարները: Վերոհիշյալին գումարվեցին նաև ԱՄՆ-ը ձգտումները՝ դառնալու համաշխարհային քաղաքականության թելադրող:

¹⁰⁴ Исследование утечек конфиденциальной информации в первом полугодии 2016 года // Аналитический центр компании InfoWatch (https://www.infowatch.ru/report2016_half, վերջին մուտքը՝ 05.05.2017թ.):

¹⁰⁵ Роговский Е. А. США. Информационное общество.-М.: Международные отношения, 2008.-С. 396.

Հենց վերջինս է սառը պատերազմի ավարտից անմիջապես հետո վերանայել ազգային անվտանգության քաղաքականությունը և մշակել հայեցակարգային նոր փաստաթղթեր, որոնցում հատուկ տեղ էր տրվում նոր տեխնոլոգիաներին՝ առաջին հերթին տեղեկատվական:

Ավելին, համաշխարհայնացման ժամանակակից գործընթացները, նոր մարտահրավերներն ու սպառնալիքները, գիտության ու տեխնիկայի զարգացումը սոցիումի անվտանգության համար նոր խնդիրներ էին առաջացրել, ինչի արդյունքում անխուսափելի էր երկրի ազգային անվտանգության հայեցակարգի մշակումը:

Կարծում ենք՝ ՌԴ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում երկրի պաշտոնական մոտեցումը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել հենց ոլորտին վերաբերվող հայեցակարգային փաստաթղթերի էվոլյուցիան:

Այսպես, 2000թ-ին երկրում պաշտոնապես հաստատված՝ դեռևս 1997թ-ից մշակված Ազգային անվտանգության ռազմավարությունում մասնավորապես նշվում էր. «Բարդանում են տեղեկատվության բնագավառում ՌԴ-ի ազգային անվտանգության սպառնալիքները: Լուրջ վտանգ են իրենցից ներկայացնում մի շարք երկրների ձգտումը՝

- համաշխարհային տեղեկատվական տարածության մեջ իշխելու, արտաքին ու ներքին տեղեկատվական շուկայից Ռուսաստանին դուրս մղելու,
- մի շարք երկրների կողմից տեղեկատվական պատերազմների հայեցակարգերի մշակումը, որը ենթադրում է աշխարհի այլ երկրների տեղեկատվական բնագավառի վրա վտանգավոր ազդեցության միջոցների ստեղծում,
- տեղեկատվական ու հաղորդակցային համակարգերի բնականոն գարծառնության, ինչպես նաև տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության խափանումը, տեղեկատվական ռեսուրսներին անթույլատրելի մուտքը»¹⁰⁶:

Տեղեկատվական անվտանգության հետ կապված հարցերին մեծապես ուշադրություն դարձրեցին Վ. Պուտինի իշխանության գալուց հետո:

Արդեն 2000թ-ի ՌԴ-ի տեղեկատվական անվտանգության հայեցակարգում տեղեկատվական անվտանգությունը առաջին անգամ դիտվում է որպես երկրի

¹⁰⁶ Концепция Национальной безопасности РФ 1997г. Разд. III (<http://www.kremlin.ru/acts/bank/11782> , վերջին մուտքը՝ 13.04.2017թ.):

ազգային անվտանգության անբաժանելի մաս և սահմանվում որպես տեղեկատվական ոլորտում ազգային շահերի պաշտպանվածության վիճակ՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրությամբ¹⁰⁷: Հայեցակարգում ՌԴ տեղեկատվական անվտանգության բոլոր սպառնալիքները բաժանվում են չորս խմբի՝

- Սպառնալիքներ՝ ուղղված մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրանց անհատական, խմբային և հասարակական գիտակցության ձևավորմանը, Ռուսաստանի հոգևոր վերածննդին,
- Սպառնալիքներ՝ ուղղված Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը,
- Սպառնալիքներ՝ ուղղված հայրենական տեղեկատվական ռեսուրսների արտադրության զարգացմանը, այդ թվում՝ տեղեկատվայնացման, հաղորդակցության ու կապի միջոցների արտադրության, դրանց արտադրանքի ներքին շուկայի պահանջարկների բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովմանը.
- Սպառնալիքներ՝ ուղղված տեղեկատվական և հեռահաղորդակցային միջոցների և համակարգերի անվտանգությանը ինչպես արդեն տեղակայված, այնպես էլ Ռուսաստանի տարածքում ստեղծված:

Ըստ էության, սպառնալիքների միայն չորրորդ խմբում էր խոսք գնում կիրբեռսպառնալիքների մասին, ինչպիսիք են, օրինակ, այնպիսի ծրագրերի մշակումն ու տարածումը, որոնք խախտում են տեղեկատվական և հաղորդակցային համակարգերի բնականոն գործառնությունը:

Գրեթե միաժամանակ՝ 2000թ. փետրվարի 28-ին, ընդունված ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգում նշվում է. «Ռուսաստանի Դաշնության ազգային հզորության գլխավոր բաղկացուցիչներից են երկրի մտավոր, գաղափարական ու

¹⁰⁷ Доктрина информационной безопасности РФ от 2000г. (<http://base.garant.ru/182535/>, վերջին մուտքը՝ 10.03.2017թ.):

տեղեկատվական կարողությունները»: ՌԴ արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից է համաշխարհային հասարակության լայն շրջանակներին օբյեկտիվ ու ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել միջազգային հիմնական խնդիրների հետ կապված երկրի դիրքորոշման, արտաքին քաղաքական նախաձեռնությունների և Ռուսաստանի Դաշնության գործողությունների, ինչպես նաև ռուսական մշակույթի, գիտության մասին: Ի դեպ, 2016թ-ին ուժի մեջ է մտել ՌԴ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը¹⁰⁸:

Ըստ էության, վերոհիշյալ փաստաթղթով Ռուսաստանը փորձում էր համաշխարհային հասարակության մեջ ձևավորել երկրի դրական կերպարը, ինչը Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական առաջնահերթություններից է:

2009թ.-ի մայիսի 12-ին նախագահի հրամանով ուժը կորցրել է ՌԴ Ազգային անվտանգության հայեցակարգը՝ դրա փոխարեն նոր, ավելի ընդգրկուն հայեցակարգ է մշակվել՝ ՌԴ Ազգային անվտանգության ռազմավարությունը մինչև 2020թ.¹⁰⁹: Ի դեպ, նոր ռազմավարության մեջ առանձին բաժին չի հատկացվել տեղեկատվական անվտանգությանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիրառվում է Տեղեկատվական անվտանգության հայեցակարգը՝ որպես առանձին փաստաթուղթ:

ՌԴ Նախագահի 2016թ-ի N646 կարգադրությամբ ընդունվել է երկրի տեղեկատվական անվտանգության նոր հայեցակարգը, որտեղ հիմնական տեղեկատվական սպառնալիքների և տեղեկատվական անվտանգության նկարագրման ժամանակ նշվում են նաև այն բացասական գործոնները, որոնք տարբեր բնագավառներում (երկրի պաշտպանություն, պետական ու հասարակական անվտանգություն, տնտեսություն, գիտություն, տեխնոլոգիաներ ու կրթություն, ռազմավարական կայունություն և իրավահավասար ռազմավարական գործընկերություն) ազդում են տեղեկատվական անվտանգության վիճակի վրա¹¹⁰:

Փաստաթղթում որպես հիմնական տեղեկատվական սպառնալիքներ նշվել են մի շարք արտասահմանյան երկրների կողմից ռազմաքաղաքական նպատակներով

¹⁰⁸ Концепция внешней политики РФ (<http://www.kremlin.ru/acts/bank/41451>, վերջին մուտքը՝ 03.03.2017թ.):

¹⁰⁹ Стратегия Национальной безопасности РФ до 2020г. (<http://www.zakonprost.ru/content/base/part/618851>, վերջին մուտքը՝ 10.05.2017թ.):

¹¹⁰ Доктрина информационной безопасности РФ (<http://www.kremlin.ru/acts/bank/41460>, վերջին մուտքը՝ 05.04.2017թ.):

տեղեկատվական-տեխնոլոգիաների կիրառման աճը, ռուսական պետական մարմինների, գիտական կազմակերպությունների և պաշտպանական-արտադրական համալիրի հանդեպ տեխնիկական հետախուզություն իրականացնող կազմակերպությունների գործունեության ընդլայնումը:

Հատկանշական է, որ նոր հայեցակարգի ընդհանուր դրույթներում սահմանված են փաստաթղթում կիրառվող հիմնական հասկացությունները՝ տեղեկատվության բնագավառում ՌԴ ազգային շահեր, ՌԴ տեղեկատվական անվտանգության սպառնալիքներ, ՌԴ տեղեկատվական անվտանգություն, տեղեկատվական անվտանգության ապահովում, տեղեկատվական անվտանգության ապահովման ուժեր, տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցներ, տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգ, ՌԴ տեղեկատվական ենթակառուցվածք:

Փորձագետները նշում են, որ նոր հայեցակարգում ավելի շատ հիշատակումներ կան տեղեկատվական-հաղորդակցային ազդեցությունից պաշտպանվելու մասին, ինչը պայմանավորված է ռուսական քաղաքականության հանդեպ կանխակալ հայացքներ ունեցող արտասահմանյան ՋԼՄ-ների քանակի ավելացման հետ: Բացի այդ, ի հայտ է եկել պետական ու հասարակական անվտանգության գործունեության ևս մեկ կարևոր ուղղություն, այն է՝ տեղեկատվական ոլորտում հանցագործությունների կանխումն ու դրանց հակազդումը¹¹¹:

Նոր հայեցակարգում առաջին անգամ օգտագործվում է կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածք հասկացությունը, որի անխափան գործառնման ապահովումը խաղաղ ժամանակ, անմիջական սպառնալիքների ընթացքում և ռազմական դրության ժամանակ տեղեկատվության բնագավառում երկրի ազգային շահերից են:

Ինչպես նշվում է հայեցակարգում, ահաբեկչական և ծայրահեղական կազմակերպությունները լայնորեն կիրառում են ոչ միայն բացասական ազդեցության միջոցներ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի վրա, այլև տեղեկատվական ազդեցության մեխանիզմները անհատական, խմբային ու

¹¹¹ Димитренко Е.В. Сравнительный анализ доктрины информационной безопасности РФ в старой и новой редакции /Е.В. Димитренко, А.Ю. Швецов, А.М. Мастяева // Современные проблемы и перспективные направления инновационного развития науки: сборник статей международной научно-практической конференции: в 8 частях. – М., 2016. – С. 139-140.

հասարակական գիտակցության վրա: Ընդ որում, անհատական տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ քաղաքացիների տեղեկացվածության ցածր մակարդակը անձի տեղեկատվական անվտանգության խափանման պատճառ է դառնում: Դա է պատճառը, որ ՌԴ տեղեկատվական անվտանգության նոր հայեցակարգը կարևորում է ոչ միայն պետության, այլև ցանկացած կազմակերպության ու քաղաքացու տեղեկատվական անվտանգության սպառնալիքների վերաբերյալ նախազգուշացման միջոցները¹¹²:

Թվարկված խնդիրները կարելի է համախմբել գործունեության երկու ուղղություններով: Խնդիրների առաջին խումբը կապված է տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության, ինչպես նաև ցանկացած կազմակերպության յուրաքանչյուր աշխատակցի՝ բացասական տեղեկատվական ազդեցությունից պաշտպանելու հետ: Երկրորդ խմբի խնդիրները հիմնվում են քաղաքացու տեղեկատվական մշակույթի զարգացման վրա: Ընդ որում, կազմակերպության ղեկավարների խնդիրը կադրային անվտանգության ապահովման հետ կապված խնդիրներն են:

Ի դեպ, 2018թ-ի հունվարի մեկից Ռուսաստանում ուժի մեջ կմտնի «Ռուսաստանի Դաշնության կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի անվտանգության մասին»¹¹³ դաշնային օրենքը: Վերջինս կոչված է կարգավորելու հարաբերությունները ՌԴ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքի անվտանգության ապահովման բնագավառում՝ համակարգչային գրոհների ժամանակ դրա կայուն գործառնության ապահովման նպատակով:

Այսպիսով, անձի, հասարակության ու պետության տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրների շրջանակի պարբերաբար ընդլայնման, կիրճանվտանգության մշակույթի զարգացման, մասնավոր կյանքի առձեռնմխելիության և տեղեկատվություն մուտք ունենալու իրավունքի պաշտպանության, պետական կառավարման ժամանակ տեղեկատվական

¹¹² Доктрина информационной безопасности РФ (<http://www.kremlin.ru/acts/bank/41460>, վերջին մուտքը՝ 05.04.2017թ.):

¹¹³ О безопасности критической информационной инфраструктуры Российской Федерации (<http://publication.pravo.gov.ru/Document/View/0001201707260023?index=0&rangeSize=1>, վերջին մուտքը՝ 08.07.2017թ.):

տեխնոլոգիաների լայնորեն կիրառման և տեղեկատվական անվտանգության հետ կապված այլ բազում խնդիրների առաջացման հետևանքով ՌԴ-ում դեռևս 2000-ական թվականներից մշակվել, ընդունվել և ժամանակի նոր հրամայականների թելադրանքով լրամշակվել են հիմնահարցի կարգավորման հետ կապված մի շարք նորմատիվային փաստաթղթեր: Սակայն ռուս մասնագետների կարծիքով, իրավական կարգավորումը դեռևս բավարար մակարդակի վրա չէ:

Տեղեկատվական անվտանգության ապահովման համար ՌԴ-ն ջանքեր է գործադրում նաև միջազգային-իրավական մեխանիզմների մշակման համար: Նշենք, որ միջազգային շրջանակներում տեղեկատվական անվտանգության հետ կապված հարցերը դեռևս 1990-ական թվականներից էին դիտում որպես միջազգային անվտանգության կարևոր բաղկացուցիչ, ինչը պայմանավորված էր տեղեկատվական հասարակության վրա որակապես նոր սպառնալիքների առաջացմամբ, որոնք վերջնական արդյունքում կարող էին դառնալ միջազգային անվտանգության խափանման լուրջ պատճառներ:

Միջազգային տեղեկատվական անվտանգության համակարգը կոչված է հակազդելու ռազմավարական կայունության սպառնալիքներին և համաշխարհային տեղեկատվական տարածության մեջ նպաստելու իրավահավասար ռազմավարական գործընկերությանը: Միջազգային տեղեկատվական անվտանգության համակարգի ձևավորման բնագավառում համագործակցությունը բխում է ՌԴ ազգային շահերից և նպաստում նրա ազգային անվտանգության ամրապնդմանը¹¹⁴:

Ընդ որում, ոլորտում ՌԴ-ի գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով է ընթանում՝ երկկողմ համագործակցության մասշտաբով, ՄԱԿ-ի մակարդակով և տարածաշրջանային կազմակերպությունների, այն է՝ Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության մակարդակով (ՀԱՊԿ) Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության խնդիրները, որոնք ամրագրված են Միջազգային տեղեկատվական անվտանգության բնագավառում պետական քաղաքականության

¹¹⁴ Основы государственной политики Российской Федерации в области международной информационной безопасности на период до 2020 г. // <http://www.scrf.gov.ru/security/information/document114/>, (վերջին մուտքը՝ 31.10.2016թ):

հիմքերը մինչև 2020թ¹¹⁵. փաստաթղթում, համահունչ են շատ երկրների՝ միջազգային համագործակցության ամրապնդման միջոցով տեղեկատվական սպառնալիքներին հակազդելու ձգտումներին:

Ոլորտում ռուսական նախաձեռնությունների հիմնական հակառակորդը ԱՄՆ-ն է, որն առաջատար է տեղեկատվական զենքի մշակման գործում, իշխում է տեղեկատվական-հաղորդակցային համակարգերի ոլորտում և իր առջև խնդիր ունի այդ բնագավառում համաշխարհային առաջատարի դիրքերում մնալ:

Երկու երկրների միջև ոլորտում համագործակցության իրական պայմանավորվածություն ձեռք է բերվել 2013թ-ի հունիսի 17-ին, երբ երկու երկրների նախագահները պայմանավորվեցին ռուս-ամերիկյան նախագահական հանձնաժողովի շրջանակում երկկողմ աշխատանքային խումբ ստեղծել, որը կգրառվի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև միջազգային անվտանգության բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաներից բխող սպառնալիքների հարցերով¹¹⁶:

ՌԴ-ն ակտիվորեն համագործակցում է նաև երկկողմ մասշտաբով: Հատկանշական են հատկապես ՌԴ և Կուբայի Հանրապետության կառավարությունների միջև միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում 2014թ-ին Հավանայում ստորագրված համաձայնագիրը¹¹⁷, ՌԴ-ի և Բելառուսի Հանրապետության կառավարությունների միջև 2013թ-ին Մոսկվայում ստորագրված համաձայնագիրը¹¹⁸: Նշված համաձայնագրերում տեղեկատվական անվտանգության տակ հասկացվում է անձի, հասարակության ու պետության շահերի պաշտպանվածությունը սպառնալիքներից, ապակառուցողական և

¹¹⁵ Основы государственной политики в области международной информационной безопасности на период до 2020 года. Утверждены Президентом РФ 24 июля 2013 г.

(<http://www.scrf.gov.ru/security/information/document114/>, վերջին մուտքը՝ 06.08.2017թ.):

¹¹⁶ О новой области сотрудничества в укреплении доверия. Совместное заявление президентов Российской Федерации и Соединенных Штатов Америки. 17 июня 2013 г. (http://news.kremlin.ru/ref_notes/1479 (վերջին մուտքը՝ 20.05.16թ.))

¹¹⁷ Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Куба о сотрудничестве в области обеспечения международной информационной безопасности (http://www.mid.ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-33/44171, վերջին մուտքը՝ 10.07.2017թ.):

¹¹⁸ Соглашение между Правительством Российской Федерации и Правительством Республики Беларусь о сотрудничестве в области обеспечения международной информационной безопасности (http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=66855, վերջին մուտքը՝ 10.07.2017թ.):

տեղեկատվական տարածության մեջ այլ բացասական ազդեցությունից: Տեղեկատվական տարածությունն իր հերթին սահմանվում է որպես գործունեության ոլորտ՝ կապված տեղեկատվության ստեղծման, մշակման, փոխանցման, օգտագործման, պահպանման հետ և ազդում է այդ թվում նաև անհատական ու հասարակական գիտակցության, տեղեկատվական ենթակառուցվածքի և հենց տեղեկատվության վրա:

ՄԱԿ-ի շրջանակում դեռևս 1998թ-ին էր Ռուսաստանի նախաձեռնությամբ հարց բարձրացվել տեղեկատվական անվտանգության ապահովման մասին՝ դրանով իսկ խնդիրը միջազգային մակարդակ տեղափոխելով: ՌԴ-ն առաջարկել էր որոշումների փաթեթի նախագիծ, որով ոլորտի անվտանգության համար նպատակահարմար էր համարվում միջազգային-իրավական մեխանիզմների մշակումը: Հետագայում ՄԱԿ-ի շրջանակում ՌԴ-ն տարբեր նախագծերով է հանդես եկել, որոնցից մի մասը անդամ երկրների կողմից քննադատության էին արժանացել: Քննադատությունը հիմնականում կապված էր ՌԴ-ի կողմից արված այնպիսի առաջարկների հետ, որոնք արգելում էին համացանցի կիրառումը ռազմական և այլ երկրների ռեժիմների տապալման նպատակներով¹¹⁹:

Հետագայում թեման պարբերաբար քննարկվել է կազմակերպության հանձնաժողովներում, ստեղծվել է կառավարական փորձագետների խումբ, որի նպատակը միջազգային տեղեկատվական անվտանգության առավել կարևոր սպառնալիքների ուսումնասիրումն ու դրանց գնահատական տալն է եղել, ինչպես նաև հակազդման անհրաժեշտ միջոցառումների մշակումը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միության անդամ պետությունները տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերի հետ կապված տարբեր, հաճախ հակասական մոտեցումներ ունեն, ՄԱԿ-ի շրջանակում ՌԴ-ն ակնհայտ հաջողությունների չհասավ:

Փոխարենը Ռուսաստանը զգալի հաջողություններ ունեցավ տարածաշրջանային կազմակերպությունների մակարդակով հիմնահարցի ապահովման կանոնների մշակման գործում: Եթե ՆԱՏՕ-ում թելադրող դիրք ունի ԱՄՆ-ը, ապա ՀԱՊԿ-ում նման

¹¹⁹ Демидов О.В. Проект доклада для сборника «Научные записки ПИР-центра» (http://www.pircenter.org/kosdata/page_doc/p2713_1/pdf (վերջին մուտքը՝ 25.03.2017թ.):

որոշիչ ձայն Ռուսաստանն ունի: Վերջին տարիներին ՀԱՊԿ-ի գործունեության մեջ հատուկ արդիականություն են ձեռք բերել միջազգային համագործակցության զարգացման խնդիրները՝ տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական սպառնալիքներին և վտանգներին հավաքական ուժերով հակազդելու համար:

ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժան «Նորարարական լուծումներ Ռուսաստանի անվտանգության համար» տասներորդ ազգային ֆորումում նշել էր, որ կազմակերպությունը խիստ հետաքրքրված է նման սերտ համագործակցության և դրա արդյունքների պրակտիկ իրականացման մեջ, քանի որ ՀԱՊԿ-ի գլխավոր խնդիրն է հավաքական անվտանգության համակարգի կառուցումը, որը կհակազդի իրականության բոլոր սպառնալիքներին և վտանգներին¹²⁰:

Կազմակերպության շրջանակում փորձագետներն առանձնացնում են ռազմական համագործակցության հետևյալ մասնավոր ուղղությունները՝

- Տեղեկատվական տարածության մշտադիտարկման մեխանիզմների ու մեթոդաբանության մշակում,
- Միջազգային տեղեկատվական անվտանգության բնագավառում սպառնալիքներին հակազդման համատեղ միջոցառումների մշակում և իրականացում,
- Մեխանիզմների ստեղծում, որոնք կհամակարգեն կազմակերպության պատասխանատվության տակ գտնվող տարածաշրջանում տեղեկատվական անվտանգության ապահովման հետ կապված գործողությունները¹²¹:

ՌԴ-ի դիրքորոշումը զգալի արժեք ունի նաև Շանհայի համագործակցության կամակերպության (ՇՀԿ) շրջանակում՝ ի տարբերություն ՄԱԿ-ի:

Միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում ՇՀԿ-ի անդամ պետությունների կառավարությունների միջև 2009թ.-ին Եկատերինբուրգում ստորագրված համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2011թ.-ից և հիմք

¹²⁰ Бордюжа Н. Н. Приветствие участников Десятого национального форума. “Инновационные решения для безопасности России” (ИНФОРУМ-10), Москва, 31 января-1 февраля, 2008. (<http://www.infoforum.ru/news/?p=591&n=1025>, վերջին մուտքը՝ 13.06.2017թ.):

¹²¹ Международная информационная безопасность: проблемы и решения / под общ. ред. С.А. Комова. – М., 2011, кн. 1, с. 113.

է հանդիսանում կամավոր հիմունքներով ոլորտում սերտ համագործակցության համար¹²²:

Փաստաթղթի յուրահատկությունը կայանում է նրանում, որ միջազգային-իրավական մասշտաբով առաջին անգամ սահմանվել են տեղեկատվական անվտանգության հստակ սպառնալիքները, ինչպես նաև այդ բնագավառում կողմերի համագործակցության հիմնական ուղղությունները, սկզբունքները, ձևերն ու մեխանիզմները: Ի դեպ, չնայած իր տարածաշրջանային բնույթին, կազմակերպությունը անդամակցելու համար բաց է նաև այլ պետությունների համար: Սա վկայում է նաև միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման համընդգրկուն համակարգ ստեղծելու գաղափարի և սկզբունքների մասին:

Չնայած տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում ընդունված մի շարք նորմատիվային փաստաթղթերին («Ռուսաստանի Դաշնության Ազգային անվտանգության ռազմավարություն»¹²³, «Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ»¹²⁴), «Ռուսաստանի Դաշնությունում տեղեկատվական հասարակության զարգացման ռազմավարություն»¹²⁵, «Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններ»¹²⁶, «Ռուսաստանի Դաշնության ենթակառուցվածքների կրիտիկական կարևոր օբյեկտների արտադրական ու տեխնոլոգիական գործընթացների կառավարման ավտոմատացված համակարգերի տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղություններ»¹²⁷, «Միջազգային

¹²² О вступлении в силу Соглашения между правительствами государств-членов ШОС о сотрудничестве в области обеспечения международной информационной безопасности (http://www.mid.ru/mezhdunarodnaa-informacionnaa-bezopasnost/-/asset_publisher/UsCUTiw2pO53/content/id/203770, վերջին մուտքը՝ 10.05.2017թ.):

¹²³ Стратегия Национальной безопасности Российской Федерации, утв. Указом Президента РФ № 683 от 31 декабря 2015г. (<http://www.scrf.gov.ru/security/docs/document133/>, վերջին մուտքը՝ 14.04.2017թ.):

¹²⁴ Доктрина Информационной безопасности Российской Федерации, утв. Указом Президента РФ № 646 от 5 декабря 2016г. (<http://www.scrf.gov.ru/security/information/document5/>, վերջին մուտքը՝ 14.04.2017թ.):

¹²⁵ Стратегия развития информационного общества в Российской Федерации, Утв. Указом Президента РФ № Пр-212 от 7 февраля 2008г. (<http://www.scrf.gov.ru/documents/6/90.html>, վերջին մուտքը՝ 14.04.2017թ.):

¹²⁶ Основные направления научных исследований в области обеспечения информационной безопасности Российской Федерации, утв. Исполняющим обязанности Секретаря Совета Безопасности Российской Федерации, председателя научного совета при Совете Безопасности Российской Федерации 7 марта 2008 г, (<http://www.scrf.gov.ru/security/information/document94/>, վերջին մուտքը՝ 13.05.2017թ.):

¹²⁷ Основные направления государственной политики в области обеспечения безопасности автома-

տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության սկզբունքները մինչև 2020թ.»¹²⁸, «Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական ռեսուրսների վրա համակարգչային հարձակումների հայտաբերման, նախազգուշացման, հետևանքների ոչնչացման պետական համակարգերի հայեցակարգ»¹²⁹)՝ ռուս մասնագետները դեռևս բավարար մշակված չեն համարում հիմնախնդրի ուսումնասիրության իրավական աստիճանը:

Ռուսաստանի Դաշնության Հետախուզական կոմիտեի նախագահ Ա. Ի. Բաստրիկինի կարծիքով, ՌԴ-ին անհրաժեշտ է պետական քաղաքականության գաղափարական հայեցակարգ¹³⁰, որն առաջին հերթին աշխարհահայեցակարգային, բարոյական, կրոնական ու քաղաքական արժեքների համակարգ է և ընդունվում է հասարակության մեծամասնության կողմից: Իսկ նման գաղափարական հայեցակարգ ներկայումս Ռուսաստանում բացակայում է:

Այդուհանդերձ, ըստ ՄԱԿ-ի Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) «Կիբեռանվտանգության գլոբալ ինդեքս 2017» վարկանիշի, կիբեռանվտանգության ապահովման բնագավառում Ռուսաստանը 11-րդն է աշխարհի՝ հարցման ցուցակում ընդգրկված 193 երկրների շարքում¹³¹: Հարցման արդյունքներով գնահատվում է պետությունների կիբեռանվտանգության մակարդակը հինգ հիմնական ցուցանիշներով՝ օրենսդրական բազա, տեխնիկական տվյալներ, կազմակերպչական հարցեր, որակի բարձրացում և համագործակցություն:

ITU-ի փորձագետների կարծիքով՝ Ռուսաստանը ցույց է տվել լավագույն արդյունքը կիբեռանվտանգության ներուժի հզորացման առումով: Այդ ուղղությունը ներառում է կիբեռանվտանգության ստանդարտների մշակումը, հանրության

тизированных систем управления производственными и технологическими процессами критически важных объектов инфраструктуры Российской Федерации, утв. Президентом РФ Д. Медведевым 3 февраля 2012г. № 803 (<http://www.scrf.gov.ru/security/information/document113/>, վերջին մուտքը՝ 13.05.2017թ.):

¹²⁸ Основы государственной политики Российской Федерации в области международной информационной безопасности на период до 2020 г., утв. Указом Президентом РФ № Пр-1753 от 24 июля 2013г., (<http://www.scrf.gov.ru/security/information/document114/>, վերջին մուտքը՝ 13.05.2017թ.):

¹²⁹ Выписка из Концепции государственной системы обнаружения, предупреждения и ликвидации последствий компьютерных атак на информационные ресурсы Российской Федерации, Концепция утверждена Президентом Российской Федерации 12 декабря 2014 г. № К 1274 (<http://www.scrf.gov.ru/security/information/document131/>, վերջին մուտքը՝ 13.05.2017թ.):

¹³⁰ Бастрыкин А.И. Пора поставить действенный заслон информационной войне // Коммерсантъ Власть. 2016. 18 апреля (№ 15).

¹³¹ Россия заняла 11 место по уровню кибербезопасности в мире (<https://hightech.fm/2017/07/07/itu-top>, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

իրազեկումը, տեղեկատվական անվտանգության տեղական արտադրության խրախուսումը:

Այսպիսով, տեղեկատվական անվտանգության ոլորտում Ռուսաստանի փորձը հատկանշական է ոլորտը կարգավորող նորմատիվային բազայի անընդհատ կատարելագործման և ժամանակի պահանջներին համահունչ դարձնելու առումով, ինչը կարելի է կիրառել նաև Հայաստանի համար: ՌԴ նորմատիվային բազան, ի տարբերություն ԱՄՆ-ի, հիմնականում ունի պաշտպանողական բնույթ և ուղղված է ռազմավարական կայունությանը, իրավահավասար ռազմավարական գործընկերությանը և տեղեկատվական ինքնիշխանության պաշտպանությանը: Մինչդեռ ԱՄՆ-ի՝ նույն ոլորտի փաստաթղթերում նկատվում է երկրի ձգտումը՝ տեղեկատվական գերակայություն հաստատելու համաշխարհային մակարդակում:

Ինչ վերաբերվում է ոլորտում միջազգային համագործակցությանը, ապա ՌԴ-ն նույնպես հիմնահարցի արդյունավետ լուծման համար կարևորում է համագործակցության ընդլայնումը: Սակայն եթե ԱՄՆ-ի համար որպես հիմնական հարթակ ՆԱՏՕ-ն է, որտեղ ինքը թելադրող դիրք ունի, ապա ՌԴ-ն ակտիվորեն գործում է ՀԱՊԿ-ի և ՇՀԿ-ի շրջանակներում:

Մեր կարծիքով, բացի երկկողմ, ՄԱԿ-ի մակարդակով և տարածաշրջանային կազմակերպությունների մասշտաբով համագործակցություններից, ՌԴ-ի համար արդյունավետ կարող է լինել նաև պետական մասնավոր ընկերությունների հետ համագործակցությունը (ինտերնետ ծառայություն տրամադրողներ, ծրագրային ապահովումը մշակողներ, համակարգչային տեխնիկա արտադրողներ): Արդյունավետ կարող է լինել նաև այնպիսի նորմատիվային փաստաթղթերի մշակումը, որոնք ոչ միայն կլինեն պաշտպանողական բնույթի, այլև հնարավորություն կտան Ռուսաստանին հարձակողական միջոցներով ոլորտում գերակա դիրք զբաղեցնել:

Կարծում ենք՝ Ռուսաստանի փորձը կարող է կիրառելի լինել Հայաստանի՝ տեղեկատվական անվտանգության ոլորտին առնչվող նորմատիվային բազայի լրամշակման տեսանկյունից: Այդ առումով ակտուալ է հատկապես տեղեկատվական անվտանգության հայեցակարգի լրամշակումը, տեղեկատվական ենթակառուցվածքը երկրի կրիտիկական, այսինքն կենսական կարևոր ոլորտների շարքին դասելը:

2.3. Տեղեկատվական անվտանգության ապահովման մեխանիզմների ՉԺՀ փորձի կիրառական նշանակությունը ՀՀ-ում

Տեղեկատվական անվտանգության ապահովման չինական փորձը իրենից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Նախ նշենք, որ ի տարբերություն ԱՄՆ-ի և Ռուսաստանի, որոնք արևմտյան արժեքների ու մտածելակերպի ներկայացուցիչներ են, Չինաստանը արևելյան արժեքներ կրող ավադական պետություն է, որի մասին ողջ աշխարհում առասպելներ են հյուսվում: Այդ առասպելներին հաճախ նպաստում է չինական փակ հասարակությունը՝ իր բարդ լեզվով, օտարերկրացիների համար անհասկանալի մշակույթով, ավանդույթներով և այլն:

Ավելին, Չինաստանին հաճախ մեղադրում են տեղեկատվական տարածության մեջ վիրուսակիր ծրագրերի տարածման գործում: Արևմտյան երկրների հետախուզական ծառայությունների հաշվետվություններում ՉԺՀ-ն համարում են այն հիմնական երկրներից մեկը, որտեղից գալիս են տեղեկատվական անվտանգության սպառնալիքները: Այս ամենը, իհարկե, նպաստում է Չինաստանի բացասական կերպարի ստեղծմանը:ս

Չինական արժեքների պահպանության և դրանց արտաքին տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունից պաշտպանության հարցերը միշտ գտնվել են չինացի գիտնականների ուշադրության կենտրոնում¹³²: Թերևս այդ է պատճառը, որ երկրի իշխանությունները համացանցը և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները համարում են ինչպես հակառակորդի զսպման, այնպես էլ միջազգային ասպարեզում երկրի դրական իմիջ ձևավորելու համար կարևորագույն միջոցներ:

Այսպես, ներկայումս Չինաստանում ակտիվորեն կիրառվում են աստրոտուրֆինգի տեխնոլոգիաներ: Աստրոտուրֆինգը համացանցի օգտատերերի կողմից մշակված եզրույթ է, որը նշանակում է հաճախ հատկապես համացանցում կեղծ հասարակական կարծիքի ձևավորում, որտեղ հատուկ վարձակալված մարդիկ

¹³² Манойло А.В. Культурно-цивилизационные модели и технологии психологического разрешения международных конфликтов//Право и политика.2008, N4. С. 914-926.

բազմաթիվ ֆորումներում, ՁԼՄ-ների կայքերում և բլոգներում գրում են պատվիրված նամակներ, որոնց նպատակը քաղաքական գործչին, քաղաքական խմբերին կամ կուսակցություններին, տարբեր իրադարձությունների հանդեպ ազգային աջակցության տպավորություն ստեղծելն է¹³³:

Բացի այդ, Չինաստանի իշխանությունները հատուկ ուշադրություն են հատկացնում տեղեկատվական անվտանգության ապահովման ինչպես տեխնիկական, այնպես էլ տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունից պաշտպանելու խնդիրներին:

Հարկ է նկատել, որ տեղեկատվական հարձակումներին հակազդելու համար ներկայումս աշխարհի շատ երկրներում գործող Կոնֆուցիոսի ինստիտուտները բավականին լայնածավալ աշխատանքներ են իրականացնում Չինաստանի մասին միջերը փշրելու, չինական լեզուն ու մշակույթը գովազդելու, երկրի մասին ապատեղեկատվությունը հերքելու ուղղությամբ: Ի դեպ, մինչև 2020թ-ը չինարեն լեզվի միջազգային խորհրդի գրասենյակը՝ Հանբանը, մտադիր է Կոնֆուցիոսի ինստիտուտների թիվը աշխարհում հասցնել հազարի¹³⁴:

Չինաստանում «տեղեկատվական հակամարտություն» հասկացությունը դեռևս 1985թ-ին է օգտագործվել հայտնի տեսաբան Շեն Վեյգուանի կողմից¹³⁵: Չինացի ռազմական մասնագետները համարում են, որ ապագայի պատերազմներում հաջող ռազմական գործողությունների երաշխիքը մարտի դաշտում տեղեկատվական գերիշխանություն հաստատելն է, ինչը ենթադրում է հակառակորդի վրա ազդեցություն գործելու նպատակով տեղեկատվության ստացման, վերլուծման և օգտագործման հնարավորության ապահովում:

Երկրում քսաներորդ դարի վերջում սկսվել է մշակվել տեղեկատվական անվտանգության հայեցակարգը: Տեղեկատվական պատերազմի տակ հասկացվում էին գործողություններ՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն, որոնք ուղղված էին համաշխարհային տեղեկատվական տարածության վերահսկողությանը և

¹³³ Необходимость защитить интернет от «астротурфинга» приобретает все большую актуальность. (<http://www.inosmi.ru/world/20110318/167458693.html>, վերջին մուտքը՝ 14.07.2017թ.):

¹³⁴ Лю Яньдун. Совместная работа для устойчивого развития институтов Конфуция: Программная речь на V съезде Институтов Конфуция // Институт Конфуция (русско-кит. версия). 2011. –№ 1 (янв.).

¹³⁵ Панарин И.Н. Информационная война и геополитика. – М.: Поколение, 2006, С 56.

երկրի պաշտպանական տեղեկատվական սահմանի ստեղծմանը: Տեղեկատվական հակամարտությունն ընկալվում էր երկու՝ լայն և նեղ իմաստներով՝

- Լայն իմաստով ընկալումը պետական մակարդակի բոլոր բնագավառներում իրականացվող տեղեկատվական համակարտությունն է՝ գաղտնի կամ բացահայտ, խաղաղ կամ պատերազմական դրության ժամանակ, որը նպատակ ունի երկրի տեղեկատվական տարածության վրա վերահսկողություն սահմանելու՝ Չինաստանի ազգային շահերին ուղղված սպառնալիքները բացահայտելու և սեփական տեղեկատվական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- Նեղ իմաստով ընկալումը պատերազմների ու ռազմական համակարտությունների ժամանակ կիրառվող հակամարտությունն է, որի հիմնական նպատակը հակառակորդի զենքի ու զորքերի կառավարման համակարգերին վնաս հասցնելն է¹³⁶:

Ի դեպ, Չինաստանի Ազգային-ազատագրական բանակում տեղեկատվական-պատերազմական գործողություններ վարելու և զորքերի տեղեկատվական-հոգեբանական պաշտպանության համար պատասխանատու է բանակի Գլխավոր քաղաքական կառավարման ստորաբաժանումը:

2005թ-ի նոյեմբերին Չինաստանում ընդունվել է 2006-2020թթ ինֆորմատիզացիայի զարգացման պետական ռազմավարությունը, որտեղ ձևակերպված էին համացանցի զարգացման հիմնական ուղղությունները¹³⁷: Կառավարությունը խրախուսում էր համացանցի օգտագործումը որոշ բնագավառների աշխատակիցների՝ գիտնականների, ԶԼՄ-ների աշխատակիցների, բիզնեսմենների և հատկապես արտասահմանցի ներդրողների համար: Ի դեպ, համաձայն Չինաստանում լայնորեն կիրառում գտած լրզունգի, համացանցը աշխատանքային գործիք է և ոչ թե ժամանակ անցկացնելու միջոց¹³⁸:

¹³⁶ Информационные войны в киберпространстве-Китай и Индия (<https://interaffairs.ru/news/show/614>, վերջին մուտքը՝ 12.06.2017թ.):

¹³⁷ Положение интернета в Китае. Пресс-канцелярия госсвета КНР. 2011, 1 февраля, (http://russian.china.org.cn/government/archive/baipishu/txt/2011-02/01/content_21857458.htm, վերջին մուտքը՝ 12.06.2017թ.):

¹³⁸ Ибрагимова Г.Р. Стратегия КНР в киберпространстве: вопросы управления Интернетом и обеспечения информационной безопасности//Индекс безопасности. 2013. N1. С. 169-184.

2006թ-ից Չինաստանում համացանցի վրա վերահսկողություն իրականացնելու նպատակով իր աշխատանքներն է սկսել հատուկ ոստիկանական ծառայությունը: Համացանց-ոստիկանները կոչված են հսկելու կայքերի, առցանց ֆորումների և սոցիալական ցանցերի բովանդակությունը: Չինական մեծամասշտաբ կայքերում կամ ֆորումներում հաղորդագրություն թողնելու համար պետք է պարտադիր գրանցվել, որի ժամանակ անհրաժեշտ է լրացնել իրական անձնական տվյալներ, հասցե և նույնականացման համար: Վերոհիշյալ տվյալների հիման վրա համակարգչային բանկը ստուգում է տվյալների ճշտությունը, որից հետո միայն թույլատրվում է օգտատիրոջ գրանցումը¹³⁹: Այս ամենը հնարավորություն է տալիս արագ արձագանքել խախտումներին: Օրինակ, 2014թ-ի հունվարին Չինաստանի մի քանի նահանգներում ոստիկանությունը ձերբակալել է համացանցի օգտատերերի, որոնք բլոգներում տեղեկատվություն էին տարածել թոչնի գրիպի համաճարակի զանգվածային տարածման մասին: Այդ օգտատերերից շատերը տուգանվել են կամ ձերբակալվել¹⁴⁰:

Ի դեպ, խիստ վերահսկողություն է իրականացվում նաև համացանցի օգտատեր դառնալու համար: Ֆիզիկական անձը պետք է տեղական ոստիկանական բաժանմունքում համապատասխան ստուգում անցնի, որից հետո նոր միայն հնարավորություն ունենա օգտվել համացանցից: Իսկ համացանցի օգտագործման պայմանները խախտողների հանդեպ դրամական տուգանքներ են կիրառվում կամ զրկում նրանց դրա օգտագործման իրավունքից:

Պեկինը գտնում է, որ կիրեռտարածության պետական կանոնակարգումը մարդու իրավունքների և ազատությունների խախտում չէ, այլ ընդհակառակը, ուղղված է դրանց պաշտպանությանը:

Չինաստանում արտասահմանյան կայքեր մուտքը խիստ սահմանափակ է, արգելված է միջազգային սոցիալական ցանցերին չինացիների հասանելիությունը: Այնպիսի հայտնի կայքեր, ինչպիսիք են Twitter ու Youtube, որոնք ԱՄՆ-ի համար խոսքի ազատության ու ինքնարտահայտման համար հարթակ են, Չինաստանում համարվում են տեղեկատվական ազդեցության, արևմտյան արժեքների սերմանման

¹³⁹ Ибрагимова Г.Р. Стратегия КНР в киберпространстве: вопросы управления Интернетом и обеспечения информационной безопасности//Индекс безопасности. 2013. N1. С. 169-184.

¹⁴⁰ В Китае арестованы блогеры за распространение слухов об эпидемии птичьего гриппа (<http://itar-tass.com/mezhdunarodnaya-panorama/922235>, վերջին մուտքը՝ 11.06.2017թ.):

գործիքներ¹⁴¹: Հատկապես «արաբական գարնան» իրադարձությունների ժամանակ չինական ռազմական գործիչները ուշի ուշով հետևում էին արաբական երկրներում համացանցի միջոցով համակարգվող զանգվածային շարժումներին, ինչի հիման վրա այսօր չինացիները համացանցը դիտում են որպես ապագայի պատերազմների հիմնական հարթակ:

Արաբական երկրներում վերոհիշյալ զանգվածային շարժումներից հետո Չինաստանում կատարված իրադարձությունները հաճախ անվանվում են «Չինական մեծ վեբ-պատ»: Սրա էությունը կայանում է նրանում, որ արտաքին ազդեցություններից և չինական պետության ներսում անցանկալի տեղեկատվության հասանելիությունից պաշտպանվելու նպատակով չինական համացանցում տեղադրվել է Firewall համակարգ, որը սահմանափակում է երկրի բնակիչների մուտքը դեպի խնդրահարույց արտասահմանյան ռեսուրսներ: Այլ կերպ ասած՝ երկրի ողջ տարածքում գործող համացանցային ռեսուրսները ֆիլտրվում են¹⁴²:

Համացանցի վրա վերահսկողություն իրականացնելու նպատակով նույնիսկ առանձին ստորաբաժանում է ստեղծվել: Իհարկե չնայած այս ամենին, հաճախ չինացի օգտատերերին հաջողվում է շրջանցել այդ ամենը: Լայնորեն կիրառվում են պրոքսի սերվերներ և այլ ռեսուրսներ, որոնք հնարավորություն են տալիս խուսափել գրաքննությունից: Սոցիալ-քաղաքական հարցերի քննարկման ժամանակ օգտագործվում են այնպիսի բառեր, որոնք առաջին հայացքից քաղաքականության հետ որևէ կապ չունեն:

Բացի համացանցի վրա խիստ վերահսկողությունից, Չինաստանում հսկողության տակ են նաև լրատվամիջոցները, որոնք համարվում են մարդու գիտակցության մանիպուլյացիայի կարևորագույն գործիքներ: Այսպես, երկրում հեռուստաալիքների սեփականության իրավունքը պետության ձեռքում է գտնվում, հետևապես դրանց հիմնական խնդիրը կառավարության քաղաքական գծի զովագրումն է: Ի դեպ, տեղեկատվական պատերազմների ժամանակ Չինաստանի

¹⁴¹ Swaine M. D. Chinese Views on Cybersecurity in Foreign Relations Initiative
(http://carnegieendowment.org/email/South_Asia/img/CLM42MSnew.pdf (վերջին մուտքը՝ 25.07.2017թ.)):

¹⁴² Տե՛ս նույն տեղը:

ազգային հեռուստատեսության ծրագրերը երկրի ներսում ու արտերկրում թողարկվում են չինարեն, անգլերեն, իսպաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներով:

Չինաստանը համարում է, որ բաց և ազատ մուտքը տեղեկատվություն կարող է երկրի ներսում անկայունության սպառնալիք հանդիսանալ: Կիբեռանվտանգության քաղաքականության ձևավորման ժամանակ Չինաստանի կառավարությունը ուշադրություն է դարձնում համացանցի աճող դերին, կիբեռտարածությունում պետությունների փոխադարձ կախվածությանը, կիբեռտարածության միջոցով պոտենցիալ սպառնալիքների աճին, ինչպես նաև պետության կողմից համացանցի վերահսկողության անհրաժեշտությանը¹⁴³: Չինաստանի կառավարությունը գտնում է , որ կիբեռանվտանգությունը շոշափում է պետական ու կոմերցիոն, քաղաքացիների անձնական կյանքին վերաբերող հարցեր:

Չնայած երկրի իշխանությունների կողմից իրականացված նման քաղաքականությանը՝ այնուամենայնիվ զգալի է Չինաստանից անհատական տվյալների արտահոսքը: Դրանց թվում են համացանցային կայքերի խոցման դեպքերը, հաքերների գրոհները, տվյալների վաճառքը և այլն: Ամեն տարի երկրում համացանցային կայքերի խափանման հետևանքով մոտավորապես 5,53 միլիարդ հաշիվների արտահոսք է նկատվում, որոնցից մեծ մասը անձնական տվյալներ են պարունակում¹⁴⁴: Չինական կառավարությունը միշտ դեմ է եղել և խստորեն արգելել հաքերների կողմից ցանկացած հանցավոր գործողություն: Չինական օրենքն ամրագրում է, որ նրանք, ովքեր կիբեռ հանցանք են կատարել, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեն¹⁴⁵:

Կապված 2013թ-ի իրադարձությունների հետ, երբ Էդուարդ Սնոուդենի կողմից բացահայտվեցին ամերիկյան հատուկ ծառայությունների կողմից չինացի պաշտոնյաների, քաղաքական գործիչների հեռախոսազրույցների լսման դեպքերը, որոնք ըստ էության արվել էին դեռևս 2009թ-ից, ստիպեցին չինացի մասնագետներին

¹⁴³ Lieberthal K. G., Singer P. W. Cybersecurity and U.S. – China Relations.

(<http://www.brookings.edu/research/papers/2012/02/23-cybersecurity-china-us-singer-lieberthal> (վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

¹⁴⁴ Кибербезопасность по-китайски: в КНР вступает в силу новый закон об интернете (<http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4290068>, վերջին մուտքը՝ 11.06.2017թ.):

¹⁴⁵ Swaine M. D. Chinese Views on Cybersecurity in Foreign Relations Initiative.

(http://carnegieendowment.org/email/South_Asia/img/CLM42MSnew.pdf (վերջին մուտքը՝ 25.07.2017թ.):

ավելի լրջորեն զբաղվել երկրի տեղեկատվական անվտանգության տեխնիկական համակարգերի հարցերով: Համացանցում ամերիկյան լրտեսության դեպքերի հետաքննությունը ցույց է տվել, որ Չինաստանը ԱՄՆ-ի հակաօրինական գործողությունների իրականացման ժամանակ հիմնական թիրախն է եղել:

Հիմնական փաստաթուղթը, որում ընդգծվում է չինական հասարակության կյանքում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զգալի դերը, Չինաստանի Ազգային անվտանգության համընդգրկուն հայեցակարգն է¹⁴⁶: Հայեցակարգում նշվում է, որ ժամանակակից աշխարհում տեղեկատվությունը ոչ միայն լայն հնարավորություններ է ընձեռում, այլև Չինաստանի ժողովրդական Հանրապետության համար քաղաքական, տնտեսական, ռազմական անվտանգության սպառնալիքներ է ստեղծում¹⁴⁷:

Ընդ որում, այդ սպառնալիքներին հակազդելու համար ոլորտում չինացիների հիմնական թուլությունը պայմանավորված է արտասահմանյան տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաներից կախվածության հետ: Ուստի պատահական չէ, որ Չինաստանի ժողովրդական Հանրապետության նորարարական զարգացման պետական ռազմավարական ծրագրում հատուկ կարևորվում է արևմտյան տեխնոլոգիաներից այդ կախվածության նվազեցումը, ինչը ՉԺՀ-ի կիրճանվտանգության ապահովման կարևոր միջոցառումներից է: Նման կախվածության նվազեցումը հնարավոր է սեփական նորարարական տեխնոլոգիաների ներդրման և ամերիկյան ընկերությունների համար մրցակցություն ապահովելու միջոցով: Այդուհանդերձ, վերջին ժամանակներս կիրճանվտանգության ոլորտում զգալի ներդրումներ են արվել, իսկ տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների բնագավառում սեփական նախագծերի իրականացումը դարձել է նորարարական զարգացման կարևոր ուղղություններից մեկը:

Չինաստանի համար տեղեկատվական անվտանգությունը նախևառաջ երկրի նորարարությունների անվտանգությունն է և դրանում կարևոր է երկրի մոտեցումը կապված տեղեկատվական և կիրճանվտանգության հարցերի հետ:

¹⁴⁶ Гуанкай С. Всеобъемлющая концепция национальной безопасности Китая. Россия в Глобальной Политике. 2009. N3. (май-июнь); Lu Yongxiang. Science & Technology in China: A Roadmap to 2050. Chinese Academy of Science, 2010.

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղը:

2017թ-ի հունիսի մեկից Չինաստանում ուժի մեջ է մտել Չինաստանի կիբեռանվտանգության մասին օրենքը, որի առաջին հոդվածում մասնավորապես նշվում է. «Սույն օրենքը մշակվել է ցանցային անվտանգության ապահովման, կիբեռտարածության ինքնիշխանության և ազգային անվտանգության պաշտպանության, սոցիալական ու հասարակական շահերի բավարարման, քաղաքացիների, իրավաբանական անձանց և այլ կազմակերպությունների օրինական իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով՝ տնտեսության ու հասարակության տեղեկացվածության առողջ զարգացմանը նպաստելու համար»¹⁴⁸:

Օրենքում սահմանվում են ցանցային անվտանգության զարգացման հիմնական ուղղություններն ու միջոցառումները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին արձագանքելը: Հիշատակվում է նաև օրենքի խախտման համար պատասխանատվությունը: Ի դեպ, սույն օրենքը ավելի է ուժեղացնում համացանցի վրա վերահսկողությունը: Ավելին, վերոհիշյալ օրենքով ՉԺՀ-ի իրավապաշտպան կազմակերպությունները իրավունք ունեն սառեցնելու արտասահմանցի քաղաքացիների ու կազմակերպությունների հաշիվները, որոնք կկասկածվեն Չինաստանի ազգային տեղեկատվական ենթակառուցվածքին վնաս հասցնելու մեջ: Բացի այդ, «անսպասելի պատահարների» դեպքում իշխանությունները կարող են անջատել համացանցը:

Հատկանշական է նաև, որ օրենքը նախատեսում է, որ իշխանության բոլոր մակարդակի մարմինները պետք է զբաղվեն կիբեռանվտանգության բնագավառում բնակչության մասնագիտացված ուսուցմամբ: ԶԼՄ-ները նույնպես պիտի զբաղվեն այդ թեմայով հասարակությանը լուսավորելով:

Վերջին տարիներին Չինաստանում պաշտպանական քաղաքականությունից անցում է կատարվել դեպի հարձակողական քաղաքականության: 2003թ-ի «երեք պատերազմների հայեցակարգը» ընդգրկում է հոգեբանական պատերազմ, մեդիապատերազմ և իրավական պատերազմ: Հայեցակարգում խոսվում է հարձակողական գործողությունների և Չինաստանի կողմից առաջինը նման հարված

¹⁴⁸ Кибербезопасность по-китайски: в КНР вступает в силу новый закон об интернете (<http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4290068>, վերջին մուտքը՝ 11.06.2017թ.):

հասցնելու անհրաժեշտության մասին¹⁴⁹: Ավելին, ամերիկյան մասնագետները վկայում են, որ վերջին տաս տարիների ընթացքում ամերիկյան տեղեկատվական համակարգեր մուտք գործելու բազմաթիվ դեպքեր են գրանցվել, որոնց արդյունքում Չինաստանը տիրապետել է կոմերցիոն և ռազմական տվյալների:

Չինաստանի կողմից նման հարձակումների այլ դեպքեր ևս գրանցվել են Մեծ Բրիտանիայի, Ճապոնիայի, Հնդկաստանի, Թայվանի համակարգչային ցանցերի վրա:

Չինաստանի հաջողությունը կիբեռլուրտեսության ոլորտում մեծապես կապված է պետության ֆինանսավորման հետ: 2006թ-ից երկրի Ազգային-ազատագրական բանակի կառուցվածքում գործում է տեղեկատվական պատերազմների իրագործման ուսուցման ուսուցողական կենտրոն: Կենտրոնի լաբորատորիաներից մեկում հետազոտություններ են իրականացվում հետախուզության, համակարգչային ցանցերում համակարտության, հոգեբանական պատերազմների և ապակառուցողական տեղեկատվական ազդեցության բնագավառներում, մյուսում՝ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում:

Ավելին, չինական բանակում արդեն կա հատուկ ստորաբաժանում, որը զբաղվում է կիբեռտարածությունում տեղեկատվական հակամարտության օպերացիաներ կազմակերպելով: Մասնավորապես, ստորաբաժանումն իրականացնում է համակարգչային հետախուզություն և հակահետախուզություն, էլեկտրոնային վիրուսային գրոհներ, հակավիրուսային պաշտպանություն: Կապույտ կիբեռբանակ անվանումով այս կիբեռզորքերի թիվը, ըստ ամերիկյան փորձագետների, Չինաստանում մոտավորապես 30 հազարի է հասնում:

Բացի այդ, չինական մոտ հիսուն համալսարաններում ազգային կառավարությունը ֆինանսավորում է տարբեր ծրագրեր, որոնք ուղղված են կիբեռհարձակումների ու կիբեռպաշտպանությանն ուղղված հետազոտությունների: Ոլորտում հաճախ նաև չինացի հետազոտողները սերտորեն համագործակցում են արտասահմանցի առաջատար մասնագետների հետ:

Ընդհանուր առմամբ, չինական կիբեռստորաբաժանումների հաջողությունը մեծապես կախված է կառավարական կառույցների, ռազմական գործիչների և

¹⁴⁹ Болгов Р. В. Информационные технологии в модернизации вооруженных сил КНР: политические аспекты. (<http://www.politex.info/content/view/774/30/> (վերջին մուտքը՝ 08.03.2016թ.)):

հաքերների հետ սերտ համագործակցությամբ: Բացի այդ, կիրառվող արտադրությունում երկրի ինքնիշխանությունը պաշտպանելու, տեղեկատվական ենթակառուցվածքի անվտանգությունը ապահովելու, կիրառական և համացանցում զանազան հանցագործությունների դեմ պայքարելու նպատակով Չինաստանը ակտիվորեն համագործակցում է այլ երկրների հետ և համարում, որ համացանցում առանց վարքի համընդհանուր նորմերի մշակման, ուղղակի անհնար է ոլորտում հետագա միջազգային համագործակցությունը:

ԱՄՆ-ի ու ՉԺՀ-ի կառավարությունների կողմից մի շարք նախաձեռնություններ են արվել վերոհիշյալ ուղղությամբ համագործակցությունը զարգացնելու համար: Նշենք, որ ամերիկյան մասնագետները հենց Չինաստանն են համարում ԱՄՆ-ի համար հիմնական կիրառական տեխնոլոգիաների ազբյուր: 2013թ-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Բերիի՝ Պեկին կատարած այցի ընթացքում երկու երկրների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել կիրառական տեխնոլոգիաների հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, որը, ըստ էության, Էդուարդ Սնոուդենի կողմից բացահայտված՝ ԱՄՆ-ի կողմից չինացի պաշտոնյաների հետախուսազրույցների լսման դեպքերից հետո ԱՄՆ-ի առաջին փորձն էր վերականգնելու Չինաստանի հետ հարաբերությունները: Թեպետ, իհարկե, աշխատանքային խմբի շրջանակում համագործակցությունը չկայացավ՝ կապված ԱՄՆ-ի իշխանությունների կողմից Չինաստանին կիրառվող տեսության մեջ մեղադրելուց հետո:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերում հաճախ ավելի շատ ընդհանուր գծեր կան Ռուսաստանի հետ, ապա ոլորտում հենց Ռուսաստանն է հանդիսանում Չինաստանի ռազմավարական գործընկեր:

Բացի այդ, Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ) այն հարթակներից մեկն է, որը Չինաստանն օգտագործում է տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովման հարցերը կարգավորելու համար: Այդ բնագավառում ՇՀԿ-ի անդամ պետությունների կառավարությունների միջև 2009թ-ին Եկատերինբուրգում ստորագրված համաձայնագիրը ուժի մեջ է մտել 2011թ-ից և հիմք է

հանդիսանում կամավոր հիմունքներով ոլորտում սերտ միջազգային համագործակցության համար¹⁵⁰:

Չինաստանն ակտիվերն համագործակցում է նաև ՄԱԿ-ի շրջանակում : Այսպես, 2011թ-ի սեպտեմբերին Չինաստանը, Ռուսաստանն ու մի քանի այլ երկրների ՄԱԿ-ի Գլխավոր ասսամբլեա են ներկայացրել միջազգային տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում վարքի կանոնների նախագիծը և կոչ են արել ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրներին մշակելու տեղեկատվական տարածությունում գործելու վարքագծի համընդհանուր կանոններ:

Ի դեպ, Չինաստանն առաջարկում է նաև ստեղծել ազգային դոմեններ, որոնք հնարավորություն կտան պետություններին անկախ լինել:

Այսպիսով, Չինաստանում համացանցը խիստ վերահսկվում և ուղղորդվում է պետության կողմից: Դա մի կողմից հնարավորություն է տալիս երկրի իշխանություններին առանց մեծ ծախսերի ձևավորելու Չինաստանի դրական կերպարը, մյուս կողմից՝ արգելելու անցանկալի տեղեկատվության տարածումը երկրի ներսում:

Ոլորտի զարգացման գործում հատուկ կարևորվում է կոմերցիոն և կրթության ոլորտի կազմակերպությունների հետ պետության սերտ համագործակցությունը, ինչը թույլ է տալիս տեղյակ լինել ոլորտում կատարված վերջին հետազոտություններին ու տեխնոլոգիաներին: Իսկ ՉԺՀ-ի կիրճանվատնագության ապահովումը դիտվում է միայն արևմտյան տեխնոլոգիաներից կախվածության նվազման դեպքում: Բացի այդ, Չինաստանն ակտիվորեն համագործակցում է այլ երկրների հետ, հանդես գալիս նախաձեռնություններով, որոնք հատկապես վերաբերվում են տեղեկատվական տարածությունում վարքի համընդհանուր նորմերի մշակմանը, առանց որի ուղղակի անհնար է հետագա միջազգային համագործակցությունը:

«Տեղեկատվական անվտանգությունը» Չինաստանում, ինչպես Ռուսաստանում, ընկալվում է դրա լայն իմաստով, այն է՝ տեղեկատվական-տեխնիկական (կիրճանվատնագություն) և տեղեկատվական-սոցիալական անվտանգություն:

¹⁵⁰ О вступлении в силу Соглашения между правительствами государств-членов ШОС о сотрудничестве в области обеспечения международной информационной безопасности (http://www.mid.ru/mezdunarodnaa-informacionnaa-bezopasnost/-/asset_publisher/UsCUTiw2pO53/content/id/203770, վերջին մուտքը 10.05.2017թ.):

Հիմնախնդրի հետ կապված հարցերը մշտապես գտնվում են չինացի մասնագետների ուշադրության կենտրոնում:

Ի տարբերություն ԱՄՆ-ի և ՌԴ-ի, որոնք տեղեկատվական անվտանգության ապահովման հարցերի ժամանակ հատուկ ուշադրություն են դարձնում նորմատիվային փաստաթղթերին, անընդհատ մշակում նորերը կամ լրամշակում արդեն գոյություն ունեցածները, Չինաստանն ավելի գործնական քայլերի է դիմում: Այդ է վկայում այն հանգամանքը, որ ոլորտում աննախադեպ՝ Կիբեռանվտանգության մասին օրենքը, ՉԺՀ-ում միայն 2017թ-ին է ուժի մեջ մտել, թեպետ, իհարկե, երկրում հիմնահարցի հետ կապված տարբեր հայեցակարգեր ևս մինչ այդ մշակված են եղել:

Գործնականում Չինաստանն այնքան է առաջ անցել, որ ոլորտի առաջատար երկրները, արտասահմանյան հետախուզական ծառայությունները համարում են, որ հենց Չինաստանն է այն երկրներից մեկը, որտեղից գալիս են տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, թեպետ Չինաստանը ոլորտում իր ձեռքբերումները բավականին համեստ է գնահատում: Չինացի փորձագետները հաճախ են նշում, որ երկրի տեղեկատվական համակարգերի անվտանգությունը դեռևս զարգացման փուլում է գտնվում և հաճախ կախվածություն ունի ոլորտի առաջատար գերտերություններից:

Այդուհանդերձ, ըստ ՄԱԿ-ի Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) «Կիբեռանվտանգության գլոբալ ինդեքս 2017» վարկանիշի, կիբեռանվտանգության ապահովման բնագավառում Չինաստանը 34-րդն տեղն է զբաղեցնում աշխարհի՝ հարցման ցուցակում ընդգրկված 193 երկրների շարքում՝ դրանով իսկ զգալիորեն զիջելով իր դիրքերը ոլորտի իր հիմնական հակառակորդներ համարվող ԱՄՆ-ին ու ՌԴ-ին¹⁵¹: Հարցման արդյունքներով գնահատվում է պետությունների կիբեռանվտանգության մակարդակը հինգ հիմնական ցուցանիշներով՝ օրենսդրական բազա, տեխնիկական տվյալներ, կազմակերպչական հարցեր, որակի բարձրացում և համագործակցություն: Ըստ էության, չինական կառավարությունը ոլորտը բարելավելու համար դեռ բավականին անելիքներ ունի:

¹⁵¹ Россия заняла 11 место по уровню кибербезопасности в мире (<https://hightech.fm/2017/07/07/itu-top>, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

Ամփոփելով երեք գերտերությունների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ՉԺՀ-ի տեղեկատվական անվտանգության ոլորտը կարգավորող հիմնական մոտեցումները, պարադիգմաները, տեղեկատվական անվտանգության հարձակողական ու պաշտպանողական քաղաքականության առանձնահատկությունները՝ ակնհայտ է ԱՄՆ-ի ձգտումը՝ տեղեկատվական գերակայություն հաստատելու համաշխարհային մակարդակում, մինչդեռ ՌԴ հիմնականում պաշտպանողական բնույթի քաղաքականություն է վարում, որն ուղղված է ռազմավարական կայունությանը, իրավահավասար ռազմավարական գործընկերությանը և տեղեկատվական ինքնիշխանության պաշտպանությանը: Ինչ վերավերվում է Չինաստանին, ապա այդտեղ վերջին շրջանում մեծապես ուշադրություն է դարձվում հենց հարձակողական քաղաքականությունը:

«Տեղեկատվական անվտանգությունը» Չինաստանում, ինչպես Ռուսաստանում, ընկալվում է դրա լայն իմաստով, այն է՝ տեղեկատվական-տեխնիկական (կիրեռանվտանգություն) և տեղեկատվական-սոցիալական անվտանգություն: Մինչդեռ ԱՄՆ-ում ընդունված է հասկացության նեղ ընկալումը՝ այն է կիրեռանվտանգություն:

Տեղեկատվական անվտանգության ապահովման ՉԺՀ փորձից ելնելով՝ կարծում ենք, որ Հայաստանում բացի պաշտպանական միջոցառումներից անհրաժեշտ է դիմել նաև գործնական քայլերի, հատուկ մասնագետներ պատրաստել, ովքեր կարող են իրականացնել տեղեկատվական պատերազմներ կամ կիրառել թվային դիվանագիտության ընձեռած հնարավորությունները՝ մեր երկրի դրական կերպար ստեղծելու և հակահայկական քարոզչությանը հակազդելու համար:

Ընդհանուր առմամբ, վերոհիշյալ երկրների փորձի հիման վրա, կարծում ենք՝ Հայաստանի համար արդյունավետ կարող են լինել ոլորտի և՛ պաշտպանողական, և՛ հարձակողական միջոցառումները: Ռուսաստանի փորձը կարող է կիրառելի լինել նորմատիվային բազայի կատարելագործման համար, Չինաստանի փորձից կարելի է կիրառել գործնական քայլերը՝ համապատասխան գործակալություններ բացել, տեղեկատվական հարձակողական օպերացիաներ իրականացնել: ԱՄՆ-ի փորձը հատկապես կարևորվում է թվային դիվանագիտության իրականացման առումով, ինչը թույլ կտա մեր երկրին առանց ֆինանսական լուրջ միջոցների արդյունավետ տեղեկատվական քաղաքականություն վարել: ՌԴ-ի և ԱՄՆ-ի հայեցակարգային

փաստաթղթերից ՀՀ-ի համար ուսուցողական կարող է լինել նաև տեղեկատվական անվտանգությունը երկրի կենսական կարևոր ենթակառուցվածքների շարքին դասելը, իսկ «տեղեկատվական անվտանգությունը» ընկալել դրա նեղ և լայն իմաստներով:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

3.1. ՀՀ տեղեկատվական անվտանգության ներքին ու արտաքին սպառնալիքները

Հայաստանի Հանրապետությունը, լինելով աշխարհի մի մաս, իր վրա կրում է գլոբալացման և՛ դրական, և՛ բացասական ազդեցությունները, հետևապես չի կարող խուսափել ժամանակակից տեղեկատվական սպառնալիքներից:

ՀՀ տեղեկատվական ոլորտը բնութագրվում է տեղեկատվության փոխանակման ժամանակակից միջոցների և տարատեսակ համակարգչային տեխնոլոգիաների արագընթաց զարգացմամբ: Ժամանակակից հայ հասարակությունն արագ տեմպերով մտնում է համացանց, շարժական կապի ներթափանցումը նույնպես շարունակում է աճել¹⁵²: Ներկայումս հանրապետությունում տեղեկատվության մշակման, պահպանման և փոխանցման համար լայնորեն օգտագործվում են տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիական միջոցները և տեղեկատվական հեռահաղորդակցման համակարգերը՝ ներառյալ միջազգային գլոբալ տեղեկատվական համացանցը:

Բացի այդ, հասարակությունն օգտվում է բազմաթիվ էլեկտրոնային, առցանց բանկային ծառայություններից և այլն, ինչի հետևանքով Հայաստանում բարդանում են տեղեկատվական անվտանգության սպառնալիքները: Կանխատեսվում է, որ մոտ ապագայում համակարգիչները և տեղեկատվական համակարգերը ամբողջովին կապահովեն տեղեկատվական ռեսուրսների ոլորտում տարբեր գործարքների իրականացումը¹⁵³: Ուստի պատահական չէ, որ այսօր տեղեկատվական

¹⁵² Մարտիրոսյան Ս., Համացանցը Հայաստանում. 2016 թվականի ամփոփում (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15344&sphrase_id=58069, վերջին մուտքը՝ 10.05.2017թ.):

¹⁵³ Տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցառումների համալիր ծրագիրը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծ (<http://mtcit.am/edfiles/files/Naxagcer/6791arm-TeXAnvtang.pdf>, վերջին մուտքը՝ 11.04.2017թ.):

անվտանգության հիմնախնդիրները և դրա կարևորությունը դարձել են ՀՀ ամենից շատ քննարկվող ոլորտներից մեկը:

Դրա հետ մեկտեղ տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրներին ուղղված ոչ բավարար ուշադրությունը հաճախ հանգեցնում է փակ տեղեկատվությանը մուտքի, ոչնչացման կամ խափանման: Այսպես, դեռ 2012թ. Հայաստանն իսկապես կիրեռանվտանգության տեսանկյունից ամենախոցելի երկրներից մեկն էր: Ըստ «Կասպերսկու լաբորատորիայի» տվյալների, Հայաստանը երրորդ տեղում էր այն երկրների ցանկում, որտեղ ինտերնետից օգտվողներն ամենամեծ քանակի հարձակումների են ենթարկվում: Իրավիճակը բացասական էր նաև 2013թ., երբ Հայաստանը կրկին ամենանվտանգավորների եռյակում է¹⁵⁴: Սակայն արդեն 2016թ. նույն «Կասպերսկու լաբորատորիայի» զեկույցում ակնհայտ են դրական փոփոխությունները: Այսպես, վարակված համակարգիչների քանակով Հայաստանը միջին ռիսկայնության երկրների ցանկում է հայտնվել¹⁵⁵:

Կիրեռանվտանգության ապահովման գործում և կիրեռանվտանգության կայացածության մակարդակով տարածաշրջանի երկրների ցանկում Հայաստանն զբաղեցնում է վերջին տեղը՝ զգալիորեն զիջելով հարևան Ադրբեջանին և Վրաստանին¹⁵⁶:

Ցավալի են նաև Հայաստանի արդյունքները համաշխարհային մասշտաբով: Այսպես, ըստ ՄԱԿ-ի Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) «Կիրեռանվտանգության գլոբալ ինդեքս 2017» վարկանիշի, կիրեռանվտանգության ապահովման բնագավառում Հայաստանը 111-րդն է աշխարհի՝ հարցման ցուցակում ընդգրկված 193 երկրների շարքում¹⁵⁷: Հարցման արդյունքներով գնահատվում է պետությունների կիրեռանվտանգության մակարդակը հինգ հիմնական

¹⁵⁴ Սամվել Մարտիրոսյան, Հայաստանի հասարակությունը և կիրեռանվտանգությունը. Իրավիճակը 2016թ. (http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=15400, վերջին մուտքը՝ 13.05.2017թ.):

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁵⁶ Տե՛ս, «Global Cybersecurity Index & Cyberwellness Profiles». International Telecommunication Union and ABI Research, April 2015 (http://www.itu.int/dms_pub/itud/opb/str/D-STR-SECU-2015-PDF-E.pdf, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

¹⁵⁷ ITU-ի Կիրեռանվտանգության գլոբալ ինդեքս. Հայաստանը 111-րդն է 193 երկրների շարքում (<https://news.am/arm/news/399731.html>, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

ցուցանիշներով՝ օրենսդրական բազա, տեխնիկական տվյալներ, կազմակերպչական հարցեր, որակի բարձրացում և համագործակցություն:

Հարկ է նշել, որ ՀՀ Քրեական օրենսգրքի մի ամբողջ գլուխ (գլուխ 24) սահմանում է համակարգչային տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները: Ընդ որում, գլխի բոլոր յոթ հոդվածները (հոդված 251՝ Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը), հոդված 252՝ համակարգչային տեղեկատվությունը փոխելը, հոդված 253՝ համակարգչային սաբոտաժ, հոդված 254՝ համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը, հոդված 255՝ համակարգչային տեղեկատվությունն ապօրինի մուտք գործելու համար հատուկ միջոցների պատրաստելը կամ իրացնելը, հոդված 256՝ վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելն ու տարածելը, հոդված 257՝ համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնների խախտելը) սահմանում են քրեական պատասխանատվություն:

Սակայն ՀՀ օրենսդրական դաշտում բացակայում են ձևակերպումները, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն այն դեպքերում, երբ համակարգչային հանցագործությունները կատարվում են այլ պետությունների քաղաքացիների կողմից:

Ըստ Ոստիկանության պաշտոնական տվյալների, վերջին երկու տարում աճել է համակարգչային հանցագործությունների թիվը¹⁵⁸:

Աղյուսակ 1

ՀՀ-ում կիրեռհանցագործությունները 2015թ.-ին

Հանցատեսակ	Գրանցված գործ	Հարուցված քր. գործ
Հոդված181 (Հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ)	39	39
Հոդված251 (Համակարգչային	1	1

¹⁵⁸ Տե՛ս Աղյուսակ 1, Աղյուսակ 2:

տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը)		
Հոդված252 (Համակարգչային տեղեկատվությունը փոփոխելը)	1	1
Հոդված253 (Համակարգչային սարքատաժը)	4	4
Հոդված254 (Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը)	15	15
Ընդամենը՝	60	60

Աղյուսակ 2

ՀՀ-ում կիրառվող անվտանգությունները 2016թ.-ին

Հանցատեսակ	Գրանցված գործ	Հարուցված քր. գործ
Հոդված181 (Հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ)	48	44
Հոդված253 (Համակարգչային սարքատաժը)	1	1
Հոդված254 (Համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը)	28	28
Ընդամենը՝	77	73

Այսպիսով, կիրառվող անվտանգությունը առնչվում է տեղեկատվական անվտանգության տեխնիկական խնդիրներին, այն է՝ համակարգչային տվյալների պաշտպանությանը չարտոնված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, փոփոխումից կամ ոչնչացումից, որպեսզի ապահովված լինեն դրանում առկա տեղեկատվության գաղտնիությունը, ամբողջականությունը և մատչելիությունը, իսկ բովանդակային առումով տեղեկատվական անվտանգությունը առնչվում է

քարոզչական, հակաքարոզչական, տեղեկատվական հոսքերի հետ կապված խնդիրներին: Նշենք, որ վերջին շրջանում Հայաստանում սկսել են մեծապես ուշադրություն դարձնել նաև տեղեկատվական անվտանգության տեխնիկական խնդիրներին: Մասնավորապես, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնը կիրեռանվտանգության ոլորտում միջազգային փորձի վերլուծության հիման վրա մշակել է և ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջի, նույն համալսարանի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի, ինչպես նաև Հարվարդի և «Գործընկերություն հանուն խաղաղության» կոնսորցիումի կիրեռանվտանգության ոլորտի փորձագետների հետ սերտ համագործակցությամբ փորձաքննել է ՀՀ կիրեռանվտանգության ազգային ռազմավարության նախագիծը¹⁵⁹:

Տեղեկատվական անվտանգության համար սպառնալիքները նպատակային և կանոնակարգված գործողությունների ամբողջություն են՝ ուղղված ինչպես անձի, հասարակության և պետության, այնպես էլ պետությունների դաշինքների տեղեկատվական միջավայրի զարգացման ու գործառնման դեմ¹⁶⁰:

ՏԱ գործառույթներն էապես կապված են, այսպես կոչված, ինֆոգեն (տեղեկատվածին) գործընթացների հետ¹⁶¹:

Ինֆոգեն սպառնալիքները կարելի է դասակարգել երկու հիմնական տիպի.

- տեխնիկական բնույթի ինֆոգեն սպառնալիքներ, որոնք ուղղված են անհատի, հասարակության, ազգի և պետության գործունեությունը կազմակերպող և

¹⁵⁹ Տե՛ս, Պողոսյան Բ., ՀՀ կիրեռանվտանգության ազգային ռազմավարության մշակումը և ՊԱՀՀ-ի կազմում կիրեռտարածության ռեսուրսների կառավարման ռազմավարության ինստիտուտի ստեղծումը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայման համատեքստում, «Հայկական բանակ» ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ռազմագիտական հանդես, 1-2, 2017թ., էջ 58:

¹⁶⁰ Տե՛ս, «Угрозы информационной безопасности» (<http://kirillykk.narod.ru/ugroz.html>, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

¹⁶¹ Гагик Тер–Арутюнянц, Инфогенные вызовы, Голос Армении, 08.12.2001; Гагик Тер–Арутюнянц, «Инфогенные» вызовы, в сб. «Информационные войны», серия «Мир сегодня», #4, с. 5. Ереван, 2002, Գագիկ Հարությունյան, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, էջ 25, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2003:

համակարգող տեղեկատվական տեխնիկական համակարգերի դեմ: Այդ սպառնալիքները կարող են իրագործվել այդ համակարգերի տեխնիկական խոցելիության պատճառով,

- հոգևոր-գաղափարական բնույթի ինֆոգեն սպառնալիքներ, որոնք ուղղված են անհատի, հասարակության, ազգի գիտակցության (ենթագիտակցության), հոգևոր և քաղաքակրթական արժեհամակարգերի դեմ: Այդ սպառնալիքների իրագործումը պայմանավորված է «մարդկային և հանրային» գործոնների ոլորտում թույլ տրված թերացումներով:

Ինֆոգեն սպառնալիքների աղբյուրները կարող են լինել արտաքին և ներքին¹⁶²: Արտաքին ինֆոգեն սպառնալիքների աղբյուրներ կարող են հանդիսանալ.

- ՀՀ ռազմավարական-մարտավարական մրցակից կամ հակառակորդ հանդիսացող երկրները կամ կազմակերպությունները,
- իրենց շահերը հետապնդող, սակայն ՀՀ ազգային շահերն անտեսող երկրները և կազմակերպությունները, որոնց թվում կարող են լինել նաև ՀՀ քաղաքական և տնտեսական գործընկերները,
- տեղեկատվական դաշտում առկա, բայց ոչ հատուկ ՀՀ դեմ ուղղված տեղեկատվական հոսքերը, որոնք բացասական ներգործություն են ունենում հանրային գիտակցության վրա:

Ինֆոգեն ներքին սպառնալիքների աղբյուր կարող են հանդիսանալ.

- ՀՀ-ում տեղակայված, սակայն օտարերկրյա ռեսուրսներից սնվող քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները և զանգվածային լրատվամիջոցները, որոնց գործողություններն ուղղված են ՀՀ ազգային շահերի դեմ,
- ներքին մասնավոր և պետական ռեսուրսների վրա հիմնված քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպությունները, ընկերությունները, պետական մարմինները և ԶԼՄ-ը, որոնց պատկերացումները ՀՀ ազգային

¹⁶² Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ (http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2286, վերջին մուտքը՝ 14.04.2017թ.):

շահերի վերաբերյալ հստակեցված չեն: Որպես հետևանք՝ նման կառույցները կարող են ակամա կամ գաղափարական սխալ կողմնորոշման հետևանքով ինֆոգեն վտանգի աղբյուր հանդիսանալ ՀՀ հանրության համար :

Ըստ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի, իրենց ընդհանուր ուղղվածության տեսանկյունից Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության սպառնալիքները դասակարգվում են հետևյալ տիպերի¹⁶³.

1. սպառնալիքներ՝ ուղղված մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրանց անհատական, խմբային և հասարակական գիտակցության ձևավորմանը,

2. սպառնալիքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը,

3. սպառնալիքներ՝ ուղղված հայրենական տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, դրանց արտադրանքի ներքին շուկայի բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովմանը,

4. սպառնալիքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տեղեկատվական հեռահաղորդակցային ռեսուրսների և համակարգերի անվտանգությանը:

Քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Աթանեսյանը Հայաստանի և հայ հասարակության համար տեղեկատվական անվտանգության սպառնալիքները բաժանում է երեք մակարդակների՝ ներպետական, տարածաշրջանային և գլոբալ¹⁶⁴:

ՀՀ ներպետական սպառնալիքների կարող է հանգեցնել հայաստանյան հասարակության ոչ միասնական լինելը ազգային ռազմավարական խնդիրների լուծման ուղղությունների և միջոցների շուրջ, պետական իշխանության մարմինների լեգիտիմության ոչ բավարար մակարդակը, ազգային ինքնության և անվտանգության տեսանկյունից հիմնարար խնդիրների (ղարաբաղյան հակամարտության լուծում, ցեղասպանության ճանաչում, բնակչության արտագաղթ և այլն) շահարկումը տարբեր

¹⁶³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559> (վերջին մուտքը՝ 20.02.2017թ.)):

¹⁶⁴ Աթանեսյան Ա.Վ., Սպառնալիքներ ՀՀ տեղեկատվական անվտանգությանը. եռամակարդակ վերլուծություն, 21-րդ ԴԱԸ, 2010, N6, էջ 26-34:

քաղաքական ուժերի կողմից, արտասահմանյան ընկերությունների կողմից հայաստանյան հեռախոսակապի շուկայի կառավարումը և պետության կողմից քաղաքացիների շահերի պաշտպանության բացակայությունը հեռախոսային և ինտերնետային ծառայություններից օգտվելու ոլորտում:

Տարածաշրջանային կտրվածքով ՀՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքները հիմնականում պայմանավորված են հարևան երկու երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հնարավոր սպառնալիքներով: Ադրբեջանի կողմից պարբերաբար իրականացվում են հարձակողական հակահայկական տեղեկատվական պատերազմներ, որոնց նպատակներից են՝ ադրբեջանական ինքնության կերտումն ու ամրապնդումը, աշխարհում Ադրբեջանի դրական կերպարի ստեղծումը, տարբեր միջազգային կառույցներին անդամակցման միջոցով սեփական ռազմավարական շահերի պաշտպանությունն ու այդ կազմակերպությունների օգտագործումը հակահայկական քարոզչության վարման ու միջազգային համայնքում հակահայկական տրամադրությունների ստեղծման ուղղությամբ: Այսպես, Լոնդոնի ադրբեջանական համայնքի կազմակերպության նախաձեռնությամբ «Խոջալուի ողբերգությունը. միջազգային տեսակետ» և «Միջազգային տեսակետներ. ԼՂՀ-ի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությունը» անգլալեզու ադրբեջանամետ հրատարակությունների օրինակներ են ուղարկվել միջազգային լրատվամիջոցների՝ «Վաշինգթոն փոստին», «Սանդի թայմսին», «Նյու Յորք թայմսին», «Նյուզլիքին», «Բոսթոն գլոբին» և աշխարհի 60 գրադարանների¹⁶⁵:

Վերոհիշյալին գումարվում է նաև Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, ինչն անընդհատ զգոնություն է պահանջում այդ երկրի կողմից տեղեկատվության բնագավառում պոտենցիալ սպառնալիքներին դիմակայելու համար:

Գլոբալ մակարդակում ՀՀ տեղեկատվական սպառնալիքների կարող է հանգեցնել ադրբեջանական հակաքարոզչությունը, որով վիճարկվում են հայկական երաժշտության ծագումն ու էությունը, հայկական խոհանոցի հայկական լինելը, հայ ժողովրդի ծագումն ու բնակության տարածքը և այլն: Պետության ներսում ոչ բավարար

¹⁶⁵ Նահապետյան Հ., «Ադրբեջանական սփյուռքի քարոզչական ձեռնարկները», (<http://www.noravank.am/am/?page=theme&thid=5&nid=1276>, վերջին մուտքը՝ 11.06.2017թ):

մակարդակով այնպիսի գաղափարների նյութականացումը, ինչպիսին է ժողովրդավարությունը, կոռուպցիայի բացակայությունը, բարձր կենսամակարդակն ու հանրային համերաշխությունը, օրենքի գերակայությունն ու քաղաքացիների իրավունքների պաշտպանվածությունը զգալիորեն խոչընդոտում են բարձր վարկանիշի և համբավի ձեռքբերմանը:

Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում սպառնալիքների աղբյուրները դասակարգվում են երկու տիպի՝ արտաքին և ներքին¹⁶⁶: Արտաքին սպառնալիքների կարող են հանգեցնել օտարերկրյա քաղաքական, տնտեսական, ռազմական, հետախուզական և տեղեկատվական կառույցների գործունեությունը՝ ուղղված տեղեկատվական ոլորտում Հայաստանի Հանրապետության շահերի դեմ, համաշխարհային տեղեկատվական շուկաներից Հայաստանին դուրս մղելուն:

Ավելին, միջազգային տեղեկատվական աղբյուրներով հակահայկական կեղծ տեղեկատվության տարածումը, հայ ազգային հոգեբանական խառնվածքի, մշակութային ինքնության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դեմ ուղղված քայքայիչ գործողությունների իրականացումը, այլ պետությունների կողմից ՀՀ պետական տեղեկատվության նկատմամբ չթույլատրված հասանելիություն ստանալու ձևերն ու մեթոդները կիրառելը նույնպես արտաքին սպառնալիքներ են մեր տեղեկատվական անվտանգությանը*:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգում թվարկված սպառնալիքների շրջանակը հարկ է ընդլայնել: Վերոհիշյալին կարելի է գումարել նաև արտաքին սուբյեկտների կողմից տեղեկատվական պատերազմների հայեցակարգերի մշակումը՝ ՀՀ տեղեկատվական ոլորտի վրա ներգործելու, տեղեկատվական և հեռահաղորդակցային համակարգերի բնականոն ընթացքը խախտելու նպատակով:

Ընդունված է համարել, որ Հայաստանի և հայության անվտանգությանը սպառնացող արտաքին սպառնալիքների աղբյուրները գլխավորապես մի քանի

¹⁶⁶ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=52559>, վերջին մուտքը՝ 10.06.2017թ.):
*Սրանք հիմնականում Թուրքիայից և Ադրբեջանից եկող սպառնալիքներն են:

ադրբեջանական և թուրքական լրատվամիջոցներ են: Բանն այն է, որ երկար տարիներ շարունակվում է տեղեկատվական հակամարտությունը հարևան Ադրբեջանի հետ: Ընդ որում, կարելի է առաձնացնել այդ հակամարտության մի քանի փուլ¹⁶⁷.

- Առաջին փուլը սկսվում է 1994թ-ից, երբ Հայաստանը ներկայացվում էր որպես «ոճիրների ունակ» երկիր, որը Սփյուռքի օգնությամբ կարողացավ «գրավել» ադրբեջանական տարածքները:
- Երկրորդ՝ փուլում (1995-1997թթ.) Բաքվի քարոզչության նպատակը միջազգային հանրության միջոցով պատերազմի հետևանքների վերացումն էր, զինադադարի երկարաձգումը և փախստականների սոցիալական խնդիրների բարձրաձայնումը:
- Իբրև Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության երրորդ փուլ՝ կարելի է առաձնացնել 1998-2002թթ: Այս փուլում՝ 2000թ.-ին, առաջին անգամ ադրբեջանական հաքերների կողմից ժամանակավորապես շարքից դուրս բերվեցին հայկական մի շարք ինտերնետ կայքեր, որոնցում շոշափվում էին Ցեղասպանության և ԼՂՀ թեմաները:
- 2003թ-ից՝ Իլիամ Ալիևի իշխանության գալուց, սկսվում է հակահայկական քաղաքականության չորրորդ փուլը: Այս փուլում Բաքվի հիմնական նպատակը Հայաստանի ու հայության հեղինակազարկումն էր, հայությանը որպես ցեղասպան ազգ ներկայացնելը, որի հետ համատեղ գոյակցումը սպառնում է Ադրբեջանի ազգային անվտանգությանը և այլն:

Մեր կարծիքով, ադրբեջանական հակահայկական քաղաքականության հերթական փուլը կարելի է համարել 2016թ.-ից սկսված ժամանակահատվածը, երբ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ այդ հակամարտությունն իր գագաթնակետին հասավ: Այդ ժամանակ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունն ուղղված էր՝

1. ներքին լսարանին, որի ժամանակ իշխանությունը նպատակն ուներ հանրության ուշադրությունը շեղել ներքին խնդիրներից (2016թ. սկզբին Ադրբեջանում նավթի գինը վերջին հինգ տարիների համեմատ հասավ նվազագույնի՝ 1 բարելի դիմաց

¹⁶⁷ Հարությունյան Գ., Քոթանջյան Հ. և ուրիշներ, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան 2009, էջ 22-27:

90 դոլարից հասնելով մինչև 30-ի՝ դրանով իսկ կանգեցնելով երկիրը լուրջ սոցիալ-տնտեսական խնդիրների առջև: Ադրբեջանում սկսվեց բողոքի ցույցերի ալիք, և նկատվեց կենսամակարդակի զգալի անկում), արտաքին սպառնալիքի պատրվակով փորձել համախմբել հասարակությանը, պատերազմի ընթացքի մասին ապատեղեկատվություն տարածելով հասարական դրական կարծիք ստեղծել իշխանությունների հանդեպ,

2. արտաքին լսարանին, որի ժամանակ ադրբեջանական տեղեկատվական գործողությունների թիրախը միջազգային հանրությունն էր, ում փորձում էր Հայաստանը որպես պատերազմի սանձազերծող կողմ, իսկ Ադրբեջանին «զոհի կարգավիճակում» ներկայացնել, Հայաստանի համար բացասական իմիջ ձևավորել,
3. հայկական լսարանին, երբ սոցիալական ցանցերում գրանցվեցին հայկական անուններով կեղծ օգտատերեր, որոնք, տեղեկատվություն կորզելու նպատակով, հայատառ հարցեր էին ուղղում հայ օգտատերերին երևանում և Ստեփանակերպտում տիրող իրավիճակի մասին¹⁶⁸:

Պատերազմի ողջ ընթացքում երկկողմանի կիբեռհարձակումներ էին իրականացվում: Հայկական և ադրբեջանական լրատվական և պաշտոնական կայքերն անընդհատ DDoS տիպի հարձակումների էին ենթարկվում, որոնց ժամանակ համակարգչային վիրուսների ներմուծմամբ, էլեկտրոնային նամակների գրոհով (E-mail bombing) և այլ եղանակներով խափանվում է սերվերի աշխատանքը:

Ընդ որում, այդ ընթացքում ադրբեջանական հաքերային խմբերի միացել էին թուրքական ազգայնական հաքերները:

Սակայն, ասել թե Հայաստանի և հայության անվտանգությանը սպառնացող արտաքին սպառնալիքների աղբյուրները գլխավորապես մի քանի ադրբեջանական և թուրքական լրատվամիջոցներ են, բավականին պարզունակ մոտեցում է: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, որոնք հաստատում են Հայաստանի՝ տեղեկատվական

¹⁶⁸ Մարտիրոսյան Ս., Հայկական և ադրբեջանական ուժերի դիմակայությունը լրատվական դաշտում, (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14592, վերջին մուտքը՝ 10.07.2017թ.):

պատերազմի սուբյեկտ լինելը¹⁶⁹: Բացի դրանից, Հայաստանի ու հայության համար հատկապես վտանգավոր են հոգևոր-գաղափարական բնույթի գործոնները, որոնց նպատակը հայկական մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծումն է, երկրում անվտանգության մթնոլորտի ստեղծումը, Հայաստանի հեղինակազրկումը միջազգային ասպարեզում, տարբեր ոլորտներում (քաղաքական, տնտեսական և այլն) պետության և ազգի կենսական կարևոր շահերի վնասումը¹⁷⁰:

Մեր կարծիքով, արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար նախ պետք է հստակ բացահայտվեն սպառնալիքների աղբյուրները, փորձագիտական վերլուծության ենթարկվեն դրանց տեխնոլոգիական ու մեթոդաբանական առանձնահատկությունները: Մինչդեռ, առանց նման աշխատանքի անհնարին է բացահայտել տեղեկատվական սպառնալիքների իրական կենտրոնները, հասկանալ նրանց նպատակները և ռազմավարությունը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ապահովման ոլորտում վերը նշված խնդիրների համապարփակ և արդյունավետ լուծման համար կարևոր է միջգերատեսչական համագործակցությամբ մշակված կիբեռանվտանգության համապետական ռազմավարության և համապատասխան քաղաքականության, ինչպես նաև միջգերատեսչական ներուժի համախմբմամբ կիբեռանվտանգության ոլորտը կառավարող մարմնի ստեղծումը¹⁷¹:

Ակնհայտ է, որ այդ ոլորտում պետք է օգտագործել անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերման ընդունված մեխանիզմները (ուսուցում արտասահմանյան կենտրոններում, փորձագետների հրավիրում և այլն) ու կիրառել դրանք գործնական հարթությունում:

¹⁶⁹ Мартиросян С., Некоторые вопросы информационной безопасности Армении и Армянства. (<http://www.noravank.am/ru/?page=analitics&nid=679>, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

¹⁷⁰ Տեր-Հարությունյանց Գ., Հոգևոր անվտանգությունը որպես տեղեկատվական անվտանգության քաղաքական. Տարածաշրջան, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, էջ 29, 2005:

¹⁷¹ Տե՛ս, «ITU National Cybersecurity Strategy Guide». International Telecommunication Union, September 2011 ([http://www.itu.int/ITU-D/cyb/cybersecurity/docs/ITUNational CybersecurityStrategy Guide.pdf](http://www.itu.int/ITU-D/cyb/cybersecurity/docs/ITUNational%20CybersecurityStrategy%20Guide.pdf)); «National Cyber Security Strategies». «European Network and Information Security Agency», May 2012 (<http://www.enisa.europa.eu/activities/Resilience-and-CIIP/national-cyber-security-strategies-ncsss/> cyber-securitystrategies-paper, վերջին մուտքը՝ 10.08.2017թ.):

Ըստ ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի, մեր երկրի ներքին տեղեկատվական սպառնալիքներից են տեղեկատվական ոլորտում քաղաքացիների, հասարակության և պետական օրինական շահերի պաշտպանվածության աստիճանի ոչ բավարար մակարդակը, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում միասնական պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության անբավարար համակարգումը, Հայաստանի Հանրապետությունում տեղակայված և օտարերկրյա աղբյուրներից սնվող այն հասարակական, տնտեսական կառույցները և զանգվածային լրատվության միջոցները, որոնց տեղեկատվական գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության ազգային շահերի դեմ, քաղաքացիական հասարակության ինստիտուտների թերզարգացածությունը և այլն¹⁷²:

Մեր կարծիքով, որպես ՀՀ տեղեկատվական անվտանգության ներքին սպառնալիքներ կարելի է առաձնացնել՝

- տեղեկատվական ոլորտում երկրի հետամնացության մակարդակը,
- ՀՀ համացանցային անվտանգության թերացումները,
- հայոց լեզվի դերի թուլացումն ու աղավաղումը,
- տեղեկատվական ոլորտում համապատասխան պետական քաղաքականության բացակայությունը,
- տեղական ՋԼՄ-ների գործունեության անբավարար մակարդակը,
- տեղեկատվության ոլորտում իրավական նորմերի ոչ բավարար մշակվածությունը:

Այժմ անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առաձին:

Ինչպես նշեցինք, ՀՀ տեղեկատվական անվտանգության ներքին սպառնալիքներից կարելի է համարել տեղեկատվական ոլորտում երկրի հետամնացության մակարդակը: Բանն այն է, որ ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման պարագայում ներկայիս համաշխարհային քաղաքականության մեջ սկսում են գերակայել «խաղի» նոր

¹⁷² Տե՛ս, Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=52559>, վերջին մուտքը՝ 14.06.2017թ.):

կանոններ. այսօր պետությունների ուժային առավելությունը պայմանավորված է ոչ այնքան ռազմական, տնտեսական և քաղաքական ներուժով, որքան տեղեկատվական դաշտում նրանց ձեռքբերումներով:

Նման պայմաններում միջազգային մակարդակում տեղեկատվական ոլորտում հետամնացությունն առաջ է բերել ուժերի անհավասարության մի նոր տիպ, որի ժամանակ զարգացած երկրները հնարավորություն ունեն վերահսկողություն սահմանել զարգացող երկրների նկատմամբ: Ուստի իր տեխնիկական նկարագրություններով արտասահմանյան տեղեկատվայնացման միջոցների նմուշներին չզիջող հայրենական նմանատիպ արտադրանքի առկայության պայմաններում Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների կողմից արտասահմանյան տեղեկատվայնացման, հեռահաղորդակցության և կապի միջոցների ու համակարգերի ձեռքբերումը կարող է ոլորտում որոշակի ձեռքբերումների հանգեցնել:

«Հ համացանցային անվտանգության թերացումները նույնպես կարող են ներքին սպառնալիքներ դիտվել մեր տեղեկատվական անվտանգությանը: Այստեղ կարևոր է հատկապես տարբեր գերատեսչություններում տեղեկատվական բաժիններում աշխատողների բարձր պրոֆեսիոնալությունը: Անհրաժեշտ է, որպեսզի վերջիններս քաջատեղյակ լինեն համացանցին և խափանումների ու խախտումների ժամանակ կարողանան արագ արձագանքել:

Համաշխարհայնացման, հատկապես համացանցի տարածման պայմաններում, «Հ տեղեկատվական անվտանգության առաջնային սպառնալիքներից է պետական լեզվի դերի թուլացումն ու լեզվի աղավաղումը: Բանն այն է, որ չունենալով տեղեկատվական սեփական ռեսուրսներ՝ Հայաստանն ակտիվորեն ներմուծվեցին արտասահմանյան ծրագրերն ու կայքերը՝ նոր սերնդի համար ստեղծելով շփման մի յուրօրինակ լեզվաեղանակ՝ ինտերնետային լեզուն: Նման պայմաններում ազգային լեզվական բառապաշարում տեղ են գտնում օտարամուլ բառեր, սոցիալական ցանցերում հայ օգտատերերը հաճախ գրում են լատինատառ:

Տեղեկատվական ոլորտում համապատասխան պետական քաղաքականության բացակայության արդյունքում օտարերկրյա և տեղական լրատվական միջոցները հնարավորություն են ստանում իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք

ուղղված են պետության ազգային շահերի դեմ: Կարծում ենք անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը տեղեկատվական դաշտի նկատմամբ՝ միաժամանակ պահպանելով տեղեկատվական ազատության և անվտանգության հավասարակշռությունը: Բացի այդ, տեղեկատվական անվտանգության հայեցակարգում պարտադիր պետք է հստակեցնել օտարերկրյա տեղեկատվական գործակալությունների և լրագրողների, ինչպես նաև տեղեկատվական ոլորտում օտարերկրյա ներդրողների կարգավիճակը պետության տեղեկատվական ենթակառուցվածքների զարգացման գործում:

Արդի համաշխարհայնացման պայմաններում զանգվածային լրատվամիջոցները բացառիկ դեր ունեն տեղեկատվության տարածման, հասարակական կարծիք ձևավորելու գործում: Դրանք մարդկանց շրջանում սերմանում են կարծրատիպային մտածողություն, աստիճանաբար նվազեցնում տեղեկությունների հաղորդման մտավոր մակարդակը: Զանգվածային լրատվամիջոցները, որոնք համաշխարհային առաջատար «խաղացողների» վերահսկողության տակ են գտվում, իրենց առջև խնդիր ունեն ոչ թե լուսաբանելու իրական տեղեկատվությունը, այլ ձևավորելու այն նախապես կազմված սցենարով:

Հետևապես, որպես ՀՀ տեղեկատվական ներքին սպառնալիք կարելի է առանձնացնել տեղական ՋԼՄ-ների գործունեության անբավարար մակարդակը և որակը, լրագրողների մասնագիտական մոտեցման պակասը, օտար լեզուներին տիրապետելու ոչ բավարար մակարդակը, հասարակության բարոյահոգեբանական առողջությանը չնպաստող տեղեկատվության տարածումը:

Պետք է նկատի ունենալ, որ ներկայիս ՀՀ ՋԼՄ տնտեսական իրավիճակը հիմնականում այնպիսին է, որ նրանք կարիք ունեն շարունակական նյութական աջակցության: Արդյունքում, մի շարք լրատվամիջոցներ «ստվերային» ճանապարհով ստանում են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և դրա դիմաց ստանձնում պարտավորություններ՝ որոշակի տեսանկյունից լուսաբանելու այս կամ այն երևույթը¹⁷³:

Խնդիրներից կարևոր է առանձնացնել նաև հայաստանյան մամուլի հիմնական զանգվածի նեղիայաստանյան ուղղվածությունը: Լրահոսի մեծ մասը ձևավորվում է

¹⁷³ Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ (http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2286, վերջին մուտքը՝ 14.04.2017թ.):

Հայաստանի ընթերցողի համար: Նույնիսկ երբ նյութերը թարգմանվում են անգլերեն կամ ռուսերեն, բովանդակային, ոճային առումով դրանք հաճախ անհասկանալի են ոչ միայն արտասահմանցիներին, այլև նույնիսկ սփյուռքահայերին¹⁷⁴:

Ժամանակակից համակարգչային ցանցերը թույլ են տալիս յուրաքանչյուր մարդու մասին հավաքել և օգտագործել ցանկացած տեղեկատվություն՝ ընդհուպ մինչև առողջական վիճակ, քաղաքական հայացքներ, հասարակական ակտիվություն, անհատական կապեր, ֆինանսական դրություն, ճանապարհորդություններ, հանդիպումներ և այլն: Նման պայմաններում տեղեկատվական ոլորտում հարաբերությունները կարգավորող իրավական, նորմատիվային հիմքերը, անհատի շահերի պաշտպանության մեխանիզմների ոչ բավարար մակարդակը կարող են դիտվել որպես ներքին սպառնալիքներ: Ուստի հստակեցման կարիք ունեն նաև ներքին տեղեկատվական դաշտում գործող իրավաբանական նորմերը, տեղեկատվական գործողությունները երբեմն ներկայացվում են որպես զուտ ժողովրդավարության եւ խոսքի ազատության իրավունքի արտահայտում: Մինչդեռ քիչ չեն դեպքերը, երբ դրանք իրենց բովանդակությամբ և ձևով կրում են մանիպուլյատիվ բնույթ և ուղղված են մեր ազգային շահերի դեմ:

Նման պայմաններում Հայաստանում հանրությունը համակարգչային տեխնիկայից, ինտերնետից օգտվելու տեսանկյունից դեռևս խիստ խոցելի վիճակում է գտնվում, ինչը բարձրացնում է ընդհանուր կիբեռանվտանգության հետ կապված խնդիրներից բխող վտանգների հնարավորությունը:

Այսպիսով, ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է մշակել մեթոդների ու միջոցների այնպիսի համախումբ, որը կօգնի դիմակայելու ներքին և արտաքին սպառնալիքներին:

Մեր կարծիքով, արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար որպես նման միջոցառումներ՝ կարող են լինել՝

- Արտաքին սպառնալիքները ենթարկել փորձագիտական վերլուծության՝ բացահայտելու դրանց կոնկրետ աղբյուրները, գնահատելու ռիսկերը և հասկանալու հակազդման մեթոդները:

¹⁷⁴ Մարտիրոսյան Ս., Տեղեկատվական հոսքերի սղությունը՝ կրիտիկական խնդիր (http://noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=15696, վերջին մուտքը՝ 14.04.2017թ.):

- տեղեկատվական անվտանգության ապահովման ժամանակ միջազգային համագործակցության ընդլայնումը,
- ոլորտի առաջատար պետությունների համապատասխան մասնագետների հետ փորձի փոխանակումը,
- թվային դիվանագիտության գործիքարանի լայնորեն կիրառումը, որը հնարավորություն կտա համաշխարհային քաղաքական թատերաբեմում ՀՀ հեղինակության բարձրացման ու պետության համար շահեկան քաղաքական իմիջի ձևավորման ու առհասարակ երկրի տեղեկատվական անվտանգության ապահովման համար,
- արտերկրում հայկական ներկայացուցչությունների ու կազմակերպությունների համար ապատեղեկատվության տարածումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
- ֆինանսական աջակցության ավելացումը տեղեկատվական անվտանգության ապահովման կոնկրետ ուղղությունների, մասնավորապես՝ թվային դիվանագիտության համար,
- հայկական քարոզչական և հակաքարոզչական կենտրոնների աշխատանքները համակարգող կառույցի ձևավորումը,

Ներքին սպառնալիքներին դիմակայելու համար՝

- տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով ՀՀ պետական իշխանության մարմինների գործողությունների համակարգում և կանոնակարգում,
- ՀՀ տեղեկատվական կառույցների կատարելագործում, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների զարգացում և դրանց՝ ժամանակակից գլոբալ տեղեկատվական կառույցների պահանջներին համապատասխան լայն տարածումը,
- ՀՀ-ում տեղական հեռահաղորդակցության և տեղեկատվական միջոցների զարգացում և ներքին շուկայում արտասահմանյան արտադրանքի նկատմամբ դրանց առաջնայնության հաստատումը,

- տարաբնույթ ապակառուցողական օտարերկրյա տեղեկատվական հոսքերից ՀՀ տեղեկատվական ներքին ռեսուրսների անվտանգության ապահովումը սեփական արտադրանքի որակի բարձրացմամբ, թվային դիվանագիտության ծրագրերի կատարելագործմամբ,
- ՀՀ պետական լեզվի դերի բարձրացումը:

3.2. ՀՀ պետական տեղեկատվական քաղաքականության հիմնական ուղղությունները և կատարելագործման հեռանկարները

21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, դրանց տարածումը հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտներում և որպես հետևանք՝ տեղեկատվական հասարակության կայացումը ծնում են նոր մարտահրավերներ: Ժամանակակից աշխարհում սակավ նյութական հնարավորություններ ունեցող սուբյեկտները, ձեռք բերելով անհրաժեշտ ինտելեկտուալ ռեսուրսներ, կարող են հասնել զգալի արդյունքների: Ընդ որում, հաճախ այդ սուբյեկտները կարող են և չլինել պետություններ կամ նվազագույնը ուղղակիորեն չենթարկվել պետությանը: Վերոհիշյալ իրավիճակը լավագույնս արտացոլում են հետևյալ հայեցակարգային հասկացությունները¹⁷⁵.

Կիրեռքաղաքականություն-երբ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է նրան, որ քաղաքականության ավանդական սուբյեկտները՝ պետությունները, արդեն կորցրել են գիտելիքներին (տեղեկատվությանը) տիրապետելու իրենց մենատիրությունը: Այսօր արդեն ԶԼՄ-ից և համացանցից օգտվողներից յուրաքանչյուրը կարող է իրազեկ լինել աշխարհում կատարվող իրադարձություններին:

Նեոքաղաքականություն կամ գիտելիքների քաղաքականություն-երբ քաղաքականության նոր սուբյեկտները՝ միջազգային կազմակերպությունները, ԶԼՄ-ն, անդրազգային տնտեսական ընկերությունները, ահաբեկչական և հանցավոր կառույցները, ձեռք են բերել գիտելիքային/տեղեկատվական ռեսուրսներ, ինչը թույլ է տալիս նրանց վարել ինքնուրույն քաղաքականություն գլոբալ տեղեկատվական դաշտում:

Մեդիաքաղաքականություն-որը վկայում է, որ համացանցը և հեռուստատեսությունը վերածվել են քաղաքականության կարևորագույն գործոնի: Դրանք են, որ էական դեր

¹⁷⁵ Տե՛ս, Հարությունյան Գ., Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ, (http://www.noravank.am/upload/pdf/71_am.pdf, վերջին մուտքը՝ 11.07.2017թ.) :

են կատարում արտաքին և ներքին քաղաքականության ձևավորման գործում, այս կամ այն հիմնախնդրի վրա են հրավիրում հանրության և իշխանության ուշադրությունը:

Այս համատեքստում պետությունների համար հրամայական են դառնում պետական կառավարման նոր մեթոդների, հնարավորությունների ու տեխնոլոգիաների փնտրումը, ինչպես նաև արդյունավետ պետական տեղեկատվական քաղաքականության մշակումը:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են պետական և ոչ պետական տեղեկատվական քաղաքականություն հասկացությունները: Ռուս գիտնական Վ. Դ. Պոպովը պետական տեղեկատվական քաղաքականությունը սահմանում է որպես տեղեկատվության ձեռքբերման ու տարածման հետ կապված մարդկային գործունեության հատուկ բնագավառ, որը բավարարում է պետության ու քաղաքացիական հասարակության շահերը և միտված է այդ երկուսի ներկայացուցիչների միջև կառուցողական երկխոսությանը¹⁷⁶: Այս շրջանակում պետական տեղեկատվական քաղաքականության իրականացման հիմնական խնդիրն այն է, որ պաշտպանի պետության ու իշխանության շահերը, ներկայացնի, թե ինչպես է պետությունը տեր կանգնում քաղաքացիական հասարակության, առանձին անհատների խնդիրներին:

Վ. Դ. Պոպովը տեղեկատվական քաղաքականության էությունը «տեղեկատվական իշխանություն» կատեգորիայի միջոցով արտահայտելով՝ սահմանում է. «Տեղեկատվական քաղաքականությունը քաղաքականության սուբյեկտների հնարավորությունն ու կարողությունն է տեղեկատվության միջոցով մարդկանց գիտակցության, հոգեբանության, վարքի ու գործունեության վրա ազդելու՝ ելնելով պետության ու քաղաքացիական հասարակության շահերից¹⁷⁷:

Այնինչ ոչ պետական տեղեկատվական քաղաքականությունը կարող է չծառայել պետությանը և չարտահայտել քաղաքացիական հասարակության շահերը, երկխոսության մեջ մտնել պետության հետ կամ դեմ դուրս գալ դրան կամ էլ ծառայել

¹⁷⁶ Տե՛ս «Социальная информатиология» / Под общ. ред. В.Д. Попова. – М.: Изд-во РАГС, 2007, էջ 290:

¹⁷⁷ Տե՛ս Попов В.Д. Государственная информационная политика: состояние и проблемы формирования. Массовые информационные процессы в современной России: Очерки / Отв. ред. А.В. Шевченко. М.: Изд-во РАГС, 2002, էջ 20:

միայն առանձին խմբավորումների, կուսակցությունների, նույնիսկ առանձին անհատների շահերին¹⁷⁸:

«Տեղեկատվական քաղաքականություն» հասկացությունն այլ կերպ է սահմանում Յու. Ա. Նիսնևիչը: Ըստ հեղինակի՝ տեղեկատվական քաղաքականությունը տեղեկատվության բնագավառում ազգային շահերն արտահայտող նպատակների, պետական կառավարման խնդիրների, ռազմավարության, մարտավարության, կառավարական որոշումների և դրանց իրականացման մեթոդների ամբողջությունն է, որը մշակվում և իրականացվում է պետական իշխանության կողմից և ուղղված է ինչպես պետության ու հասարակության հասարակական-քաղաքական կյանքում ու սոցիալ-տնտեսական կենսագործունեության բնագավառում տեղեկատվական փոխազդեցության գործընթացների կարգավորմանն ու կատարելագործմանը, այնպես էլ նման փոխազդեցության գործընթացների ապահովմանը¹⁷⁹:

Ա. Վ. Շևչենկոն տեղեկատվական քաղաքականությունը սահմանում է որպես գաղափարիների, դրույթների, նպատակների, մեթոդների, միջոցների կազմակերպված ամբողջություն, որոնց միջոցով պետությունը քաղաքական համակարգում կարգավորում է տեղեկատվական հարաբերությունները՝ նպատակ ունենալով ապահովել անհատի, հասարակության ու պետության շահերի հավասարակշռությունը¹⁸⁰:

Նշենք, որ տեղեկատվական քաղաքականության իրականացման մեջ մեծ դեր ունեն գանգվածային լրատվամիջոցները: Ընդ որում, Վ. Պ. Պուգաչովը ՋԼՄ-ները դիտում է բացառապես որպես հասարակական գիտակցության մանիպուլյացիայի գործիք, որոնք կարգավորվում են պետության կողմից¹⁸¹:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տեղեկատվական քաղաքականությունը նախևառաջ կարգավորում է հասարակության տեղեկատվական դաշտը և պետական-հասարակական կյանքում ծավալում հաղորդակցային գործունեություն:

¹⁷⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 21:

¹⁷⁹ Տե՛ս Нисневич Ю.А. О необходимости государственной информационной политики // Межотраслевая информационная служба. – 1997. – № 1-2, էջ 7-10:

¹⁸⁰ Տե՛ս Шевченко А.В. Информационная устойчивость политической системы постиндустриального общества: Автореф. дисс. ... д.полит.н. – М., 2006, էջ 55:

¹⁸¹ Տե՛ս Пугачев В. П. Демократизация: общие условия и российская специфика // Вестник Московского университета. Сер.12. Социально-политические исследования. – 1994. – № 5, էջ 43- 51:

Արդյունավետ պետական տեղեկատվական քաղաքականության իրականացումը հատկապես արդիական է Հայաստանի Հանրապետության համար. մեր երկիրը ներգրավված է տարածաշրջանային և համաշխարհային համագործակցային-հակամարտային բազմաշերտ գործընթացներում:

ՀՀ-ում տեղեկատվական հասարակության կայացումն ու զարգացումը տեղի են ունենում տարածաշրջանային բարդ իրադրության պայմաններում: Երկար տարիներ շարունակվում է տեղեկատվական հակամարտությունը հարևան Ադրբեջանի հետ: 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ Հայաստանը պարբերաբար ենթարկվում է տեղեկատվական ագրեսիայի: Ավելին, ինչպես նկատում է տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը, եթե նախկինում ադրբեջանցի հաքերները հարձակում էին գործում պետական կառույցների կայքերի վրա, ապա այսօր նրանց հետաքրքրում են նաև սոցցանցերից օգտվողների էջերը: Այսինքն՝ ազգությամբ հայ ու հայաստանցի օգտատերերը թիրախ են դարձել սոցցանցերում¹⁸²:

Ավելին, մեր երկիրը բավականին խոցելի է կիրբեռսպառնալիքների նկատմամբ, քանի որ չունի կիրբեռանվտանգության հստակորեն ձևակերպված ռազմավարություն, նման սպառնալիքներին հակազդեցության համապատասխան տեղեկատվական ենթակառուցվածք, ինչպես նաև Համակարգչային պատահարներին արձագանքման թիմեր (CERT): Ուստի Կիրբեռանվտանգությունը պետք է ճանաչվի ազգային անվտանգության առաջնահերթություններից մեկը: Ի դեպ, այս ուղղությամբ արդեն արվել են աշխատանքներ, մշակվել և միջազգային փորձաքննության է ենթարկվել ՀՀ կիրբեռանվտանգության ազգային հայեցակարգի նախագիծը, որի հիման վրա մոտ ապագայում կարելի է մշակել կիրբեռանվտանգության հայեցակարգը:

Նման պայմաններում Հայաստանի Հանրապետությունը խնդիր ունի ոչ միայն նվազագույնի հասցնելու տեղեկատվական ոլորտին սպառնացող վտանգների ազդեցությունը, այլև ապահովելու ՀՀ տեղեկատվական անվտանգությունը ներքին ու միջազգային տեղեկատվական դաշտերում:

¹⁸² Տե՛ս «Անեծք, թե՛ անզգուշություն. Ինչու՞ են կոտրում սոցցանցերի էջերը» (<https://armeniasputnik.am/society/20170130/6233468/armenia-hamakargish-samvel-martirosyan.html> (վերջին մուտքը՝ 02.03.2017թ.)):

Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության խնդիրները կարելի է բաժանել երկու մասի՝ տեխնիկական կամ ինչպես ընդունված է անվանել աշխարհի շատ երկրներում՝ կիբեռանվտանգություն, և բովանդակային: Վերջինս առնչվում է քարոզչական, հակաքարոզչական, տեղեկատվական հոսքերի հետ կապված խնդիրներին: Տեղեկատվական անվտանգության տեխնիկական բաղադրիչի համակարգողը Ազգային անվտանգության ծառայությունն է¹⁸³, ընդ որում՝ ԱԱԾ-ի կողմից վերահսկվում է միայն պետական ցանցը, այն էլ՝ ոչ ամբողջությամբ, իսկ բովանդակային մասով տեղեկատվական անվտանգության գործառույթները մի շարք կառույցների միջև են բաշխված և կարգավորվում են ՀՀ Նախագահի աշխատակազմի հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի կողմից:

Նշենք, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում տեղեկատվական անվտանգության ապահովման քաղաքականության մասին չի հիշատակվում, սակայն դրա առանձին դրույթներն ամրագրված են ՀՀ նախագահի կողմից 2009 թ. հաստատված Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում:

Վերոհիշյալ հայեցակարգը ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակների, խնդիրների, սկզբունքների և հիմնական ուղղությունների մասին պաշտոնական մոտեցումների համակարգ է և հիմք է այդ բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակման ու իրագործման համար, բխում է երկրի ազգային անվտանգության ռազմավարությունից, զարգացնում է նրա սկզբունքները տեղեկատվական ոլորտում և կարող է ենթարկվել ճշգրտումների՝ պայմանավորված ներպետական և միջազգային իրադրությամբ, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխմամբ, ինչպես նաև փաստաթղթում նշված նպատակների իրականացմամբ¹⁸⁴:

Հայեցակարգում սահմանվում են տեղեկատվության բնագավառում պետության անվտանգության ապահովմանն ուղղված պետական իշխանության մարմինների գործունեության հիմնական ուղղությունները, ինչպես նաև անհատի, հասարակության

¹⁸³ Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում լիազոր և ազգային համակարգող մարմին նշանակելու մասին, 2011թ. մարտի 9, (<http://www.arlis.am>, (վերջին մուտքը՝ 20.02.2017թ.)):

¹⁸⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=52559> (վերջին մուտքը՝ 20.02.2017թ.)):

ու պետության կենսագործունեության տարբեր բնագավառներում տեղեկատվական անվտանգության սպառնալիքների հակազդեցությանն ուղղված միջոցառումները:

Ըստ հայեցակարգի՝ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրությամբ¹⁸⁵:

Պետության շահերը տեղեկատվական ոլորտում ներառում են համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորման, նրա ենթակառուցվածքների ներդաշնակ գործառման և զարգացման, սահմանադրական կարգի, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անխախտելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության, օրինականության և իրավակարգի ապահովման նպատակով անձի և քաղաքացու՝ տեղեկատվություն ստանալու և օգտագործելու նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, ինչպես նաև հավասարազոր և փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը¹⁸⁶:

«Տեղեկատվական անվտանգության հայեցակարգում ամրագրված են ազգային շահերի հինգ հիմնական բաղադրիչները.

Առաջին բաղադրիչը ներառում է տեղեկատվության ստացման և օգտագործման ոլորտում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, երկրի հոգևոր զարգացման ապահովումը, հասարակության բարոյական արժեքների, հայրենասիրական և մարդասիրական ավանդույթների, մշակութային և գիտական ներուժի պահպանումն ու ամրապնդումը: Այս առումով ներկայումս Հայաստանի խնդիրը, մեր կարծիքով, քաղաքացիների համար տեղեկատվության ստացման և օգտագործման ազատության ապահովումն է, ժողովրդավարական իրավական պետության ստեղծումը և կրթության ու մշակույթի զարգացումը:

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁸⁶ Տե՛ս նույն տեղը:

Երկրորդ բաղադրիչը վերաբերում է հայկական և միջազգային հանրությանը Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության վերաբերյալ հավաստի տեղեկատվության մատուցմանը, հանրապետության և միջազգային կյանքում տեղի ունեցող քաղաքական և սոցիալական կարևորագույն իրադարձությունների նկատմամբ պետության պաշտոնական դիրքորոշման իրազեկմանը՝ միաժամանակ ապահովելով քաղաքացիների հասանելիությունը պետական բաց տեղեկատվական միջոցներին: Այս առումով, կարծում ենք նպատակահար է արտերկրում հեռարձակվող հայկական հեռուստաալիքների օտարալեզու հեռարձակման ապահովումը, ինչը հնարավորություն կտա «առաջին ձեռքից» ստանալու պաշտոնական տեղեկատվություն:

Երրորդ բաղադրիչը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն է՝ արտադրանքի ներքին շուկայի պահանջարկի բավարարման և համաշխարհային շուկա արտահանման համատեքստում, հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովումը: Կարծում ենք, այստեղ Հայաստանը կարող է համագործակցել կոմերցիոն ոլորտի կազմակերպությունների հետ՝ սեփական տեղեկատվական համակարգերի ստեղծման ուղղությամբ, ինչը հետագայում կնվազեցնի արտասահմանյան տեխնոլոգիաներից կախումը:

Ազգային շահերի չորրորդ բաղադրիչի շարքին են դասվում երկրի տեղեկատվական ոլորտի ներգրավումը միջազգային տեղեկատվական դաշտին, Հայաստանի և հայության մասին ճշմարիտ տեղեկատվության անկողմնակալ և արհեստավարժ ներկայացումը միջազգային հանրությանը, հակազդումը ապատեղեկատվությանն ու ստահոգ քարոզչությանը, համացանցում հայալեզու և Հայաստանին, հայագիտության բոլոր ճյուղերին ու հայությանն առնչվող տեղեկատվության անհրաժեշտ ծավալի և որակի, ինչպես նաև դրանց համաչափության ապահովումը: Այս միջոցառումներին կարող են նպաստել թվային դիվանագիտության մեթոդների կիրառումը, համացանցի օգտագործումը, որը բավականին էժան ռեսուրս է համաշխարհային հասարակությանը Հայաստանի մասին

ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու, երկրի համար դրական կերպար ստեղծելու ուղղությամբ:

Եվ վերջապես՝ տեղեկատվության բնագավառում ՀՀ ազգային շահերի հինգերորդ բաղադրիչը տեղեկատվական ռեսուրսների պաշտպանվածությունն է չթույլատրված հասանելիությունից, տեղեկատվության, կապի և հեռահաղորդակցության համակարգերի անվտանգության ապահովումը: Սա կարող է ապահովվել պետական ու ոչ պետական մարմինների սերտ համագործակցությամբ՝ արդյունավետ կիրառելու երկրի տեղեկատվական ռեսուրսները: Արդյունավետ կարող է լինել նաև ՀԱՊԿ-ի շրջանակում համագործակցությունը՝ համատեղ ուժերով հակազդելու տեղեկատվական սպառնալիքներին:

Ըստ էության, Հայեցակարգում ամրագրված ազգային շահերի բաղկացուցիչները գրեթե նույնությամբ կրկնում են 2000թ-ի ՌԴ նախագահի կողմից հաստատված «Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում» ամրագրված Ռուսաստանի ազգային շահերը դրույթները՝ միայն ավելանում է հինգերորդ բաղադրիչը:

Հայեցակարգում տեղեկատվական անվտանգության սպառնալիքները բաժանվում են հետևյալ խմբերի՝

- Սպառնալիքներ՝ ուղղված մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին հոգևոր կյանքի և տեղեկատվական գործունեության բնագավառում, նրանց անհատական, խմբային և հասարակական գիտակցության ձևավորմանը.
- Սպառնալիքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության տեղեկատվական ապահովմանը.
- Սպառնալիքներ՝ ուղղված հայրենական տեղեկատվական ռեսուրսների զարգացմանը, դրանց արտադրանքի ներքին շուկայի պահանջմունքների բավարարմանը և համաշխարհային շուկա արտահանմանը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական միջոցների կուտակման, պահպանման և արդյունավետ օգտագործման ապահովմանը.

- Սպառնալիքներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տեղեկատվական և հեռահաղորդակցային միջոցների և համակարգերի անվտանգությանը¹⁸⁷:

Այսպիսով, սպառնալիքների միայն չորրորդ խմբում է խոսք գնում կիրթնուսպառնալիքների մասին, ինչպիսիք են, օրինակ, այնպիսի ծրագրերի մշակումն ու տարածումը, որոնք խախտում են տեղեկատվական և հաղորդակցային համակարգերի բնականոն գործառնությունը:

Հայեցակարգում ՀՀ տեղեկատվական անվտանգության առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա մակարդակը չի համապատասխանում պետության ու հասարակության պահանջներին՝ չնայած ՀՀ-ում վերջին տարիներին սկսվել է տեղեկատվական անվտանգության իրավական-նորմատիվային դաշտի ձևավորումը, ընդունվել են տեղեկատվական անվտանգության ոլորտին առնչվող իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին»¹⁸⁸, «Տեղեկատվության ազատության մասին»¹⁸⁹, «Արխիվային գործի մասին»¹⁹⁰, «Անձնական տվյալների պաշտպանության մասին»¹⁹¹, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին»¹⁹², «Էլեկտրոնային հաղորդակցության մասին»¹⁹³, «Զանգվածային լրատվության մասին»¹⁹⁴, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»¹⁹⁵ Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ

¹⁸⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸⁸ Տե՛ս «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-94 օրենքը (<http://www.arlis.am/documentview.aspx?docID=26193>):

¹⁸⁹ Տե՛ս, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ 2003 թ. սեպտեմբերի 23-ի հմ. ՀՕ-11-Ն օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1372>):

¹⁹⁰ Տե՛ս, «Արխիվային գործի մասին» ՀՀ 2004 թ. հունիսի 8-ի հմ. ՀՕ-88-Ն օրենքը (<http://www.arlis.am/documentview.aspx?docID=1644>):

¹⁹¹ Տե՛ս, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ 2015 թ. մայիսի 18-ի հմ. ՀՕ-49-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 35 (1124)):

¹⁹² Տե՛ս, «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ 2004թ. դեկտեմբերի 14-ի հմ. ՀՕ-40-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ.7 (379)):

¹⁹³ Տե՛ս, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ 2005թ. հուլիսի 8-ի հմ. ՀՕ-176-Ն օրենքը (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=1869>):

¹⁹⁴ Տե՛ս, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ 2003թ. դեկտեմբերի 13-ի հմ. ՀՕ-14 օրենքը (<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1890>):

¹⁹⁵ Տե՛ս, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ 2006թ. հունիսի 15-ի հմ. ՀՕ-142-Ն օրենքը (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=25161>):

Ազգային ժողովի կողմից վավերացված «Կիբեռհանցագործությունների մասին» Եվրախորհրդի կոնվենցիան¹⁹⁶:

Հատկանշական է նաև 2010 թ. ՀՀ Կառավարության հաստատած «ՀՀ Էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը»¹⁹⁷, որի նպատակն է աշխարհի զարգացած և զարգացող երկրների լավագույն փորձի վերլուծության հիման վրա 21-րդ դարում տեղի ունեցող առավել կարևոր զարգացումների հաշվառմամբ ՀՀ-ում ձևավորել էլեկտրոնային կառավարման տեղեկատվական ենթակառուցվածք:

Այս համատեքստում ակտուալ է տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտների կարգավորմանն ուղղված միասնական իրավական դաշտի ստեղծումը և համընդգրկուն քաղաքականության մշակումը:

Բացի այդ, թույլ է տեղեկատվության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը: Անհրաժեշտ իրավական, կազմակերպական ու տեխնիկական ապահովվածություն չունեն նաև քաղաքացիների մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան գաղտնիքի, նամակագրության գաղտնիության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները, որակյալ մասնագետների զանգվածային արտահոսքի հետևանքով նվազել է տեղեկատվական, հեռահաղորդակցության և կապի բնագավառի կադրային ներուժը: Վերոհիշյալին գումարվում է նաև հայրենական տեղեկատվական տեխնոլոգիաների հետ մնալը համաշխարհային չափանիշներից, ինչի հետևանքով աճում է Հայաստանի Հանրապետության կախվածությունը տեխնոլոգիական համակարգերի արտասահմանյան արտադրողներից:

Ավելին, լիարժեք ապահովված չէ քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը, հաճախ միտումնավոր խեղաթյուրվում է նրանց մատուցվող տեղեկատվությունը, ինչը առաջացնում է բնակչության դժգոհությունը:

¹⁹⁶ Տե՛ս, «Convention on Cybercrime». Budapest, 23.11.2001 (<http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/185>):

¹⁹⁷ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետությունում Էլեկտրոնային հասարակության ձևավորման (2010–2012 թթ.) հայեցակարգ» (www.mineconomy.am/up/files/el_hasarakutyun_hayecakarg-80.doc, վերջին մուտքը՝ 13.06.2017թ.):

Նման պայմաններում ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետք է լուծվեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

- Պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և իրագործման մեխանիզմների մշակումը,
- Նպատակային պետական ծրագրերի մշակումը,
- Իրավական նորմատիվային բազայի բարելավումը,
- Տեղեկատվական պաշտպանության և պետական գաղտնիքի պաշտպանության պետական համակարգերի զարգացումը և կատարելագործումը,
- Տեղեկատվական անվտանգության և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կադրերի պատրաստման միասնական համակարգի ստեղծում և այլն:

Հայեցակարգի առանձին բաժիններից մեկը վերաբերում է երկրի պետական քաղաքականությանը տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում: Այն ենթադրում է ՀՀ Սահմանադրության և օրենսդրության, միջազգային իրավունքի և նորմերի ապահովումը, հասարակության իրազեկման գործում բացախսության և թափանցիկության ապահովումը, պետական զանգվածային լրատվամիջոցների գործունեության պետական կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմների մշակումը և ներդրումը, կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը և զարգացումը:

Տեղեկատվական անվտանգության ոլորտը կարգավորող իրավական կարևոր փաստաթղթերից է 2010թ.-ին ՀՀ Կառավարության հաստատած «ՀՀ էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը»¹⁹⁸, որի նպատակն է աշխարհի զարգացած և զարգացող երկրների լավագույն փորձի վերլուծության հիման վրա քսանմեկերորդ դարում տեղի ունեցող առավել կարևոր զարգացումների հաշվառմամբ ՀՀ-ում ձևավորել էլեկտրոնային կառավարման տեղեկատվական ենթակառուցվածք: Միջազգային իրավական ակտերից առանձնակի կարևոր է Ազգային ժողովի կողմից

¹⁹⁸ Տե՛ս, «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման (2010–2012 թթ.) հայեցակարգ» (www.mineconomy.am/up/files/el_hasarakutyun_hayecakarg-80.doc):

վավերացված «Կիբեռահանցագործությունների մասին» Եվրախորհրդի կոնվենցիան¹⁹⁹, որը միջպետական առաջին պայմանագիրն է՝ նպատակաուղղված կիբեռահանցագործությունների դեմ պայքարի միասնականացման համընդհանուր քաղաքականության և օրենսդրական կարգավորումների ստեղծմանը:

Այդուհանդերձ, հարկ է նաև նշել, որ ՀՀ-ում տեղեկատվական անվտանգության ապահովման համար չկան հատուկ կառույցներ, որոնք հստակ նախատեսված են հակազդելու տեղեկատվական պատերազմներին կամ տեղեկատվական ագրեսիայի փորձերին:

Այսպիսով, ժամանակակից տեղեկատվական հասարակությունում սոցիալական ու քաղաքական հարաբերությունների կարգավորման համատեքստում պետական տեղեկատվական քաղաքականությունը կարևոր տեղ է զբաղեցնում: Դրա արդյունավետ իրականացումը հատկապես արդիական է Հայաստանի Հանրապետության համար, որտեղ տեղեկատվական հասարակության կայացումը տեղի է ունենում տարածաշրջանային բարդ իրադրության պայմաններում:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում տեղեկատվության բնագավառում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը բավականաչափ զարգացված չէ, նույնիսկ հաճախ տարբեր իրավական փաստաթղթեր հակասում են միմյանց: 2014 թ. նոյեմբերին ՀՀ Ազգային ժողովում կայացած «Կիբեռանվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում. սպառնալիքներ և մարտահրավերներ, արձագանքման և հակազդման մեխանիզմներ» թեմայով խորհրդարանական լուսնները ևս մեկ անգամ վկայեցին, որ անհրաժեշտ է ստեղծել Կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող համապետական օրենսդրական և քաղաքական-նազնավարական փաստաթղթերի մշակման և ոլորտը կառավարող կենտրոնական մարմին²⁰⁰:

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ապահովման ոլորտում առկա միջազգային լավագույն փորձը վկայում է, որ վերը նշված խնդիրների

¹⁹⁹ Տե՛ս, «Convention on Cybercrime». Budapest, 23.11.2001 (<http://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/185>):

²⁰⁰ Տե՛ս, ««Կիբեռանվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում. սպառնալիքներ և մարտահրավերներ, արձագանքման և հակազդման մեխանիզմներ» թեմայով խորհրդարանական լուսններ ՀՀ Ազգային ժողովում», 14.11.2014 (http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=7027&year=2014&month=11&day14):

համապարփակ և արդյունավետ լուծման համար կարևոր է միջգերատեսչական համագործակցությամբ մշակված կիբեռանվտանգության համապետական ռազմավարության և համապատասխան քաղաքականության իրականացումը²⁰¹:

Տեղեկատվության բնագավառում հավասարաչափ չէ աջակցությունը անհատին, պետությանն ու հասարակությանը: Այս առումով կարծում ենք օգտակար կլինի հատուկ հանրամատչելի միջոցառումների կազմակերպումը՝ տեղեկատվական անվտանգության, սպառնալիքների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը մեծացնելու համար: Օրինակ, կարելի է հատուկ հաղորդաշար պատրաստել հեռուստատեսությամբ և դրա օգնությամբ փորձել հասարակության խոցելիությունը նվազեցնել: Ավելին, օրենսդրորեն կարգավորված չեն «անձնական տվյալների» կամ այլ համակարգչային արձանագրությունների պահպանման ժամկետները, օգտագործման դեպքերը և կարգը, «անձնական տվյալների» կամ համակարգչային արձանագրությունների այն տեսակները, որոնք պարտադիր կերպով պետք է պահպանեն ինտերնետային պրովայդերի ծառայություններ մատուցող կազմակերպությունները, հայկական տեղեկատվական կազմակերպություններն ու զանգվածային լրատվամիջոցները բավարար մրցունակ չեն:

Բացի այդ, ընդհանուր հայության տեղեկատվական ապահովության խնդիրն ավելի մեծաձավալ խնդիր է, քան Հայաստանինը, քանզի հայությունը սփռված է աշխարհաքաղաքական և քաղաքակրթական տարբեր գոտիներում գտնվող աշխարհի մոտ հարյուր երկրներում և թվաքանակով շուրջ երկու անգամ գերազանցում է Հայաստանում բնակվող հայերի թվին: Իսկ աշխարհասփյուռ հայության տարբեր աշխարհընկալումները, հոգեկերտվածքը, մշակութային արժեքները և այլն, իհարկե, հանգեցնում են հաղորդակցական բնույթի խնդիրների հայության տարբեր հատվածների միջև: Վերոհիշյալին գումարվում է նաև լեզվակրոնական հատկանիշներով հայերի բաժանվածությունը:

